

ԱՒԵՑԻՔ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԿԱՅԷՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ

ԴՐԱՄԱ ՀԻՆԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Ժամանակակից դէպք

ԱՆՑԲԸ ՊԱՏԱՀՈՒՄ Է N ՔԱՂԱՔՈՒՄ



Նոր-Նախիջևան
Տպար. Ա. Յ. Աւագիանի



Нахичеванъ на Дону
Пар. тип. С. Я. Авакова

1912

891.99

Կ-70

01 JAN 2009

19 NOV 2010

891.99

6-70

uz

ԱՌԵՏԻՔ ՍՈՍԹԵԼԵԱՆ

ԿԱՅԷՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ

ԴՐԱՄԱ ՀԻՆԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Ժամանակակից դէպք

ԱՆՑԲԸ ՊԱՏԱՀՈՒՄ Է N ՔԱՂԱԲՈՒՄ



Նոր-Նախիջևան
Տպար. Ս. Յ. Ասադյանի

Нахичевань на Дону
Пар. тип. С. Я. Авакова

1912

RUCS HAL 1 0

RUCS VON 0 1

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. Սարգիս (Սերգէյ) Լազրեիչ Գասպարեան—Վաճառական. յիսունից-յիսունեկինգ տարեկան. միջին հասակով, երեսը թրաշած, բեխերը և մազերը ճերմակախառն:
2. Մարիամ—Սրա կինը. ցածր հասակով, լիբը կին:
3. Սիմա (Սիմէօն)—Նրանց որդին, քսան երեք տարեկան, լաւ հագնուած երիտասարդ:
4. Շուրա—Աղջիկը. տասնութից քսան տարեկան, ճոխ հագնուած:
5. Յարութիւն—Սարգսի փոքր եղբայրը. բարձր հասակով, ճերմակ միընթացով և մազերով:
6. Դարիս—Սրա կինը, նիհար և հիւանդոտ:
7. Պալուշա (Պողոս)—Նրանց որդին. գիմնադիւանարտ:
8. Նինա—Նրանց աղջիկը. գիմնադիւանարտի եւ թերթի դասարանի աշակերտուհի:
9. Անտօն—Վաճառական. երեսունից-երեսնուեկինգ տարեկան:
10. Սմբատ—Գործակատար. քսան և հինգ տարեկան:
11. Աւագ—Մարիամի եղբայրը. զիւղացի. յիսուն տարեկան:
12. Մաշօ—աղախին Սարգսի տանը:
13. Արշակ—Հիւրանոցի ծառայ:
14. Սուղեքնի արիստաւ:

Հիւրեր, ծառաներ, երաժիշտներ:



6131

97

ԿԱՅԵՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է հարուստ, բայց անճաշակ կահաւորուած դահլիճ, ելեքտրական լուսաւորութիւն. պատերից կախուած են պատկերներ. դահլիճի միջին դուռը տանում է հսկայանոց. երկու միւս դռները բացւում են դէպի աջ և ձախ:

ՏԵՍԻՆ 1.

Մաշօ, յետոյ Սարգիս

ՄԱՇՕ.— (Աղախինի հագուստ, ճերմակ գոգնոցով. աւելում է դահլիճը եւ խօսում). Աստուած հեռու պահէ այս կէս քաղաքացի կէս գիւղացիների տանը աղախին լինելուց: Կարծում են, որ աղախին ունին պէտք է սենեակները շարունակ կեղտոտել: Որտեղ նայում ես թղթի կտորներ են թափուած. որտեղ ծխում են այնտեղ էլ թափում են լուցկին, սիգարի ծայրը: Ամեն օր դահլիճը մաքրելի ուրտեղ է տեսնուած. դահլիճս գնաց էլի:
(Նախասենեակում վերարկուն հանելուց յետոյ մտնում է Սարգիսը):

ՍԱՐԳԻՍ.—Ա՛. Մաշօ. տիկինը ուրտեղ է:

ՄԱՇՕ.— Տանը չէ:

ՍԱՐԳԻՍ.—Այ լաւ ժամանակ եկայ հա՛. (ուզում է Մաշօին զրկել եւ համբուրել):

Հայ աչքդ սիրեմ Մաշօ, իմ սիրելի Մաշօ:

ՄԱՇՕ.— (Յոյց տալով ձախ կողմի դուռը). Սուս... այնտեղ մարդ կայ:

ՍԱՐԳԻՍ.—(Նստ քաշուելով). Ո՞վ կայ:

ՄԱՇՕ.— Ձեր եղբօր կինը:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչ է անում այնտեղ:

ՄԱՇՕ.— Նրանք իրենց ննջարանը փոխեցին այդ սենեակը:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչպէ՛ս. չէ՞ որ այդ իմ առանձնասենեակն է:

ՄԱՇՕ.— Նրանց ննջարանը խոնաւ է բժիշկը հրամայել է չոր սենեակում կենալ, նրանք էլ տեղափոխուեցին այդ սենեակը:

ՍԱՐԳԻՍ.—(Հայրացած): Աստուած իմ, Աստուած իմ: Ե՞րբ սրանց այս տանից ուղի կանհամ: Այնպէս են վարւում, կարծես այս տունը տէր չունի. որտեղ ուզում են՝ տեղափոխւում են, ինչ ուզում են՝ առնում են: (Մաշօին) տիկինդ ի՞նչ ասաց:

ՄԱՇՕ.— Ո՞ր տիկինը:

ՍԱՐԳԻՍ.— Յիմանա՞ւ. այստեղ մի տիկին կայ. իմ տիկինը, էլ ճիշդ:

ՄԱՇՕ.— (Մի կողմ): Գուցէ շատ բան կասէր, եթէ տանը լինէր:
(Սարգսին): Նա տանը չէր տեղափոխուելիս:

ՏԵՍԻՒ 2.

Սարգիս, Մարիամ եւ Մաշօ:

ՄԱՐԻԱՄ.—(Շնչասպառ մտնում է նախասենեակը, մի քանի կապոց ձեռքին): Մաշօ, Մաշօ, ճորտեղ հա:

ՄԱՇՕ.— (Դուրս վազելով): Այստեղ եմ, Մարիա Պետրոսին:

ՄԱՐԻԱՄ.— Վերարկուս հանիր, գլխարկս առ, տես, չջարգես, զգոյշ:

ՄԱՇՕ.— Անհող կղէք, չեմ ջարդի:

ՄԱՐԻԱՄ.—(Կապոցները ձեռքին մտնում է դահլիճ): Բա՛, Սէրգէյ ջան, արդէն եկել ես հա: Շտապեցի տուն գամ. գիտէի, որ եկած կլինես ճաշելու, շատ բան ունէի առնելու, շտապեցի չկարողացայ առնել:

ՍԱՐԳԻՍ.— Ո՞ւրես գնացել առաւօտեանից, տունը անտէր թողել. այդ ի՞նչ ես առել:

ՄԱՐԻԱՄ.— Ինչ ուզում ես առել իմ: Երկու զգեստացու Շուրայի համար եմ գնել, մէկն էլ ինձ համար, քեզ համար էլ օսլայած շապիկներ եմ բերել, մի քանի գիւծին թաշկինակ, մի քիչ էլ մանր մուշր բաներ:

ՍԱՐԳԻՍ.— Մի երկու կտոր բան էլ պէտք է Յարութիւնի որդոց համար առնէիր:

ՄԱՐԻԱՄ.— Հօրս ցաւը կառնեմ նրանց համար: Նրանք բոլորն էլ կարգին հագնուած են:

ՍԱՐԳԻՍ.— Մեզ համար հագուստ առնելիս մի քանի կտոր էլ նրանց համար պէտք է առնես՝ աչքները փակելու համար: Զառնելդ աւելի վատ է, այն ժամանակ նրանք իրենք են կասսայից փող վերցնում եւ աւելի շատ են ծախսում:

ՄԱՐԻԱՄ.— Հաղար անգամ ասել եմ թոյլ մի տուր կասսայից փող վերցնել: Նա ի՞նչ իրաւունք ունի:

ՍԱՐԳԻՍ.— Զի կարելի, քանի որ նա գործի մէջ է:

ՄԱՐԻԱՄ.— Հեռացրա՞ւ գործից, այսուհետեւ էլ ինչի՞ է հարկաւոր: Փառք Աստուծոյ, այժմ Սիմաս հասած տղամարդ է:

ՍԱՐԳԻՍ.— Է՛հ, դու էլ: Եթէ Սիման գործի նայող լինէր ես վաղճւց էի նրան գործից հեռացրել: Բայց խնդիրն էլ հէնց այն է, որ Սի-

ման գործին չի նայում: Գիշերները ուշ է տուն գալի, առաւօտներն էլ ուշ է խանութ գնում: Կասսայի մօտ նստելու դէպքում էլ տեսնում ես խկոյն մի յիսուն ուրիշ մարկոս արեց, նստեց կառք ու հայգա՛, ակմբանոց կամ սրճարան:

ՄԱՐԻԱՄ.— Ինչ էլ որ լինի դարձեալ մեր տղան է: Անցեալ օրը հետը խօսեցի այդ մասին, ասում է իզուր է հայրիկը կասկածում, ես այնքան էլ փող չեմ ծախսում. ասում է, եթէ հայրիկը գործն ինձ յանձնի, ես գործը կմեծացնեմ երկու անգամ: Բայց այժմ տղաս ինչո՞ւ պէտք է իրեն տանջէ, քանի որ գործը մենակ մերը չէ: Վերջապէս, ասում է, թող շատ չմտածի հայրիկը, ես իմ ծախսածների փոխարէն մէկին տասը կառնեմ:

ՍԱՐԳԻՍ.— Ի՞նչպէս, ճիշդից կառնի: Գիտեմ, երբ փող չեմ տալի՝ ուրիշներից մուրհակով փող է վերցնում, որ իմ մահից յետոյ վճարէ:

ՄԱՐԻԱՄ.— Այդպէս չէ, ինչո՞ւ ես տղայիս խայտառակում, նա քեզանից փող չէ առնելու:

ՍԱՐԳԻՍ.— Հապա ճիշդից է առնելու:

ՄԱՐԻԱՄ.— Մթթէ չգիտես. ասում են Ղամբարովնայի Լիզան սիրահարուել է Սիմայի վրայ, մօտ հարիւր հազար էլ օժիտ ունի, անա որտեղից. համ սիրուն կին, համ էլ մեծ օժիտ:

ՍԱՐԳԻՍ.— Լա՛ւ երազ է, եթէ կատարուի, բայց ես չեմ հաւատում:

ՄԱՐԻԱՄ.— Ինչո՞ւ. եթէ մեզ պէս մարդո՛ւ տղային էլ չառնի, էլ ճիշդ է առնելու:

ՍԱՐԳԻՍ.— Նախ նրանք մեզնից շատ հարուստ են, երկրորդ նրանք բնիկ քաղաքացի են, իսկ մենք գիւղացի, վերջապէս Լիզան Պետերբուրգ բարձրագոյն կուրսերն է աւարտել, իսկ մեր Սիման գիմնազիան էլ չկարողացաւ աւարտել:

ՄԱՐԻԱՄ.— Մի մոռանար, որ եթէ աղջիկը տղային սիրեց, քո բոլոր ասածները կէս կոպէկի նշանակութիւն էլ չեն ունենայ:

ՍԱՐԳԻՍ.— Բայց քեզ ճի՛շդ է ասել, թէ աղջիկը Սիմային սիրում է:

ՄԱՐԻԱՄ.— Սիման:

ՍԱՐԳԻՍ.— Է՛հ, եթէ կարելի լինէր Սիմայի հաղար խօսքից մէկին հաւատալ, ես թոյլ չէի տայ, որ այս ճաղատ գլխիս այդքան աւետարան կարդաս, ամեն օր քեզ հետ զաւմաղալ չէի սարգի, Յարութիւնն էլ վաղճւց գործից հեռացրել էի:

ՄԱՐԻԱՄ.—(Նեղացած): Հէնց այդպէս արիւր, որ տղայիս անունը կոտորեցիր. վերջ է վերջոյ ամբողջ քաղաքում անունը սուտասան դուրս եկաւ:

ՍԱՐԳԻՍ.— Մի նեղանար, այստեղ միայն ես ու դու ենք, մեր տղայի պակասութիւնը քեզ եմ ասում, ուրիշների մօտ վարդապետ ձեռնալ գիտեմ, դու անհող եղիր:

ՄԱՐԻԱՄ.— Լա՛ւ, լա՛ւ, այդ թողնենք: Այդ որ միշտ Յարութիւնի մասին

մտածում հապա իսկի հարցնում ես, թէ նրանք ինչ են մտա-
ծում:

ՍԱՐԳԻՍ.—Այդ էլ եմ մտածում:

ՄԱՐԻԱՄ.—Պաշտօնական խնդիր է տուել համալսարան մտնելու. գնալու է
Պետերբուրգ փաստաբանութիւն սովորելու. Նինան էլ հէնց որ
գլխաւորէին վերջացնէ, գնալու է հղբօր մօտ բժշկութիւն սովորե-
լու, իսկ մերոնք ոչինչ էլ չսովորեցին. դէ, արի, Մարիա Պե-
տրովնա, մի տրաքիր:

ՍԱՐԳԻՍ.—Մեղաւորն ո՞վ է, եթէ ոչ դու. թոյլ տուիր որդոցդ ամեն շտա-
յութիւն անել, նրանք էլ փոխանակ սովորելու, սկսեցին թա-
փառել:

ՄԱՐԻԱՄ.—Իհարկէ, ի հարկէ, դարձեալ մեղաւորը ես եմ դուրս գալու,
բայց ես քեզ ասում եմ, եթէ թոյլ տաս, որ Յարութիւնի դա-
ւակները գնան Պետերբուրգ, ես ուղղակի կ'իսկապարուեմ:

ՍԱՐԳԻՍ.—Կնիկ, խելօք հղիւր, խելօք. գործի տէրը ես եմ, ինչպէս ուզե-
նամ, այնպէս էլ կ'անեմ, նրանց փող տուող չկայ, որ Պետեր-
բուրգ գնան:

ՄԱՐԻԱՄ.—Ինչ անելու ես շուտ արն, շուտ:

ՍԱՐԳԻՍ.—Արդէն արել եմ:

ՄԱՐԻԱՄ.—Ի՞նչ ես արել, դէ ասն, ինչո՞ւ ես ծածկում:

ՍԱՐԳԻՍ.—Նինային մարդու եմ տուել... պէտք է պատրաստուել, այսօր
կամ վաղը մեր տանը նշանդէք կը լինի:

ՄԱՐԻԱՄ.—Ես էլ կարծեցի մի բան ես արել: Մեր Շուրային թողած նրան
եւ մարդու տալի. այ քեզ խելք:

ՍԱՐԳԻՍ.—Լսիր, մի տաքանս դեռ. Շուրային մինչև իր սիրած ու հաւա-
նած մարդը չգտնեմ, մարդու չեմ տալու, ասենք ինքն էլ չի առ-
նի: Առաջ Նինային պէտք է գլխից ոսոք անել. համ գլխաւորայի
ծախսից կադատուենք, համ աւել պատառ ուտողից, մէկ էլ որ
Շուրայի ճանապարհը կ'ըացուի: Շուրային ում էլ որ տանք մի
խսուն հազար օժիտ ենք տալու, իսկ այստեղ բանն այնպէս եմ
սարգել, որ առանց կոպէկի կ'արծնենք:

ՄԱՐԻԱՄ.—Այդ ում ես տալու:

ՍԱՐԳԻՍ.—Կուզիկով Կիկոյին ճանաչում ես, որ մեղանից էլ միշտ ապրանք
է առնում. նրա ծնողների հետ խօսել, վերջացրել եմ: Յարութի-
ւնին էլ ասել եմ, որ պայ տուն այս մասին խօսենք:

ՄԱՐԻԱՄ.—Այ կեցցեն, այժմ հաւանեցի, իզուր չեն ասում, որ դու խե-
լօք ես:

ՍԱՐԳԻՍ.—Այո, բայց եթէ Յարութիւնը, կինը, աղջիկը չհամաձայնեն...

ՄԱՐԻԱՄ.—Այս տան գործի տէրը դու ես, ի՞նչպէս կարող եմ չհամաձայնել.
Թող մի հակառակը խօսեն, ես նրանց ցոյց կտամ:

ՏԵՍԻՆ 3.

Սարգիս, Մարիամ, Շուրա եւ Մաշօ:

ՇՈՒՐԱ.— (Նախասենեակում): Մաշօ Մաշօ:

ՄԱՇՕ.— Ի՞նչ էք հրամայում, օրիօրդ:

ՇՈՒՐԱ.— Վերարկուս բռնիր:

ՄԱՇՕ.— (հանում է վերարկուն): Օրիօրդ, իսկ շէնսպը:

ՇՈՒՐԱ.— Շէնսպը նոր եմ գնել, ուզում եմ հայելում նայել: (Մերս է մըտ-
նում եւ քարեում հօրը): Ի՞նչպէս է, հայրիկ, շէնսպս լաւ սա-
ղում է:

ՄԱՐԻԱՄ.— Սաղում է, բայց շէնսպը շատ մեծ է, ծաղիկները քիչ են:

ՇՈՒՐԱ.— Այժմ մօզան այս է:

ՍԱՐԳԻՍ.— Այնքան էլ չի սաղում: Երեւի թանգ ես գնել:

ՇՈՒՐԱ.— Ի՞նչպէս, հէնց նոր պատկերահանի մօտ նկարուեցի, զովեց շէն-
սպըս. ասաց որ պատկերս էլ փողոցի վրայ նայող ցուցարանում
է դնելու, որ անցնողները տեսնեն սրբան գեղեցիկ է շէնսպս:

ՍԱՐԳԻՍ.— Այդ լաւ բան չեմ արել, թոյլ չպիտի տայիր այդ:

ՇՈՒՐԱ.— Վնաս չունի, ի՞նչ կայ որ: Գիտե՞ս մայրիկ, պատկերահանի մօտ
մի պարտնի հետ ծանօթացայ, ինձ ուղեկցեց մինչև մեր տունը.
ամբողջ ճանապարհին իմ մազերն էր գոլում, շէնսպս. ինքն էլ
այնպէս գեղեցիկ էր, այնպէս լաւ հագնուած: Իսկ հայրիկը չի
հաւանում, նա ճաշակ չունի ուղղակի. (շէնսպը հանում է եւ
դուրս գնում):

ՍԱՐԳԻՍ.— Իհարկէ ճաշակ չունիմ, ես միայն փող տալն եմ հասկանում:

ՄԱՐԻԱՄ.— Բաւական է խօսես. հապա այդ փողերը ում համար են աշխա-
տուած:

ՍԱՐԳԻՍ.— Ես փող ծախսելու դէմ չեմ խօսում, այլ այդ տեսակ թիթեկութի-
ւոյթեան. տեսնում ես զաւակդ ինչո՞վ է հետաքրքրուած:

ՏԵՍԻՆ 4.

Սարգիս, Մարիամ եւ Յարութիւն:

ՅԱՐՈՒԹԻՒՆ. (Նախասենեակում վերարկուն հանելուց յետոյ ներս է մըտ-
նում): Բարե Մարիա Պետրովնա:

ՄԱՐԻԱՄ.— (Նստած տեղից ձեռք տալով): Բարե:

ՍԱՐԳԻՍ.— (Յոյց տալով իր եւ կնոջ դիմաց աթոռը): Նստիր:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Բարե լինի, ի՞նչ կայ, ինչի՞ համար ես կանչել:

ՄԱՐԻԱՄ.— Բարե է, Յարութիւն. Սարգսի պէս հղբայր ունիս էլ ի՞նչ հոգս
ունես, տեսնում ես մերոնց թողած, քո երեխանց մասին է մտա-
ծում:

ՍԱՐԳԻՍ.—(Աչքերը յառելով կնոջ վերայ): Բարի է, բարի. մի ընտանեկան գործ կայ, պէտք է միասին խօսենք:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Աստուած բարին կատարի:

ՍԱՐԳԻՍ.—Ուզում եմ Նինային մարդու տալ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—(Զարմացած): Ո՞ւմն ես տալու:

ՍԱՐԳԻՍ.—Կուզիկով Սահակի տղայ Կիկոյին:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Նա իմ աչքիս այնքան էլ լաւ տղայ չի երևում:

ՍԱՐԳԻՍ.—Շատ լաւ տղայ է:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Նրա վերնատունը մի քիչ դատարկ է:

ՍԱՐԳԻՍ.—Հա, քո վերնատունը նրանից շատ լիքն է. դու. նրանից շատ խելօք ես:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ես չեմ ասում թէ նրանից խելօք եմ, բայց նա շատ թեթեւ է:

ՍԱՐԳԻՍ.—Ես էլ եմ նրան ճանաչում, շատ խելօք տղայ է:

ՍԱՐԳԻՍ.—Դու այն ասա, ի՞նչ ես ասում, քո խօսքդ ի՞նչ է:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Նրան աղջիկ չի կարելի տալ, այ իմ խօսքը:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչպէս չի կարելի տալ, քանի որ արդէն տուել եմ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ի՞նչպէս թէ տուել ես:

ՍԱՐԳԻՍ.—Հէնց այնպէս. տուել եմ, ինչպէս աղջիկը մարդու են տալի: Տղայի ծնողների հետ ձեռք ձեռքի ենք տուել, համբուրել ենք, միմեանց խնամի ենք անուանել, տղայի ճակատն էլ համբուրել եմ և փէսայ եմ անուանել. վաղն էլ գալու են մեր տունը նշան դնելու:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ասանց հարցնելու:

ՍԱՐԳԻՍ.—Ո՞ւմից պէտք է հարցնեմ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ինձանից, մօրից, աղջկանից:

ՍԱՐԳԻՍ.—Ես ո՞չ ոքից հարցնելու կարիք չունիմ: Ինձ բան մի սովորեցնէք: Այսքան կարողութիւնը առանց ձեր խորհրդի եմ աշխատել, գործի տէրը ես եմ, ինչպէս ուզեմամ, այնպէս էլ կանեմ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Լաւ, եղբայր, տան և խանութի տէրը դու ես, ինչպէս ուզում ես, այնպէս էլ արա. բայց իմ դաւակները հայր ու մայր ունին, բացի այդ պէտք է աղջկանից հարցնել արդեօք յօժար է, թէ ոչ:

ՍԱՐԳԻՍ.—Աղջկանից ի՞նչ պէտք է հարցնել, աղջկայ խելքը ի՞նչ է կըտրում, եթէ աղջկանը թողնես, կերթայ երեսը լաւ ստիրած, ներկած սափրիչ կանի:

ՄԱՐԻԱՄ.—Ես ուզում էի քեզ ասել, որ սրանց գործին չխառնուես, մէկէլ մտածեցի՝ կնեղանաս:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Մարիա Պետրովնա, մի լաւ մտածեցէք, ի՞նչպէս կարելի է աղջկանից չհարցրած մարդու տալ:

ՄԱՐԻԱՄ.—Զարմանում եմ, Յարութիւն. ինչո՞ւ չի կարելի: Մեզ մարդու տալիս, թէ մեզանից մի բան հարցրեց, մեր ծնողները տուին, վերջացու, դնաց:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Լաւ. ինչո՞ւ Շուրային չէք տալի, նա Նինայից մի տարով էլ դեռ մեծ է:

ՄԱՐԻԱՄ.—Շուրան մեծ եղբորդ աղջիկն է, խնդրեմ նրա անունը չտաս, այդ քեզ չի վերաբերում:

ՍԱՐԳԻՍ.—Շուրային ուզող չկայ, ում տամ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Հէնց Կուզիկով Կիկոյին: Իմ կարծիքով նա Շուրային ուրախութեամբ կառնի:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչ ես յիմար, յիմար խօսում:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ամենևին յիմար չեմ խօսում:

ՍԱՐԳԻՍ.—Ես խօսքս յետ առնողներին չեմ. Նինային տուել եմ, վերջացել, դնացել է. այստեղ այլ ես ի՞նչ երկար, բարձիկ խօսելու բան կայ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Եթէ չես ուզում խօսքդ յետ առնել, կարող ես Շուրային տալ:

ՄԱՐԻԱՄ.—Ես սրա անմիտ խօսակցութիւնը այլևս տանել չեմ կարող, աչքիս առաջ աղջկանս անպատուում է: (Դնում է):

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—(Նրա ետեւից): Հապա ինչո՞ւ ձեր աղջկանը անպատուութիւն է, իսկ իմ աղջկանը պատիւ:

ՍԱՐԳԻՍ.—(Բարձրաձայն): Չափդ ճանաչիր, յիմար: Ի՞նչեք ես խօսում:

ՏԵՍԻՆ 5.

Սարգիս, Յարութիւն եւ Դարեա:

ԴԱՐԵԱ.—(Համեստ, սեւ հագուստով): Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել:

ՍԱՐԳԻՍ.—Ամուսնուցդ հարցրու:

ԴԱՐԵԱ.—(Յարութիւնին): Ինչո՞ւ էիք այդքան բարձր խօսում:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ես էլ չգիտեմ. ջրհեղը մօտեցել է:

ԴԱՐԵԱ.—Ի սէր Աստուծոյ, ինձ մի տանջէք: Ձը լինի՞ իմ այս սենեակը տեղափոխուելն է պատճառը:

ՍԱՐԳԻՍ.—Թէն դու առանց ինձ հարցնելու ես այդ բանն արել, բայց դրա դէմ բան չեմ ասում: Մինք մի գերդաստան անդամներ ենք, ամեն բան անելիս կարիք չկայ միմեանցից հարցնել: Քո առողջութիւնը վատ է՝ տեղափոխուել ես այդ սենեակը. շատ էլ լաւ ես արել: Բայց ա՛յ տես, որ իմ արածի վրայ է քո մարդը բղաւում:

ԴԱՐԵԱ.—Ինչո՞ւ, ի՞նչ էք արել, որ նա Ձեզ հետ չի համաձայնում:

ՍԱՐԳԻՍ.—Աւելի լաւ է իրանից հարցրէք, թէ ի՞նչ վատ բան եմ արել: (Դնում է):

ԴԱՐԵԱ.—Ի՞նչու ես քարի պէս կանգնել, ի՞նչ է պատահել, ի՞նչու չես խօսում:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Աւետարանն ասում է «Հաւատք քո կեցուցին դքեզ» բայց իմ

հաւատն ինձ կորցրեց: Նա հանգամանքից օգտուելով, ինչ ուզում է՝ անում է:

ԴԱՐԵԱ.—Ի՞նչ է ուզում անել. եթէ ուզում է բաժանուել, բաժանուելը ի սէր Աստուծոյ. ինչ որ տալիս է ան, հեռանանք այս տանից. նրանք մեզ բոլորիս այստեղ այրում են:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Աւելի վատ բան կայ, լեզուս չի բռնում, որ ասեմ. իմ յիմարութեան պատճառով քո և զաւակներիս առաջ ամօթով հմ անալու: (Աչքերը սրբում է):

ԴԱՐԵԱ.—Յարութիւն, մի տանջիր ինձ. ի՞նչ է պատահել, շնաւ տաս:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Նիսային ծախել է...: (Սկսում է լալ):

ԴԱՐԵԱ.—(Շշմած): Ի՞նչ, ի՞նչպէս թէ ծախել է:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Մի քիչ էլ դեռ վատ...:

ԴԱՐԵԱ.—Պարզ խօսիր, մարդ, որ բան հասկանամ.—ոչինչ չեմ հասկանում: Սիրտս թուլանում է...: (Թուլացած նստում է):

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—(Ջուր տալով): Հանգստացիր, ոչինչ չի պատահել:

ԴԱՐԵԱ.—Դէ ասա, ի՞նչ է պատահել: Ես էլ հօ եղբայրդ չեմ, որ վախահում ես:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ես չեմ վախենում, այլ տանջում եմ: Այն է պատահել, որ Սարգիսը Նիսային մարդու է տուել:

ԴԱՐԵԱ.—Ո՞ւր է տուել:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Կուղիկով Սահակի տղայ Կիկոյին:

ԴԱՐԵԱ.—Այն յիմարի՞ն, չը լինի՞ թէ համաձայնել ես:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ես չեմ համաձայնել:

ԴԱՐԵԱ.—Ուրեմն էլ ի՞նչ խօսք կարող է լինել, ֆո՛ւ, ի՞նչպէս ինձ վախեցրել:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Բայց այդ անհոգին ամեն բան վերջացրել է. նա իր խօսքից յետ չի դառնալ. մի բան ար տուաց, պրծաւ. յիսուն հազար էլ որ կորցնի, իր թքածը չի լիզի:

ԴԱՐԵԱ.—Այո, առեւտուրի մէջ չի անի, բայց այս հօ առեւտուր չէ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ընդհակառակը. նա առեւտուրի մէջ իւր թքածը տասը կողէկի համար էլ կլիզի, բայց այստեղ առեւտուր չէ, նա սղդէն խօսք տուել, վերջացրել է:

ԴԱՐԵԱ.—Ի՞նչ իրաւունք ունի ուրիշի աղջիկը տուանց հարցնելու մարդու տալ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ես էլ չեմ հասկանում: Դու նրան նոր ես ճանաչում ինչ է. նա մեր զրութիւնից օգտուում է անխղճօրէն, անա թէ ինչ:

ՏԵՍԻՒ 6.

Յարութիւն, Դարեա, Սարգիս և Մարիամ:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչ վճռեցիք, ի՞նչ եղբակացութեան եկար:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Մենք վճռեցինք Նիսային Կիկոյին չտալ:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչպէս, ուրեմն ուզում էք ինձ անպատուել, իմ խօսքս գետնին ձգել:

ԴԱՐԵԱ.—Սերգէյ Լազրիչ, ինչո՞ւ էք վազում խեղճ աղջկան մարդու տալ. սպասէք գոնէ գիմնագիտան աւարտի, այն ժամանակ կմտածենք այդ մասին:

ՍԱՐԳԻՍ.—Ներեցէք Դարեա Գրիգորեան. Պաւլուշին էլ այդպէս ասիք, թող գիմնագիտան աւարտի՝ կգայ խանութ աշխատելու, ես էլ հաւատացի, բայց բանից դուրս է գալիս, որ նա պատրաստուում է Պետերբուրգ գնալ փաստաբանութիւն սովորելու. նոյնն էլ երեւի Նիսան կլինի. կսպասենք, որ գիմնագիտան աւարտի՝ մարդու գնայ, բայց նա էլ կուզենայ գնալ բժշկութիւն սովորելու: Դէ, Սերգէյ Լազրիչ, արի սրանց ճանապարհածախք, ուսման, դպետի, ապրուստի փող տուր տարիներ շարունակ: Աչքներս լոյս, լաւ տեղինք բազար բացել:

ԴԱՐԵԱ.—Սերգէյ Լազրիչ, դրանց ծախսը խօ Դուք չէք վճարելու:

ՍԱՐԳԻՍ.—Հապա թվ է վճարելու, գուցէ քո օժիտից ենք տալու:

ԴԱՐԵԱ.—Իմ օժիտից չէք տալու, բայց չէ՞ որ Յարութիւնը Ձեր եղբայրն է, մինք էլ մի փոքր մասն ունենք գուցէ՝ գործի մէջ:

ՍԱՐԳԻՍ.—(Չայրացած): Ի՞նչ մաս, ի՞նչ բան, մասը որն է: Ձեզ հազար անգամ ասել եմ՝ Ձեր հղած չեղածը երեք հարիւր ուսուրի էր, այն էլ քսան տարի սրանից առաջ կերել, վերջացրել էք: Գործի մէջ արդէն քսան տարի է ոչ մի կողէկ չունէք: Ես ձեզ ի սէր եղբայրութեան եմ պահում, կերակրում, բաւական է վերջապէս: Ի՞նչ էք ուզում ինձանից. տարեկան ձեզ վերայ երկու-երեք հազար ուսուրի փող եմ ծախում, այս բաւական չէ, տեսէք հիմի էլ ի՞նչեր են պահանջում: Ահա ձեր երախտագիտութիւնը:

ՄԱՐԻԱՄ.—(Բորբորում): Ես շատ աներես մարդիկ եմ տեսել, բայց ձեր նմանը դեռ չէի պատահել: Այսքան ժամանակ մեր փողն ուտել, փչացնելուց յետոյ դեռ կանգնել աւել պակաս բաներ էլ էք խօսում: Երեք հարիւր ուսուրին ի՞նչ է, որ նրանով գործ սկսել լինի և քսան տարի էլ ապրել: Անամօթներ, չէք ամաչում, քսան տարի ձեզ պահող, կերակրող եղբօր խօսքն էք կոտորում մի աղջկայ համար:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ինչո՞ւ էք տաքանում, հանդարտ խօսենք աւելի լաւ չէ: Այն ժամանակ, որ վիւղից կկայ երեք հարիւր ուսուրի փող տուեցի ձեզ, եղբայր համարելով, խանութի իմ խանութը համարելով, ինչպէս որ դուք էիք ինձ հաւատացնում և սկսեցի աշխատել, դուք ինչ ունէիք, չէ՞ որ ձեր ունեցածն էլ երեք հարիւր ուսուրուց աւելի չէր լինի:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչ ես խօսում, յիմար, այդ ժամանակ քսան հազար ուսուրու կարողութիւն ունէի:

ՄԱՐԻԱՄ.—Ե՛կ գնանք, Սերգօ ջան, ինչո՞ւ էս իզուր գլուխդ ցաւացնում:
Կարծես մեր գործին ընկեր են եղել, այժմ էլ հաշիւ են պա-
հանջում:

ՍԱՐԳԻՍ.—Ես ո՛չ որի հաշիւ տալ պարտաւոր չեմ: Եթէ բանն այնտեղը հա-
սաւ, որ ստիպում են իմ խօսքս հոտ առնել, այն ժամանակ սրանց
հետ ուրիշ կերպ կխօսեմ: Բայց հաստատ իմացած եղէք, որ իմ
խօսքը խօսք է: (Մարիամն ու Սարգիսը գնում են):

ԴԱՐԵԱ.—Աստուած իմ, Աստուած իմ, այս ի՞նչ օրեր ենք տեսնում այս գա-
ղանի ձեռքում: Մի՞թէ աղջիկս արդէն ծախուած է, մի՞թէ նրա
ճակատագիրն արդէն վճռուած է: (Հալիս է):

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Դարեան, հանգստացիր, ի սէր Աստուծոյ, դուցէ մի բան կա-
նենք:

ԴԱՐԵԱ.—Ես ամեն բան արդէն վճռեալ եմ համարում. այսուհետեւ ոչինչ
չենք կարող անել: (Հստում են ոտնաձայներ):

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Բաւական է լսս, կարծեմ աղայքն եկան:

ԴԱՐԵԱ.—(Աչքերը սրբում է):

ՏԵՍԻՒ 7.

Յարութիւն, Դարեա, Պաւլուշա եւ Նինա:

(Պաւլուշան եւ Նինան գիմնագետայի համազգեստներով):

ՊԱԻԼՈՒՇԱ.—Բարե՛, հայրիկ. աչքներդ լոյս. կարծեմ համալսարանում ըն-
դունուած եմ. Պետերբուրգ եղող ընկերոջիցս նամակ ստացայ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Աստուած յաջողի, որդիս:

ՆԻՆԱ.—Բարե մայրիկ: (Չորեքով առաջը եւ նայելով դէմքին): Մայրիկ,
դու լացե՞լիս, ի՞նչ է պատահել, չլինի՞ առողջութիւնդ վատ է:

ԴԱՐԵԱ.—Ո՛չ, աղջիկս, չեմ լացել, քեզ այնպէս է թւում:

ՆԻՆԱ.—Պաւլուշ, մայրիկը լացել է: (Յարութիւնին): Հայրիկ, ի՞նչ է պա-
տահել:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—(Լուռ նայում է, մի րոպէի հետ խաղում):

ՊԱԻԼՈՒՇԱ.—(Չորեքով մօր առաջ): Մայրիկ ի՞նչ է պատահել. ասա:

ԴԱՐԵԱ.—(Չեղբերը զատկներ ռետերին դնելով: Ոչինչ, բաւէքս, ոչինչ
չեմ լացել, լալու ի՞նչ կայ որ:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Մայրիկ, դու լացել ես, մի բան կայ: Զլինի՞ թէ դարձեալ
տեսութիւնդ դայրացել է:

ԴԱՐԵԱ.—Կամաց, որդիս. կլսեն:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Է՛հ, թող լսեն, ի՞նչ եմ ասում որ:

ԴԱՐԵԱ.—Լաւ չէ, ինչո՞ւ լսեն:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Հապա ամեն օր կուի սարգելը լաւ բան է, որ սարգում են:

ԴԱՐԵԱ.—Ամեն օրուանն ուրիշ, այսօրուանն ուրիշ:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Ինչո՞ւ, այսօր ի՞նչ է պատահել:

ԴԱՐԵԱ.—Զեմ իմանում, հայրիկիցդ հարցրո՞ւ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Կուզիկով Գրիգորին ճանաչում ես:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Ճանաչում եմ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Նրա ծնողներն ուզում են Նինային նշանիլ իրենց որդու հետ:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Ի՞նչ, կատակ ես անում հայրիկ:

ՆԻՆԱ.—Ի՞նչ ես խօսում հայրիկ, այդ ի՞նչ բաների մասին էք խօսում. ծի-
ծաղում էք, ի՞նչ է:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Զենք ծիծաղում, Նինա, սպասում էինք, որ համաճայնու-
թիւնդ հարցնենք:

ՆԻՆԱ.—Բաւական է, բաւական. այժմ էլ երեսայ չեմ, որ ծաղրէք:

ԴԱՐԵԱ.—Նինա ջան, ծաղր չէ. հայրիկը ճիշտ է ասում. (սկսում է Նինա-
յին համբուրել եւ լալ):

ՆԻՆԱ.—Մայրիկ, ի՞նչ երեսայական բաներ ես խօսում: Ես ի՞նչպէս կարող
եմ մարդու գնալ, քանի որ գիմնադիւան չեմ աւարտել, ինչո՞ւ էք
շապաւում: Ո՞վ է այդ Կիկօն:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Յիշում ես, Գօգօլսկի փողոցում լիմօնադ խմեցինք. մի ծե-
րուկ էլ քեզ խնձոր տուեց, Կիկօն այն տղան է, որ մեզ համար
լիմօնադը բացեց:

ՆԻՆԱ.—Յո՛ւ, թողիմ նրա գլուխը. նա ի՞նչ է, որ ես նրան առնեմ:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Այն լիմօնադ բացող կեղտոտը (ծիծաղելով) ուզում ես ան,
ուզում ես մի առ:

ՆԻՆԱ.—Պաւլուշ, բաւական է ծիծաղես: Դու մինչեւ այժմ ինձ տանում է-
լիք Պետերբուրգ՝ բժշկութիւն սովորելու, այժմ էլ ուզում ես
այդ պառնշին կնութեան տալ:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Քաւ լիցի, Նինա, ես չեմ տալի, սրանք են ուզում:

ՆԻՆԱ.—Այդ տեսակ ուղղորդներն կարելի է մերժել եւ ուրիշ ոչինչ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Մերժել, մերժել, ի՞նչպէս մերժել, քանի որ ամիդ խօսք է
տուել:

ՆԻՆԱ.—Զարմանում եմ, հայրիկ. ի՞նչպէս թէ խօսք է տուել:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ի՞նչպէս որ խօսք են տալի. թէ մեր աղջիկը ձեր տղային
կտանք:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Հայրիկ, մինչեւ այժմ կարծում էի կատակ էք անում, բայց
տեսնում եմ, որ կատակ չէ, հաստատ բան էք խօսում. դուցէ այդ
պատճառով էլ մայրիկը լացել է:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Լաց լինենք, թէ ուրախանանք՝ միևնոյնն է. Խնդիրը վճռու-
ած է, ամիդ արդէն խօսք է տուել:

ՆԻՆԱ.—Նա ի՞նչ իրաւունք ունի ուրիշի փոխարէն խօսք տալու:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Նա ուրիշ չէ, նա էլ մեզանից է, մեր մեծ եղբայրն է:

ՆԻՆԱ.—Յետոյ, աղջիկը մի հակ տալանք է, որ հում ուղէք վաճառէք:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Հայրիկ, ճիշտն ասած, ես ուղղակի դարմանում եմ ձեր եղ-

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ի՞նչ դարմանալու բան կայ:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Լսիր, հայրիկ. ես կուզեմ քեզ հետ մի քիչ խօսել: Եղբայրդ մինչև այժմ կարգադրում էր մեր բոլոր գործերը, ցոյց էր տալիս մեզ, թէ ինչպէս պէտք է ապրինք, խօսենք, գործենք: Դու ինքդ էլ մինչև այժմ չգիտես թէ դու նրա ծառան ես, թէ եղբայրը: Մենք մինչև այժմ էլ չգիտենք՝ նրա եղբոր տղաներն ենք այս տանը, թէ աւել կտոր ուտողներ կամ ողորմութիւնով ապրողներ: Գիմնադիւանդ հղած ժամանակ ամեն օր ստիպում էին խանութ գնալ աշխատելու, որ աւելորդ ծառայի ունենալու համար: Հօրեղբորս կինը մինչև անգամ մեր կերած հացի համար էլ էր խօսում: Եթէ կարողանար գիմնադիւանդ ինձ ոսկէ մէդալ տուող ուսուցիչներին այս քաղաքից կ'ընդհատէր: Այժմ էլ, ստիպուած, ծածուկ խնդրի եմ ներկայացրել համալսարան մտնելու: Միթէ սա դրութիւն է:

Հապա Նինան... Դեռ գիմնադիւանդ չաւարտած ուզում են մարդու տալ, էն էլ իմ, մի որեւէ Կիկօի, որին բացի ապուշից, ուրիշ ոչ մի անուն չի կարելի տալ: Մինչև օրս նա իրեն տէր էր հրատարակել մեր գործերին, իսկ այսօր սկսել է տէր համարել նաև մեր գլխներին: Վաղն էլ, Աստուած գիտէ, ի՞նչ նոր մտքեր է յղանալու: Եւ այսպէս, տարիներ շարունակ լռել ենք, տարիներ շարունակ արցունքներս կուլ տուել: Իսկ մայրիկը... Մայրիկն առանց նրանց իրաւունքի ոչ հագնուելու, ոչ ուտելու, ոչ նստելու կամ ելնելու իրաւունք չէ ունեցել. նա նոյնիսկ յանցաւոր է համարուել, երբ հիւանդացի է: Հապա քո դրութիւնը. չէ՞ որ շատ էլ նախանձելի չէր. խանութում ծառաների առաջ տէր ես եղել, իսկ եղբորդ առաջ՝ ծառայ. պատասխանատու ես եղել ամեն բանի համար, ոչ միայն քո, այլ և ծառաների գործած յանցանքների համար: Քո դրութիւնդ միշտ խախտ է եղել: Եղել են գէպքեր, երբ նա ծառաների ներկայութեամբ նոյնիսկ քեզ վրայ ձեռք է բարձրացրել. բայց դու այդ ամենը ծածկել ես, մեզ ոչինչ չես ասել: Եւ ինչո՞ւ, ի սէր քո գաւազները. հայրիկ, հայրիկ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Որդիս, ի՞նչ պէտք է ասել. եթէ օտարներին ասել նրանք կամ չէին հասկանալու կամ նոյն իսկ ծաղրելու էին. դուք դեռ փոքր էիք, իսկ մայրիկիդ չասելուս պատճառն այն էր, որ լուր գիտէի նրա կրած տանջանքները. գիտէի, որ նա ինձանից աւելի է տանջւում: Ես չէի ուզում նրա ցաւի վրայ նոր ցաւեր աւելացնել... Դժուար էր, դաւակոս, խիստ դժուար...

ՊԱՒԼՈՒՇԱ.—Հայրիկ, դու մեզ ոչինչ չես ասել մինչև այժմ, բայց հասաւ ժամանակը, գործն ինքն իրան բացուեց: Ես վերջին ժամանակները մեր տանը պատահած կռիւներից, խօսակցութիւններից շատ բան հասկացայ. դրսի ծանօթներս էլ շատ բան պարզեցին.

և ահա ի՞նչ է դուրս գալի: Հօրեղբայրս քեզանից առաջ է եկել այստեղ. խանութը նա է վարձել, յետոյ էլ դու ես եկել. իբրև եղբայր մտել ես խանութը և հաւասարաչափ աշխատել, նրա ունեցածը քոնը համարելով, քոնը՝ նրանը: Իսկ նրա միտքը բոլորովին այլ է եղել. նա խանութի պատենտը միշտ իւր անունին է առել, խանութի տիրոջ հետ պայման կապելիս իւր անունն է նշանակել տուել, վերջը, երբ հարստացել էք, սկսել է առևտրական գրքեր պահել, ամեն տեղ իւր անունն է նշանակել տուել, մայր դուստրն էլ իւր անունով է պահում: Այս բոլորը ապացուցանում են, որ գործի տէրը միայն նա է, օրէնքն էլ նրան է ճանաչում և ոչ թէ քեզ. դու այս բոլորի վրայ կամ ուշադրութիւն չես դարձրել, կամ չես հասկացել և այժմ դու մի հասարակ պայմանագիր էլ չունես, որով հաստատես, թէ դու հաւասար իրաւունք ունիս այդ գործում: Այժմ մեր կարողութիւնը հասնում է երեք հարիւր հազարի, եթէ ագահութիւնը հօրեղբորս սրտում բուն դրած չլինի, նա պէտք է որ հարիւր յիսուն հազարը քեզ տայ. Բայց նա արդէն երկուս է որոշել է այդ չադ կտորից ոչ մի կերպ չզրկուել. այդ է պատճառը որ միշտ աշխատում է ցոյց տալ, որ գործի և տան տէրն ինքն է միայն, իսկ դու ոչ մի իրաւունք չունիս: Այժմ տեսնում է հանգամանքները փոխուել են. գիմնադիւանդ աւարտեցի և խանութ չգնացի, հաւանական է, որ նա իմ Պետերբուրգ գնալու մտադրութիւնն էլ իմացել է: Նինայի հետ թէյի կամ ճաշի ժամանակ, երբեմն, անմացել է: Նինայի հետ թէյի կամ ճաշի ժամանակ, երբեմն, անմացել է: Երբ այս մասին, և այս բանը նրանց աւելի է կառաւիցնում. ես այդ շատ լուր եմ նկատում: Հապա նրանց գաւազները անընդունակ լինելը—նրանց սիրտն է կրծում. հախանձից ամեն կերպ աշխատում են մեր առաջը դժուարութիւնների հանել, որ չը կարողանանք մարդ դառնալ: Տեսնում ես հայրիկ ինչ դրութեան ենք հասել քո եղբոր շնորհիւ...

ՆԻՆԱ.—Խեղճ հայրիկ, ուրեմն դու այսքան ժամանակ խաչուել ես լուր ու մունջ (հեղեղում է):

ԴԱՐԵԱ.—Այս ի՞նչեր եմ լսում. միթէ այս երազ չէ, մարդ Աստուծոյ և դու մինչև այժմ լռում ես:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ինչո՞ւ էք իմ արարքը երեսովս տալի, հօ ես դիտմամբ չեմ արել. ես սխալուել եմ, որ նրան հաւատացել եմ:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Հայրիկ, ես արածդ չեմ ուզում երեսովդ տալ, այլ ուզում եմ հասկացնել, որ մեր ընտանիքի դրութիւնը ինձ յայտնի է և ժամանակ է մի ելք փնտրել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Շատ ուրախ եմ, որդիս, որ այդ բոլորը հասկացել ես, քեզ իրաւունք եմ տալի, արա ինչ որ կարող ես: Բայց ի՞նչ անել:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Այժմ ի՞նչ անել, եթէ գոնէ համալսարանն աւարտած լինէի, կարող էի մի բան անել, բայց այժմ, ես էլ քեզ պէս անօգնական եմ: Տէր Աստուած, Տէր Աստուած:

ՏԵՍԻՆ 8.

Յարութիւն, Դարեա, Պաւլուշա. Նինա եւ Սարգիս:

ՍԱՐԳԻՍ.—(Կեղծ ժպիտով): Վերջապէս ձեզ տեսայ: Ես առաւօտը շուտ խանութ եմ գնում, դուք՝ ուսումնարան, մարդ կարօտ է մնում ձեզ տեսնի: Նինա ջան, ի՞նչ լցուել, գեղեցկացել ես, կտտարեալ հարմանցու ես դարձել: Ինչո՞ւ այդպէս տխուր ես:

ՆԻՆԱ.—Ձտխրած ի՞նչ պէտք է անել:

ՍԱՐԳԻՍ.—Ուրախանալ, աղջիկս, ուրախանալ. այժմ քո ուրախանալու ժամանակն է:

ՆԻՆԱ.—Ով ուզում է թող ուրախանայ, ես ուրախանալու բան չունեմ:

ՍԱՐԳԻՍ.—Մի բան կայ, եթէ ասեմ, իսկոյն դու էլ կուրախանաս:

ՆԻՆԱ.—Խնդրեմ:

ՍԱՐԳԻՍ.—Այդ տեսակ լուրերը ձեր չեն ասում, աչքալուս եմ առնում՝ յետոյ:

ՆԻՆԱ.—Ես ի՞նչ ունեմ, որ Ձեզ աչքալոյս տամ:

ՍԱՐԳԻՍ.—Նինա, դու շատ սառն ես խօսում ինձ հետ, աչքալոյսը ես առանց քո տալուդ էլ կառնեմ: (Մօտենում է, Նինային համբուրում): Ահա իմ աչքալուսէքը: Այժմ հարցրո՞ւ ես կասեմ:

ՆԻՆԱ.—Ասացէք, ես լսում եմ:

ՍԱՐԳԻՍ.—Աղջիկս, դու շատ բախտաւոր ես. Աստուած տայ միշտ էլ բախտաւոր լինես: Այս քանի օրէ Սահակ Վարդանովիչը կպել է հախէս, թէ Նինային պէտք է ուզեմ Գրիգորիս համար: Ես կարծում էի կատակ է անում, բայց այսօր, երբ նրանց խանութումն էի շատ խնդրեց, աղաչեց, որ համաձայնեմ. ասում է, եթէ Նինային Գրիգորին չտաք, կխեղազրուի տղաս. յետոյ էլ Գրիգորն ինքն եկաւ, խնդրեց, աղաչեց, որ համաձայնեմ: Ես էլ խղճացի նրանց, խօսք տուեցի. վաղն էլ գալու են մեր տուն նշան դնելու: Հիմա հասկացար. լաւ նորութիւն է չէ: Նինա, դէ համբուրիր հօրեղբորդ, որ դու տանը նստած, քեզ համար այդպիսի փեսացու է գտել:

ՆԻՆԱ.—(Գլուխը կախ, լուռ կանգնած է):

ՍԱՐԳԻՍ.—Հը՞, ինչո՞ւ ես լուռ, միթէ ուրախանալու բան չէ:

ՆԻՆԱ.—Ո՛չ. այդտեղ ինձ համար ուրախանալու բան չկայ:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչպէս թէ չկայ, միթէ աղջիկը մարդու գնալիս չի ուրախանում:

ՆԻՆԱ.—Այդ տեսակ Կիկօներն երբէք ինձ չեն ուրախացնի:

ՍԱՐԳԻՍ.—Հապա դու հիմա ես գնալու:

ՆԻՆԱ.—Առայժմ ոչ ոքի. ես այժմ սովորել եմ ուզում:

ՍԱՐԳԻՍ.—Որքան սովորեցիր բաւական է, մեր գլխին դու փիլիսոփայ չես դառնալու:

ՆԻՆԱ.—Մինչև գիմնազիան չաւարտեմ, մարդու չեմ գնալու:

ՍԱՐԳԻՍ.—Գիմնազիան աւարտելը հարկաւոր չէ. այժմ լու ժամանակն է ե պէտք է մարդու գնաս:

ՆԻՆԱ.—Ես չեմ գնայ:

ՍԱՐԳԻՍ.—Իսկ ես ասում եմ պէտք է գնաս:

ՆԻՆԱ.—Իսկ ես էլ ասում եմ չեմ գնայ:

ՍԱՐԳԻՍ.—Ես խօսք եմ տուել արդէն ե պէտք է գնաս, հասկանում ես:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ինչո՞ւ ես աղջկանը ստիպում, տեսնում ես չի ուզում:

ՍԱՐԳԻՍ.—Յիմար, յիմար մի խօսիր, նրա խելքն ի՞նչ է կտրում, նրա կամքին եթէ թողնես, նա շատ բան կտա:

ԴԱՐԵԱ.—Սերգէյ, լաղրիչ, խնդրում եմ, աղջկաս մի ստիպէք. ես ես համաձայն չեմ:

ՍԱՐԳԻՍ.—Դու ինչացու ես, որ համաձայնուես կամ չհամաձայնուես. կին ես գնա քո գործին. կնոջ գործը խոհանոցում կերակուր եփելն է:

ԴԱՐԵԱ.—Ես խոհանոցում կերակուր կեփեմ, բայց ոչ ոք ինձ մայրական իրաւունքից չի կարող զրկել:

ՍԱՐԳԻՍ.—Ներողութիւն, տիկին, մինչև օրս այս տունը իմ կամքին էր ենթարկուում, եթէ այժմ Դուք էք հրամայելու, ասացէք ե Ձեզ կլսենք:

ԴԱՐԵԱ.—Ես չեմ ուզում, որ Դուք իմ կամքին ենթարկուէք, բայց ե իմ աղջկայ վրայ ոչ ոք բռնանալու իրաւունք չունի:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Սարգիս, խնդրում եմ այս գործում դու մեզ զիջիր, ուրիշ գործերում ի՞նչ ուզում ես արա:

ՍԱՐԳԻՍ.—Խօսք եմ տուել, չեմ կարող:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Հօրեղբայր, ինչպէս կարելի է ոչ ոքից չհարցրած խօսք տալ:

ՍԱՐԳԻՍ.—Իսկ դու որ խնդիր ես տուել ե ուզում ես Պետրբուրգ գնալ համալսարանում սովորելու համար: Ինչո՞ւ դու առանց ինձ հարցնելու ուզում ես Պետրբուրգ գնալ սովորելու, իսկ ես առանց ձեզ հարցնելու չեմ կարող աղջիկ մարդու տալ: Հասկանում ես, որ առանց իմ իրաւունքի չես կարող փողերս ծախսել:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Այդ փողերի մի մասը հօրս աշխատանքն է:

ՍԱՐԳԻՍ.—Օհ, դու գիտ շատ բաներ էլ կարող ես ասել, բայց այս աշխարհում օրէնք կայ, դատաստան կայ: Հայրդ իմ ընկերը չէ, նա մի հասարակ ծառայ է, այդ ամբողջ քաղաքն էլ գիտէ: Նրա ուսմի տարեկան ամենաշատը չորս հարիւր ռուբլի է, բայց ես ճիկը տարեկան ամենաշատը չորս հարիւր ռուբլի է, բայց ես ճիկը խղճալով իբրեւ կղբօր ձեզ էլ մօտս եմ առել ե տարեկան նրան խղճալով իբրեւ ծախսել եմ: Սրանից աւելի լաւաւ չորս հազար ռուբլուց աւելի ծախսել եմ: Սրանից աւելի լաւաւ թիւն չեմ կարող անել: Այժմ յայտնում եմ, որ չեմ կարող քեզ թիւն չեմ կարող անել: Այժմ յայտնում եմ, որ չեմ կարող քեզ փող տալ որ գնաս Պետրբուրգ, քո գնալուց յետոյ էլ երեւի փող տալ որ գնաս Պետրբուրգ, քո գնալուց յետոյ էլ երեւի քոյրդ կուղենայ գնալ, այդ հարկաւոր է արդէն:



լաւ լսէք բոլորդ էլ, եթէ չէք ուզում իմ պահանջը կատարել, ահա դուռը բաց է, դուրս գնացէ՛ք, այնուհետեւ ինչ ուզում էք արէ՛ք:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Լաւ գնամ, բայց ռւր գնամ, ի՞նչ անեմ, հօ չեմ գնալու մուրացկանութիւն անելու, տնւր ինձ մեր ունեցածից գոնէ երեքից մի մասը և հէնց այժմ կերթամ:

ՍԱՐԳԻՍ.—Դու ոչ մի մաս չունես ստանալու, եթէ լաւ հաշուենք մի քանի հազար ուրբի էլ ինձ պարտ ես, այդ էլ չեմ ուզում, միայն գնա, թող իմ տունը, թող հեռացիր:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Եթէ դու մեղ հետ այդպէս վարուես, ես քո դատաստանը իմ ձեռքովս կանեմ:

ՍԱՐԳԻՍ.—Օհօ, չգիտէի, որ դու այդտեսակ առիւծ ես, բայց ես էլ այդ խօսքերից վախեցողը չեմ, լաւ մտածի, տես ի՞նչ ես ասում, մէկ էլ այդպէս խօսել ես, ես քեզ ցոյց կտամ: (Մինան եւ Դարեան սկսում են լալ):

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Որդիս, հանգստացիր, այդպէս մի խօսիր հօրեղբորդ հետ. չարը չարով չի վերջանայ (Սարգսին): Այժմ քո պահանջն ի՞նչ է:

ՍԱՐԳԻՍ.—(Յոյց տալով Մինային) Այս աղջիկը լաց լինելիս կարծես ինձ վրայ կրակ են լցնում: Ես ձեզ պէս յամառ չեմ, վաճառական մարդ եմ, հարկաւոր տեղը գիշել գիտեմ: Ես ձեզ հետ նորից կարող եմ հաշտուել, դու կարող ես դարձեալ խանութում աշխատել, միասին կապրենք, ինչպէս առաջ. Պաւլուշան էլ եթէ ուզում է Պետերբուրգ գնալ սովորելու, թող գնայ, բայց Նինային իմ կարծիքով չար չեմ կամենում, Նինայի մօտին իմ ասածս պիտի լինի:

ԴԱՐԵԱ.—Սերգէյ Լազրիչ, ձեռք վերցրէ՛ք, այդ բանը չպէտք է լինի:

ՍԱՐԳԻՍ.—Ես ձեզ հետ շատ երկար բարակ խօսելու ժամանակ չունիմ, իմ խօսքս խօսք է, կամ պէտք է դուք այս տան մէջ չլինէք, որ ես Սահակի առաջ պարզերես լինեմ, կամ պէտք է վաղը նշան դրէ՛ք լինի: (գնում է):

ՏԵՍԻՒ 9.

Եարութիւն, Դարեա, Պաւլուշա եւ Մինա:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Է՛հ հայրիկ, հայրիկ. այդ Կայէնը մեր ընտանիքը ցիր ու ցան կանի. գոնէ թոյլ տար ուսումնա վերջացնէի, այդ կլինէր քո քսան տարուայ աշխատութեան վարձը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ի՞նչ արած որդիս, անցածը յետ դարձնել չի լինի. քիչ է ֆուլ ցնորուեմ, բայց ի՞նչ կարող եմ անել:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Միթէ գոնէ մի քանի հազար ուրբի չի տայ, որ այս գործից էլ, տանից էլ հեռանանք:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Եթէ նա մեր ունեցածից հինգից մի մասն ինձ տար, ես վաղուց հեռացած կլինէի, բայց ոչ տալիս է, ոչ էլ թողնում, որ հեռանամ:

ԴԱՐԵԱ.—Ապա մեր վերջը ի՞նչ կլինի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ես ինքս էլ չեմ իմանում:

ԴԱՐԵԱ.—Բայց չէ՞ որ նա ասաց, եթէ իր ասածը կատարենք տանից չի վերադառնա, Պաւլուշան էլ կերթայ Պետերբուրգ: Ա՛խ, Տէր Ստուած: Նինան, սիրելիս, գուցէ դու կհամաձայնես Գրիգորին առնել, այն ժամանակ մենք միառժամանակ հանգիստ կլինենք:

ՆԻՆԱ.—Մայրիկ, ինչո՞ւ սիրելի ես անուանում, աւելի լաւ չէ՞, առանց սիրելի անուանելու ջուրը ձգես ինձ:

ԴԱՐԵԱ.—Ի՞նչ անենք հապա, Նինա ջան, ի՞նչ հողը տանք մեր գլխին, ուր գնանք:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Մայրիկ, ես Կայէնի ճանկերում եմ գտնում, բայց երբէք ինձ թոյլ չեմ տայ Կայէն դառնալ. ես համաձայն չեմ, որ քոյրս ինձ համար գոհուի, այդ միջոցով ուսումնա շարունակել չեմ ցանկանում:

ՄԱՇՕ.—(Սախաւենեակից). Պարոնը և տիկինը ձեզ սպասում են սեղանատանը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Գնանք, տեսնենք, գուցէ ճաշից յետոյ սիրտը ողորմութիւն ընկնի:

ՆԻՆԱ.—Դուք գնացէ՛ք, ես չեմ գալու:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Ես էլ չեմ գալու:

ԴԱՐԵԱ.—Պաւլուշա գնանք. նա քեզ վրայ է շատ նեղացել, գնանք, բայց ի սէր Ստուծոյ, մի քիչ փափուկ խօսիր, թէ չէ մեր վերջը վատ կլինի:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Գնանք, մայրիկ, գնանք, Կայէնի ոտքերը լիզելու: Մեռնելն աւելի լաւ չէ՞, քան այդքան ստորանալը:

ԴԱՐԵԱ.—Ճար չունինք, որդիս, ի՞նչ կարող ենք անել: (Գնում են քողորդ քացի Մինայից):

ՏԵՍԻՒ 10.

Մինա:

ՆԻՆԱ.—Աստուած իմ, Աստուած իմ. այս ի՞նչ դրութիւն է (ձեռքերով երեսը ծածկելով նստում է եւ սկսում է մտածել եւ ապա փոքր ինչ հանգստացած՝ ելնում է): Այո, այո, ես կարող եմ, ես պէտք է հանգստացած լինում է... խեղճ մայրիկ... Այո դժուար է, խիստ փրկեմ... խեղճ հայրիկ... Ես Կիկոյի կիցն... Ո՛չ, ոչ. անվերջ տանդժուար է. Ի՞նչպէս... Ես Կիկոյի կիցն... Օ՛... Իսկ ծնողներս, հապա եղջուհի, միշտ կեանքիս վերջը... Օ՛... Իսկ ծնողներս, հապա եղջուհի, միշտ կեանքիս վերջը...

բայրս, իմ սիրելի Պաւլուշան: Ո՛չ, անկարելի է թոյլ տալ, որ այնքան հոգի դժբախտանան իմ պատճառով: Պէտք է զոհուել. Կայէնը զոհ է պահանջում և այդ զոհը ես կը լինեմ (Նստում, լալիս է):

(Վարագոյր).

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է միջին մեծութեան, հասարակ կահաւորուած սենեակ, երկու դուռ ունի, մէկը մէջ տեղը, միւսը աջ կողմից: Անցել է երեք տարի առաջին գործողութիւնից յետոյ:

ՏԵՍԻՂ 1.

Յարութիւն, Դարեա և Պաւլուշա:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.— (Բազմոցի վրայ նստած ծիւում է). Տէր Աստուած, այս թիւն օրի հասանք. շատերն են ասում՝ դառն աշխատեցինք դատարկ մնացինք, բայց ինձ նմանը հազիւ թէ գտնուի: Քոան տարի շարունակ օր ու գիշեր աշխատել, ամեն տեսակ նեղութիւններ կրել, անագին հարստութիւն ձեռք բերել և վերջն էլ առանց կուպէկի փողոց դուրս շարտուել... Թիւն է այժմ իմ օրը. աշխատելու ոյժ չկայ այլևս: Գոնէ մի քանի հազար ռուբլի էլ չտուեց, որ մի գործ սկսեմ: Իմ յիմարութիւնը տես, խեղճ աղջկաւ աղի արցունքներ թափել տալով մարդու տուի, էն անպիտանին հաւատալով, որ տանից դուրս չի տնի, բայց այդ զոհն էլ իզուր անցաւ: Ա՛խ իմ մեամտութիւնս, իմ իզուր տեղը հաւատալս: (Մերս է մտնում Դարեան):

ԴԱՐԵԱ.— Յարութիւն, դուցէ մի բաժակ սուրճ կիւմես, դու ամբողջ օրերով ոչինչ չես ուտում, այդպէս չի կարելի, դու ուժասպառ ես եղել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Ձեմ կարող, ախորժակ չունեմ, սիրելիս:

ԴԱՐԵԱ.— Յարութիւն ջան, ինչո՞ւ ես այդքան մտածում: Պաւլուշան հազիւ մի քանի օրով արձակուրդի է եկել, քո տխրութիւնը տեսնելով, նա էլ է ախրում: Քանի նա մեզ մօտ է գոնէ ուրախ ձեացիր, որ աղան ուրախ սրտով Պետերբուրգ վերադառնայ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Պաւլուշան իմ պահապան հրեշտակն է, իմ այս դառն օրերի մխիթարութիւնը, երբ նա տանն է լինում, ես արդէն բոլոր ցաւերս մոռանում եմ: Բայց թիւնս մոռանամ մեր այս դրութիւնը, թիւնս ձեանամ, որ ուրախ եմք, երբ կորցրինք մեր քան տարուայ աշխատանքը, այն անագին հարստութիւնը:

ԴԱՐԵԱ.—Սատանան այդ հարստութեան հետ: Ի՞նչ արած, աղքատ էլ կապ-
րենք, դու ասայ յաջողութիւն լինի. միայն դու հանգստացիր. ես
քո առողջութիւնից եմ վախենում: Ի՞նչ կայ որ, փոքր երեխա-
խաներ չունենք, մի կերպ կաշխատենք, որ Պաւլուշան ուսումն
աւարտի, Նինան էլ արդէն մարդու է գնացել: Ա՛խ իմ խեղճ
աղջիկս (լալիս է):

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ես ամենից քիչ Պաւլուշի մասին եմ մտածում. նա խելօք
տղայ է, ինչպէս էլ լինի ինքն իրեն ճանապարհը կգտնի, կաշ-
խատի աւարտել: Ինձ աւելի Նինայի հոգսն է տանջում: Խեղճ
աղջկան ստիպեցինք գնալ այն ապուշին, նրա ծնողներն էլ այն-
քան կոպիտ են, որ ինձ թւում է թէ դժուար Նինան մինչև
վերջը համբերի: Վախենում եմ աղջիկս յուսահատուի և մի վատ
բան դուրս գայ:

ԴԱՐԵԱ.—Աստուած ողորմած է, ոչինչ չի լինի: Վերջապէս ինչ լինելու է
կլինի, մտածելով ոչինչ չես կարող փոխել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Է՛ր Դարեա, այսքան տանջանքներ կրել, այսքան զոհաբե-
րութիւն անել և վերջն էլ այսօրն ընկնել, ո՛չ, դժուար է, դժ-
ուար:

(Ներս է մտնում միջին դռնից Պաւլուշան):

ԴԱՐԵԱ.—Լաւ ժամանակի հասար, Պաւլուշա ջան, այժմ սուրճ ենք խմելու:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Մայրիկ, սուրճ խմելու ժամանակ չունեմ, շտապ գործ կայ
պէտք է գնամ. եկայ ասելու, որ ինձ չսպասէք:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ի՞նչ կայ որ, սուրճ խմիր յետոյ կերթաս:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Հայրիկ, ժամանակ չունեմ, խօսք եմ տուել, կարող եմ ուշա-
նալ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Նստիր, ոչինչ, չես ուշանայ. եթէ դու չմտաս, ես էլ սուրճ չեմ
խմի:

ԴԱՐԵԱ.—Մնա, որդիս, հայրիկդ օրերով ոչինչ չի ուտում, նստիր, գոնէ
մի բաժակ սուրճ կխմէ:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Դէ, լաւ, լաւ, թող ձեր ասածը լինի: (Դարեան գնում է):
Հայրիկ, ինչո՞ւ ոչինչ չես ուտում, չլինի թէ հիւանդ ես:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Հիւանդ չեմ, բայց ախորժակ չունեմ ուտելու:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Հայրիկ, տեսնում եմ շատ ես մտածում, ի՞նչու, ի՞նչ կարիք
կայ այդքան տանջուելու: Փառք Աստուծոյ, այնքան էլ դժբախտ
չենք, ինչքան դու ես կարծում: Ինչպէս էլ լինի դուք այստեղ
մի կերպ կապրէք. իմ աւարտելուն էլ մի տարի մնաց. մի տա-
րուց յետոյ այլևս հոգս չես ունենայ: Այժմ կաշխատեմ ձեզ ամ-
սական մի բան ուղարկել, անհոգ եղիր:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ի՞նչ ես ասում, որդիս, փոխանակ մենք քեզ փող ուղարկե-
լու, դու ես ուզում մեզ ուղարկել: Պետերբուրգ այնքան թանկ
տեղ է, որ ամեն քայլափոխի փողի կարիք կայ. դու որ ուտումդ

վերջացնես, այդ էլ մեզ բաւական է:

(Ներս է մտնում Դարեան 3 բաժակ սուրճ ձեռին):

ԴԱՐԵԱ.—Այդ ի՞նչ էիք խօսում: Յարութիւն աչք ունքդ մի քիչ բացուել է:
ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Դարեա, Պաւլուշան ինձ ուզում է երիտասարդացնել. ու-
րախութիւնիցս չեմ իմանում ի՞նչ անիմ: Պաւլուշա ջան, չկարծես
թէ նրա համար եմ ուրախ, որ խոստանում ես փող ուղարկել,
հէ, այլ որ քեզպէս խելօք որդի ունիմ:

ԴԱՐԵԱ.—Այդ ի՞նչ զարմանալի բաներ ես խօսում, Պաւլուշա ջան, այս ի՞նչ է
ասում հայրդ:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Մայրիկ, զարմանալու բան չկայ: Այս քանի՛ ամիս է ինձ փող
չէք ուղարկել, բայց ես և ապրել եմ և սովորել և դեռ ճանա-
պարհածախս էլ ճարել ու եկել տուն:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ես էլ հէնց դրա վրայ եմ զարմանում, ախր այդ փողերը
ճրտեղից ես ստանում:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Այժմ Պետերբուրգում ես ամսական յիսուն ռուբլու մասնա-
ւոր դասեր ունիմ, կարիքի դէպքում կարող եմ ուսանողական
գանձարանից պարտք վերցնել: Այժմ էլ հէնց այդ տեսակ մի
խնդրի համար եմ շտապում:

ԴԱՐԵԱ.—Ո՛ւր, ի՞նչի համար:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Այստեղ երկու դիմնադիւսներ կան, իմ ժամանակ մեր գիմ-
նադիւսում էին սովորում, այժմ տեղափոխւում են Պետերբուրգ.
Իրենք թոյլ են սովորում, ուղում են, որ մէկը իրենց հետ պա-
րապի վերջնական քննութիւն տալու համար: Եթէ յաջողութի
նրանց հետ պարապելու գործը, այն ժամանակ արդէն ապահով
եղէք. ես էլ կաւարտեմ, ձեզ էլ կօգնեմ:

ԴԱՐԵԱ.—Պաւլուշա ջան, այդ ի՞նչ ես ասում, դու մեր մխիթարութիւնն ես.
որ ու գիշեր քո մասին ենք մտածում, քո աւարտելուն ենք սպա-
սում, աչքներս ճանապարհին է միշտ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Պաւլուշա ջան, չէ՞ որ այդքան դասեր վերցնելով քեզ
կտանջես, ինքդ էլ ժամանակ չես ունենայ քո դասերով պարա-
պելու: Մեզ փող պէտք չէ, դու քեզ մի տանջիր:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Վնաս չունի, հայրիկ, միայն դու քեզ հանգիստ պահիր, որ
մայրիկն էլ չտանջուի. դուք որ առողջ լինէիք, ամեն բան կար-
գին կլինի: Դէ, ես գնում եմ, չլինի թէ ուշանամ: (Գնում է):

ՏԵՍԻԼ 2.

Յարութիւն եւ Դարեա:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Աստուած, Դու իմ Պաւլուշային պահես. իմ կեանքից աս,
նրան տուր: Տեսա՛ր, Դարեա, ի՞նչեր էր խօսում:

ԴԱՐԵԱ.—Ես քեզ չէի ասում, Աստուած ողորմած է:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Այո, այժմ ես էլ հաւատում եմ, որ անբախտ չենք լինի մշտապէս:

ԴԱՐԵԱ.—Մեր Պաւլուշան մեր տանջանքների փոխարէն մեզ կերջանկացնէ, դեռ մեր զրկանքների վրէժն էլ կհանէ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Այդպէս մի խօսիր, Դարեա, լաւ չէ, ի՞նչու ես այժմեանից արդէն վրէժով լցւում:

ԴԱՐԵԱ.—Հապա մի յիշիր, տես ի՞նչեր էին բերում քո պատուական հղբայրն ու նրա կիներ մեր գլխին. հապա մի նինային յիշիր: Այս բոլորը միթէ կարելի է մոռանալ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Չարը չարով չի վերջանայ Դարեա ջան. մի տաքանայ, եկ մօտս, եկ, համբուրեմ և հանգստացիր: (Գրկում է եւ համբուրում):

ՏԵՍԻՒ 3.

Յարութիւն, Դարեա եւ Անտօն:

ԱՆՏՕՆ.—(Տեսնելով նրանց համբուրուելը) Ա... ահա թէ ի՞նչով էք զբաղուած: Ներողութիւն որ...:

ԴԱՐԵԱ.—Ֆիւհ, ի՞նչ վատ ժամանակի հասար:

ԱՆՏՕՆ.—Իմ բախտս այդպէս է միշտ. ամեն բանի վատ ժամանակին եմ հասնում: Խնդրեմ ինձանից չնեղանաք:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Նստի՛ր, Անտօն Իվանիչ, նստի՛ր. քեզանից ո՞վ է նեղանում. բարով հաղար բարի ես եկել:

ԱՆՏՕՆ.—Շնորհակալ եմ. (նստում է):

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Անտօն Իվանիչ, ափսոս որ մի քիչ շուտ չեկար, Պաւլուշային կտեսնէիր, այնպէս սիրտ տուեց, այնպէս մխիթարեց, որ քէֆս տեղն եկաւ:

ԱՆՏՕՆ.—Պաւլուշային ես փողոցում հանգիւղեցի հէնց այժմ, խնդրեց որ սպասեմ մինչև իւր վերադառնալը: Ճշմարիտ որ կարգին տղամարդ է դարձել. ապրի, ապրի նա:

ԴԱՐԵԱ.—Վաղուց է, Անտօն Իվանիչ, մեզ մօտ չէք եկել: Առաջները երբեմն գալիս էիք, ձեր ուրախ խօսակցութեամբ մեզ էլ ուրախացնում, իսկ այժմ չէք գալի, ի՞նչ է պատահել՝ չգիտեմ:

ԱՆՏՕՆ.—Դարեա Գրիգորենա, ուրիշ ոչ մի պատճառ չկայ բացի այն, որ սաստիկ զբաղուած եմ:

ԴԱՐԵԱ.—Չէ՞ք ցանկանայ մի բաժակ սուրճ:

ԱՆՏՕՆ.—Շնորհակալ եմ, նոր եմ խմել:

(Դարեան ժողովում է բաժակները եւ գնում):

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ծիւնք, Անտօն Իվանիչ:

(Անտօնը առնում է մի ծխախոտ եւ ծխում):

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Շուկայում ի՞նչ նորութիւն կայ:

ԱՆՏՕՆ.—Առանձին ոչինչ չկայ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Գործերդ ի՞նչպէս են:

ԱՆՏՕՆ.—Վնաս չունի. առանց բռնելու կանգնում ենք:

(Ներս է մտնում Դարեան եւ իւր տեղը նստում):

ԴԱՐԵԱ.—Անտօն Իվանիչ, ի՞նչ նորութիւն կայ քաղաքում, ի՞նչ էք անում, քէֆներդ ի՞նչպէս է:

ԱՆՏՕՆ.—Քէֆս տանու փէսի քէֆից մի քիչ լաւ է:

ԴԱՐԵԱ.—Դեռ չամուսնացած ի՞նչ գիտէք տանու փէսի քէֆը ի՞նչպէս է:

ԱՆՏՕՆ.—Ճշմարիտ է, չեմ ամուսնացել, բայց լսել եմ, գիտեմ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Իսկապէս, Անտօն Իվանիչ, ինչո՞ւ չես ամուսնանում:

ԱՆՏՕՆ.—Չարժէ այսուհետեւ ամուսնանալ. իմ ժամանակն արդէն անցաւ:

ԴԱՐԵԱ.—Ընդհակառակը, հէնց այժմ է Ձեր ամուսնանալու ժամանակը:

ԱՆՏՕՆ.—Այդ մի կողմը թողնենք, այդ ապագայի խնդիր է:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ամուսնութիւն ասիք միտքս ընկաւ. այս գիշեր մեր Շողոսի կաթի աղկան նշան պէտք է դնէին դու այնտեղ էիր թէ՞ ոչ:

ԱՆՏՕՆ.—Այնտեղ էի. դուք ինչո՞ւ չէիք եկել:

ԴԱՐԵԱ.—Մեզ էլ հրաւիրել էին, բայց չուզեցինք գալ. սիրտ չի մնացել ուրախանալու:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Լաւ, ուրախ ժամանակ անցկացրի՛ք թէ չէ:

ԱՆՏՕՆ.—Վնաս չունի, լաւ էր:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Անպատճառ դու թամազա եղած կլինես:

ԱՆՏՕՆ.—Հէնց թամազա լինելուս պատճառով էլ այստեղ եմ եկել:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ի՞նչպէս:

ԱՆՏՕՆ.—Լսէք թէ ինչպէս: Երբ Սարգիսը ձեզ դործից, տանից զրկեց և դուրս արտւ, մի քանի կեղծաւորներ, իրենց խղճի հակառակ, նրան դուր գալու համար արդարացնում էին նրան. բայց կան և այնպիսիները, որոնք նրա այդ անխղճութեան համար արհամարհում են. Սարգիս ձեզ հետ այդպէս ամարդի վարուելու օրից աչքով աչք չունեմ նրան տեսնելու:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Շնորհակալ եմ, Անտօն Իվանիչ, ես քեզ միշտ իմ լաւ բարեկամներից եմ համարել:

ԴԱՐԵԱ.—Աստուծ էլ դիտէ, որ ես Ձեզ իմ զաւակներից չեմ տարբերել, միշտ եղբօր նման սիրել եմ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Միշտ էլ ասել եմ, որ Անտօն Իվանիչի նման մեր շուկայում ճշմարտախօս, ամեն բան ճակատին ասող մարդ չկայ:

ՏԵՍԻՒ 4.

Յարութիւն, Դարեա, Անտօն եւ Նինա:

(Նինան ներս է մտնում հասարակ զգեստով, սեւ շալ ձգած զընկիւն):

ԴԱՐԵԱ.—Նինա, այդ դու ես, եկ, նստի՛ր:

ԱՆՏՕՆ.—(Հսկելով Նինայի անունը ոտքի է կանգնում):

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Նինա, եկ, այստեղ նստի՛ր. ինչո՞ւ ես ամաչում, հօ Անտոն
Իվանիչը օտար չէ:

ՆԻՆԱ.—(Թողորին ըստեղծուց յետոյ նստում է):

ԴԱՐԵԱ.—Երէկ Պաւլուշան քեզ մօտ եկաւ, տեսա՛ր:

ՆԻՆԱ.—Տեսայ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Պաւլուշան քանի այստեղ է, շուտ շուտ եկ մեզ մօտ, տես
եղբօրդ:

ՆԻՆԱ.—Այսօր էլ ձեզ մօտ չէի գալու, հէնց այնպէս եկայ:

ԱՆՏՕՆ.—Ի՞նչպէս է Ձեր առողջութիւնը, Նինա Արամեանա:

ՆԻՆԱ.—Լաւ է, Անտոն Իվանիչ, շնորհակալ եմ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Անտոն Իվանիչ, խօսքդ չվերջացրիր, կարծեմ, երէկուայ պա-
տահածի մասին:

ԴԱՐԵԱ.—Իսկապէս հետաքրքիր է, խնդրեմ շարունակէ՛ք:

ՆԻՆԱ.—Ի՞նչ է պատահել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ես հազար անգամ ասել եմ, որ մեր սիրելի ու հաւատա-
րիմ բարեկամը Անտոն Իվանիչն է: Երեկոյեան Շողակաթինց
տանը նշանդրէքի ժամանակ Սարգսի հետ ունեցած խօսակցու-
թիւնն է պատմում:

ԱՆՏՕՆ.—Ամբողջ գիշերը, թղթախաղի, պարի ժամանակ իմ յարաբերու-
թիւնը Սարգսի, կնոջ և որդոց հետ լարուած էր. չգիտեմ ինչո՞ւ
էի այդպէս վատ տրամադրուած: Ընթրիքի ժամանակ, երբ ինձ
թամազա ընտրեցին, սկսեցի կարդով կենացնիր առաջարկել.
խմեցինք նաև ձեր կենացը, իբրև հարսի քեռու և մօտիկ ազգա-
կանի կենացը: Այստեղ ես տաքացայ և սկսեցի դուրս թափել,
այն բողբոջ, որ սրտումս հաւաքուել էր Սարգսի դէմ: Պատմեցի
ձեր անցիակը և այն բոլոր զրկանքները, որ Սարգիսը ձեզ հա-
ցրել է: Սարգիսը տաքացաւ, սկսեց իմ դէմ բողբոջել, բայց այդ
աւելի վատ եղաւ իրեն համար: Շատերն ինձ հետ միացան և ինձ
պաշտպանեցին:

ԴԱՐԵԱ.—Շնորհակալ եմ, Անտոն Իվանիչ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Յետո՛յ:

ԱՆՏՕՆ.—Յետոյ այն երեկոն մի կերպ անցրինք. այսօր առաւօտեան մինչև
խանութ գնալու Սարգիսը մի քանի անգամ մարդ ուղարկեց և
իւր մօտ հրաւիրեց, չգնացի, յետոյ էլ ինքն եկաւ:

ԴԱՐԵԱ.—Ինչո՞ւ էր եկել, ի՞նչ էր խօսում:

ԱՆՏՕՆ.—Ո՞վ է հասկանում. սկսեց երկմը, բարակ խօսել. բայց ես նրա
ամեն մի խօսքի պատասխանը տալիս էի, տեղն ու տեղը լու-
ցնում էի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ախր ի՞նչ էր ուղում, ի՞նչ էր ասում:

ԱՆՏՕՆ.—Ասում է, ինչո՞ւ եմ իզուր իրեն անպատուում. նա բոլորովին մը-
տադիր չէ Ձեզ զրկել. իհարկէ չի ուղում իբրև եղբօր կամ ըն-

կերոջ Ձեզ իւր ունեցածի կէսը տալ, բայց համաձայն է մի փոքր
գումար տալ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ինչքան է ուղում տալ:

ԱՆՏՕՆ.—Ձեռնի գումար է, խօսել էլ չարժէ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Վերջապէս ի՞նչ գումար է:

ԱՆՏՕՆ.—Տասը հազար ուրբի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ես դրան էլ համաձայն եմ. թող տայ, գոնէ մի կերպ կապ-
րենք, մինչև տեսնենք վերջն ի՞նչ է լինելու:

ԱՆՏՕՆ.—Բայց նա ուղում է նստարի միջոցով տալ, Ձեզանից ստորագրու-
թիւն առնել, որ Ձեր մասը լիովին ստացաք և այլևս ոչ մի պա-
հանջ չունէք:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Զի՞ որ ասում էր, թէ ոչ մի իրաւունք չունիմ նրանից մաս
պահանջելու, հապա այդ ի՞նչ է, ինչո՞ւ է ստորագրութիւն պա-
հանջում:

ԱՆՏՕՆ.—Նրա խօսակցութիւնից երևում է, որ ապագայից է վախենում,
ինչ որ գրութիւններից: Նա գիտէ, որ Պաւլուշան շուտով հա-
մալսարանը կաւարտէ և կարող է իւր դէմ դատ բանալ և խոյ-
տառակել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ահա թէ ինչ. ուրեմն Պաւլուշայից վախենում է:

ԱՆՏՕՆ.—Ի՞նչպէս չվախենայ, քանի որ Ձեր մասից երկու հարիւր հազարի
հոտ է գալի:

ԴԱՐԵԱ.—Փառք Քեզ Աստուած, ուրեմն անաէր չենք. տեսնում ենք այն օ-
րը, երբ թշնամին մեզանից վախենում է:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—(Բիչ մտածելուց յետոյ). Դարեմ, թշնամին վախենում է,
թող վախենայ, այդ լաւ է, բայց մտքումս մի սարսափելի միտք
յղացաւ:

ԴԱՐԵԱ.—Ի՞նչ սարսափելի միտք:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Կարող է վատ բան պատահել:

ԱՆՏՕՆ.—Ի՞նչ կարող է պատահել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Իսկապէս երկու հարիւր հազար ուրբին հեշտ բան չէ, այդ-
պիսի գումարի համար կարելի է վատ միջոցների դիմել:

ՆԻՆԱ.—Հայրիկ, ի՞նչ եղաւ քեզ. ի՞նչ կայ ասան, մի ծածկիր:

ԴԱՐԵԱ.—Յարութիւն, այդ ի՞նչ տեսակ մարդ ես, մինչև մի բան ես ասում
մարդու հոգի ես հանում ուղղակի:

ԱՆՏՕՆ.—Արտեմ Լազրիչ, իսկապէս ես էլ անհանգստանում եմ. ի՞նչ է պա-
տահել, ի՞նչ էք մտածում:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Պաւլուշայի կեանքից եմ վախենում...

ԱՆՏՕՆ.—Իրչո՞ւ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Իսկապէս երկու հարիւր հազարը մի մեծ գումար է. իսկ
Կայէնը չի ուզենայ այդ փողից զրկուել և... կարող է, Պաւլու-
շային փառել:

ԴԱՐԵԱ.—Օ՛, այժմ հասկացայ, Աստուած իմ, ի՞նչ կարող է լինել:

ԱՆՏՕՆ.—Հանգստացէք, խնդրեմ, իզուր էք այդ մասին մտածում. նա չի համարձակուի այդ քայլն անել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Այդ Կայէնից ամեն բան կարելի է սպասել. նա ինքը չի անի, բայց կարող է կաշառել մի սրիկայի և իւր ուղածն անել:

ԴԱՐԵԱ.—Ի սէր Աստուծոյ, Անտոն Իվանիչ, օգնեցէք մեզ, վախենում եմ...

ԱՆՏՕՆ.—Հանգիստ եղէք, Դարեա Գրիգորեան, այդպէս բան չի կարող պատահել:

ՆԻՆԱ.—Մայրիկ, ինչեքիս հաւանում, ինձէլ ես վախեցնում,

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Այդ չար միտքը գլխիցս չի հեռանում. պէտք է Պաւլուշային ասել, որ շուտով Պետրոսովի վերադառնայ:

ՆԻՆԱ.—Տէր Աստուած, միթէ այդ Կայէնի ձեռքից երբէք չհնք ազատուելու. բաւական չէ ինձ դժբախտացրեց, այժմ էլ հղբօրս է ուղում փռասել: (Նախ իսկ):

ԱՆՏՕՆ.—Նինա Արտեմեան, ինչո՞ւ էք յուսահատւում, դեռ ոչինչ չկայ. Ձեր հայրիկը պատահական մի հնթադրութիւն է արել և արդէն լսւի՞ն էք:

ՆԻՆԱ.—Երևում է Աստուած ինձ արցունք թափելու համար է ստեղծել:

ԱՆՏՕՆ.—Ներեցէք, Նինա Արտեմեան, եթէ հարցնեմ, մի գուցէ Ձեր վիճակից դժգոհ էք:

ՆԻՆԱ.—Դժգոհ լինելը քիչ է, իմ կեանքն անտանելի է, անտանելի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Աղջիկս... միթէ նոր բան է պատահել:

ԴԱՐԵԱ.—Ի՞նչ է պատահել:

ՆԻՆԱ.—Ձարմանալի մարդիկ էք. իմ դրութեան մասին հարիւր անգամ ասել եմ, դարձեալ հարցնում էք ի՞նչ է պատահել:

ԴԱՐԵԱ.—Ի՞նչ կարող ենք անել, Նինա ջան. ճարտար ի՞նչ է, պէտք է համբերել:

ՆԻՆԱ.—Մայրիկ, համբերութեան բաժակն արդէն լցուել է, բայց ես փըրկութեան ճարը գտել եմ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Հը, ի՞նչ է եղել, ի՞նչ ճար:

ՆԻՆԱ.—Ձուրը...

ԴԱՐԵԱ.—Նինա, գտուել ես ի՞նչ է, այդ ի՞նչ ես ասում, սիրտս թուլանում է, Տէր Աստուած:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Հանգստացիր Դարեա, ի՞նչ կղաւ քեզ:

ԱՆՏՕՆ.—Նինա Արտեմեան, միթէ Ձեր դրութիւնն այդքան վատ է:

ՆԻՆԱ.—Վատն էլ աստիճաններ ունի, իսկ իմ դրութիւնը անտանելի է:

ԱՆՏՕՆ.—Այո... Ձեր մարդու գնալու ժամանակ, դժբախտաբար ես Օդեսսայ էի գնացել, երբ վերադարձայ և լսեցի, ուղղակի ցնցուեցի: Բայց երբէք չէի կարծում, որ այդքան դժբախտ կ'լինէի:

ՆԻՆԱ.—Ես ստիպուած մարդու գնացի: Ի հարկ է չէի սպասում այդ ապուշաների ընտանիքում երջանկութիւն գտնել, բայց այսքան էլ դժբախտ լինել չէի երեւակայում. և ինչո՞ւ, որովհետեւ Կայէնը նրանց խաբել է:

ԱՆՏՕՆ.—Ի՞նչ էք ուղում ասել:

ՆԻՆԱ.—Այն, որ Կայէնը ինձ այդ ապուշին տալիս խօստացել է տաւ և հինգ հազար ռուբլի օժիտ տալ, բայց վերջ ի վերջոյ տաւ և հինգ կոպէկ էլ չտուեց: Այժմ այդ Կիւզն մի կողմից, ծնողները միւս կողմից ամեն օր երեսովս են խփում այդ, կարծես ես եմ մեղաւորը:

ԱՆՏՕՆ.—Իզուր չէ, որ Սարգսին Կայէն էք ասում: (Դարեային): Հապա Դուք ի՞նչպէս համաձայնեցիք այդ բանին:

ԴԱՐԵԱ.—Մինք համաձայն չհնք եղել երբէք, բայց Կայէնը այնպէս էր կատաղել, որ վախենում էինք, հետը չէինք կարողանում խօսել: Եթէ Դուք այստեղ լինէիք, մեզ կ'օգնէիք և Նինան այս վիճակի մէջ չէր լինի:

ԱՆՏՕՆ.—Անիրաւ դժբախտութիւնը գալիս, առաջ իւր ճանապարհն է մաքրում: Օ՛հ, եթէ այդ ժամանակ այստեղ լինէի, ոչ միայն Նինան, այլ և ես էլ դժբախտ չէի լինի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ձեզ ի՞նչ պատահեց:

ԱՆՏՕՆ.—Պատահել անցել է, այժմ խօսելն աւելորդ է:

ԴԱՐԵԱ.—Նինա, աղջիկս, մի յուսահատուիր, Աստուած ողորմած է:

ՆԻՆԱ.—Մայրիկ, այդ Աստուած ողորմածն մի քանի տարի է որ լսում եմ բայց օգուտն ինչ է:

ԴԱՐԵԱ.—Է՛, Նինա, Նինա, ի՞նչ անէ քո խեղճ մայրը... (Յարութիւնին): Ձթողնես որ Նինան գնայ, ես գնում եմ խոհանոց գործ ունեմ. ներողութիւն, Անտոն Իվանիչ, այժմ կգամ: Օ՛հ Տէր Աստուած... (Գնում է):

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Նինա, դաւակա, այդքան մի տանջուիր. դու ոչ առաջինն ես ոչ վերջինը, կղածն եղել, անցել է: Եթէ նրանց մօտ չես ուղում մնալ այլևս մի գնա նրանց տուն, մեզ մօտ մնա. մի կտոր հաց երեի կ'լինի, կուտես:

ՆԻՆԱ.—Հայրիկ իմ տանջանքները վերջ չունեն, համբերութիւնս հատել է. չգիտեմ ի՞նչ ասեմ, ո՞ւր գնամ:

ԱՆՏՕՆ.—Նինա Արտեմեան, ինչո՞ւ էք այդքան վհատում, չէ՞ որ անբախտութեանը հետևում է բախտաւորութիւնը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Մի վհատիր դաւակա, մի վհատիր: Անտոն Իվանիչ, խնդրեմ Նինայի հետ խօսէք, գնամ Դարեայի մօտ հանգստացնելու, նա անպատճառ լաց է լինում: Ե՞րբ պէտք է վերջապէս այս տանից լացը վերջանայ. օֆ, օֆ, օֆ... (Գնում է):

ՏԵՍԻՍ 5.

Նինա և Անտոն:

ՆԻՆԱ.—Ճշմարիտ էք ասում, Անտոն Իվանիչ, պատահում է, որ անբախտ

տութիւնից յետոյ բախտաւորութիւն է գալի, բայց այդ կանանց համար չէ:

ԱՆՏՕՆ.—Կանանց կեանքում աւելի մեծ փոփոխութիւններ են պատահում, քան տղամարդկանց:

ՆԻՆԱ.—Իմ նկատմամբ ես երէք չեմ երեւակայում այդպիսի փոփոխութիւն: Երբեմն գլխիս մէջ այնպիսի մտքեր են ծագում, որոնք ինձ ուրախացնում են, բայց դրանք միայն մտքեր են, որոնք երբէք չեն իրականանայ:

ԱՆՏՕՆ.—Աշխատանք, Նինա Արտեմիւնա. աշխատանքի առաջ ամեն ինչ կը հալուի, այն ժամանակ Ձեր կեանքն էլ կը արդարանայ և կ'մոռանա այդ վատ մտքերը: Զուրն ընկնել... ինչո՞ւ, չէ՞ որ Դուք ծնողներ ունէք, չէ՞ որ Ձեր կորուստը մեծ ցաւ կ'արոգ է պատճառել:

ՆԻՆԱ.—Գիտեմ, այո՛. բայց ցաւն այն է, որ այս դրութիւնն էլ նրանց համար մեծ ուրախութիւն չէ: Երբեմն այնքան եմ բարկանում, որ ամեն բան մոռանում եմ, և ծնող և աղգական: Վիշտն ինձ խեղտում է և այդ լուպէին ոչ ոք ինձ համար թանկ չէ: Օ՛, ես էլ մարդ եմ... բայց ո՞վ է հետաքրքրւում իմ ցաւով, ո՞ւմ համար է թանկ իմ կեանքը...

ԱՆՏՕՆ.—Միթէ Դուք Ձեր բոլոր բարեկամներին ճանաչում էք. զո՞ւցէ կայ մէկը, որին Ձեր մահը աւելի մեծ ցաւ կ'պատճառէ, քան նոյն իսկ Ձեր ծնողներին և այդ մէկը ոչնչով մեղաւոր չէ Ձեր դժբախտութեան մէջ:

ՆԻՆԱ.—Հասկանում եմ, Ձեր խօսքը Պաւլուշայի մասին է. այն նա ոչնչով մեղաւոր չէ, նրան ես սիրում եմ և նա էլ ինձ է սիրում, բայց հազիւ թէ Պաւլուշի սիրոյ համար կ'արողանամ այս դառն օրերին դիմանալ երկար:

ԱՆՏՕՆ.—Գուցէ կայ և մի ուրիշը, որ իւր կեանքից էլ աւելի է սիրում Ձեզ:

ՆԻՆԱ.—Այդպիսի մէկին ոչ նկատել եմ և ոչ էլ երեւակայում եմ, որ լինի:

ԱՆՏՕՆ.—Ո՛չ, Նինա Արտեմիւնա, Դուք ամեն բան չգիտէք: Լսէք մի բան եմ ասելու Ձեզ: Ձեր ծանօթների մէջ եղել է մէկը, որ Ձեզ սիրել է իւր կեանքից էլ աւելի, երբ դեռ սովորում էիք: Նա իւր սէրը Ձեզ չէր յայտնում երկու պատճառով, նախ Ձեզ նա անչափահաս էր համարում երկրորդ՝ չէր ուզում Ձեր ուսումը խանգարել: Յիմար ինքնահաւանութիւնը նրա մէջ մեծ արմատներ էր ձգել. նրա կարծիքով իւր համար անկարելի բան չկար այս աշխարհում: Գուցէ նա սխալւում էր, բայց հաւատացած էր, որ կ'գայ ժամանակ և Դուք էլ նրան կ'սիրէք: Բայց... նրա երազները մնացին երազներ: Ձեր նշանադրութեան և պսակի ժամանակ նա գործով ուրիշ քաղաք էր գնացել, մինչև վերադառնալը ամեն բան վերջացել էր: Ի՞նչ ծանր օրեր էր անցկացնում նա, եթէ միայն տեսնէիք... Այնուհետև այլևս աւելորդ էր համարում

Ձեր առաջ իւր սիրտը բանալ, չուզեցնալով արատաւորել Ձեր ընտանեկան պատիւը: Բայց նա վճռել է ընդմիշտ Ձեզ սիրել և ոչ ուրիշին:

ՆԻՆԱ.—Ես ոչինչ չեմ հասկանում, Սնաօն Իվանիչ: Ձեզ էլ երեւի յայտնի է, որ իմ դժբախտ պսակից յետոյ ոչ մի տեղ գնալ գալու իրաւունք չեմ ունեցել, ծանօթների շրջանում չեմ եղել, իսկ ամուսնութիւնիցս առաջ զբաղուած եմ եղել դասերով. սիրելի, սիրելիու մասին երբէք չեմ մտածել: Ծշմարիտ է իմ, ծանօթների մէջ կային այնպիսիները, որոնց բարեկամութիւնը գերադասում էի, բայց Ձեր նկարագրածի նմանը երբէք չեմ տեսել: Է՛հ, անցան այն քաղցր օրերը, երեխայական անուշ յոյսերը. նրանց հետ կուրան նաև իմ գեղեցկութիւնը, թարմութիւնը. ես կ'մախք եմ դարձել, այժմ այս ցնցոտիների մէջ... ո՞վ կ'արող է ինձ սիրել:

ԱՆՏՕՆ.—Ազամանդը որքան էլ ցնցոտիների մէջ փաթթէք, դարձեալ ազամանդ է, նա երբէք իւր փայլը չի կորցնի:

ՆԻՆԱ.—Ազամանդի գեղեցկութիւնը կ'արելի է համեմատել մարդու հոգու հետ, իսկ արտաքինը...

ԱՆՏՕՆ.—Ծշմարիտ է, Ձեր հրաշալի գեղեցկութիւնից մնացել են Ձեր աչքերը իբրև փառաւոր անցեալի յիշատակ, որոնք սակայն շատ բան են ասում: Եթէ իմ խօսակցութիւնը Ձեզ չի ձանձրացնում, թող տուէք մի փոքրիկ համեմատութիւն անելու:

ՆԻՆԱ.—Խնդրեմ, ուրախութեամբ կ'լսեմ:

ԱՆՏՕՆ.—Եթէ Դուք չէք տեսել, գուցէ կ'արդացել էք, որ մեր հայրենիքում եղել են և կան բազմաթիւ հրաշակերտ վանքեր, հոյակապ տաճարներ, որոնց գեղեցկութիւնը, սիրուն քանդակները, շատ շատերին են զմայլեցրել: Մի ժամանակ սրանց մէջ ժամերգութիւն է եղել, քահանաները պատարագ են մատուցել, եպիսկոպոսները քարոզ են խօսել, հաղարաւոր ուխտաւորներ հեռաւոր տեղերից ուխտ են եկել այդ սրբավայրերը: Անցել են դարեր, թշնամիների հրոսակները կողոպտել, թալանել են ամեն ինչ. ժողովուրդը ցիր ու ցան է եղել, քարը քարի վրայ չէ մնացել: Բայց աղօթող հաւատացեալին ոչ ոք չի կ'արողացել հեռացնել իւր սրբավայրից: Եթէ այսօր էլ անցնելու լինէք այդ աւերակների մօտից կ'տեսնէք ծնկաչոք աղօթողների՝ մոմաւաճեղներ արտասանելիս մաւաղատ քարերի վրայ: Ի՞նչն է ստիպում նրանց այդ աւերակների մէջ կանգնել և աղօթել, եթէ ոչ աղօթելու պահանջը և անցեալի սէրը: Ձեր սիրահարը Ձեզ սիրում է այդ տեսակ հաւատացեալ աղօթողի սիրով. չնայելով հրաշակերտ տաճարի բեկորներն են մնացել, բայց նա միշտ պատրաստ է չոքել այդ մնացորդների առաջ, ջերմեռանդ սիրով աղօթել և համբուրել այդ բեկորները:

(Չորրորդ է Նինայի առաջ եւ ձեռքը բռնում):

ՆԻՆԱ.—(Զմայլուած այդ խօսակցութիւնից) Անտօն, եթէ տաճարը այնքան թանգ էր երկրպագուի համար, ինչպէս թոյլ տուեց, որ աւելի դառնայ:

ԱՆՏՕՆ.—Նինա, Դուք այնքան թանգ էք եղել Ձեր երկրպագուի համար, որ Ձեզ կորցնելուց յետոյ էլ նա Ձեզ երբէք չի մոռացել և հաւատարիմ է մնացել իւր սրբութեանը. (Սկսում է Նինայի ձեռքը համբուրել):

ՆԻՆԱ.—Անտօն, ի՞նչ էք անում...

ԱՆՏՕՆ.—Նինա, միթէ այնքան տանջանքների փոխարէն արժանի չեմ գտնէ ձեռքդ համբուրելու:

ՆԻՆԱ.—Արժանի ես, բայց ամէն բան արդէն վերջացել է...

ԱՆՏՕՆ.—Ո՛չ, ոչինչ չէ վերջացել, ամէն բան նոր է սկսուելու, ես Ձեզ բախտաւոր էի համարում, այդ պատճառով էլ լսել էի, այժմ տեսնում եմ, որ Դուք ինձանից աւելի անբախտ էք, յանուն Ձեր բախտաւորութեան ես այլևս չեմ կարող լռել:

ՆԻՆԱ.—Ուրեմն Դուք իմ անբախտութեան մասին ոչինչ չէիք իմանում, Դուք իմ կեանքով չէիք հետաքրքրուում:

ԱՆՏՕՆ.—Ձեր կեանքով միշտ էլ հետաքրքրուում էի, բայց Ձեր շրջանի հետ յարաբերութիւն չունէի և քեզ բան էի լսում Ձեր մասին: Է՛, անցածը անցել է, այժմ ապագայի մասին պէտք է մտածել և ես պատրաստ եմ իմ կեանքը զոհել:

ՆԻՆԱ.—Յանուն իմ բախտաւորութեան... ի՞նչ քաղցր խօսքեր, ի՞նչ գեղեցիկ յոյսեր, արդեօք կդա՞յ այն ժամանակը, երբ իմ պաշտած տաճարի առաջ կանգնած կազօթեմ: Անտօն, իմ սիրելի Անտօն, ես քեզ մանկութիւնից եմ սիրել, դու ինձ համար աւելի թանգագին դարձար, երբ քեզ կորցրի: Ո՛չ, ո՛չ, ես քեզ չեմ կորցրել. դու իմն ես, իմ սիրտս ինձ չէր խափում, միթէ այս իրողութիւն է. (սկսում է համբուրել Անտօնին):

ԱՆՏՕՆ.—Այո՛ Նինա, մեր բախտաւորութիւնը իրողութիւն է...

ՆԻՆԱ.—(Հեռանալով Անտօնից), Ներեցէք... ես ինքնամոռացութեան մէջ ընկայ, այդ ինչի՞ր էի խօսում:

ԱՆՏՕՆ.—(Մօտենալով) Միթէ Դուք ափսոսում էք. մեր այս բախտաւոր բողէները թանգ չէ՞ն:

ՆԻՆԱ.—Ո՛չ ոչ, ես... չեմ... ափսոսում... ներեցէք... ես... չեմ... ափսոսում... (Լսում է ոտնաձայն. միմեանցից հեռանում են, մտնում է Յարութիւնը):

ՏԵՍԻԼ 6.

Նինա, Յարութիւն և Անտօն.

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Մօրդ արտասուքն էլ հօ վերջ չունի, դարձեալ լալիս է և

չի հանգստանում, Նինա, խնդրում եմ նրա ներկայութեամբ այդպէս մի խօսիր, գնա սիրտ տուր հանգստացրու խեղճ է մայրդ:

ՆԻՆԱ.—Դարձեալ լաց, խեղճ մայրիկ, աչքերդ էլ ցամաքեցին այնքան լաց եղար, գնամ, հայրիկ, գնամ: (Դնում է):

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Անտօն իվանիչ, խնդրեմ համոզէք Սարգսին այդ տասը հազարը տայ, մի գործ սկսեմ:

ԱՆՏՕՆ.—Երևի այժմ ինքը կգայ Ձեզ մօտ խօսելու, տեսնենք:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ինքը՞, ինչպէ՞ս է գալի:

ԱՆՏՕՆ.—Կարծում է, որ ինքը Ձեզ աւելի հեշտ կարող է համոզել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ի՞նչ երեսով է գալու նա այսուհետև ինձ մօտ և միթէ կարծում է, որ այժմ էլ կհաւատամ նրան. անցան այն միամիտ ժամանակները:

ԱՆՏՕՆ.—Օ՛, նա որքան և իբրև մարդ ոչնչութիւն է, բայց իբրև վաճառական անփոխարինելի է, ինչ միջոցի ասես կդիմէ, միայն թէ համոզի իւր դիմացիներն:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ի՞նչ ես կարծում, տա՞մ այդ ստորագրութիւնը թէ ոչ:

ԱՆՏՕՆ.—Պէտք է, իմ կարծիքով, փաստաբանի հետ խօսել այդ մասին, շտապելու կարիք չկայ:

ՏԵՍԻԼ 7.

Յարութիւն, Անտօն, Դարեա և Նինա:

ՆԻՆԱ.—Ե՛կ, մայրիկ, եկ. յուսահատութիւնն ինձ ստիպեց սիրտդ ցաւեցնել: Այդ ապուշի հետ ապրելը ինձ համար դժոխք է. այսօր դուրս գալիս ասացի, որ հօրս տունն եմ գնում և այլևս չեմ վերադառնայ: Այժմ ինչ կուզէք արէք, ես նրա մօտ չեմ գնայ:

ԴԱՐԵԱ.—Ձէ, Նինա ջան, այդ վատ բան ես մտածել, եթէ մարդուդ թողնես, մեզ մօտ ապրես ո՞վ գիտէ հասարակութիւնն ի՞նչ կասէ:

ՆԻՆԱ.—Հապա ի՞նչ անեմ, ես հօ հասարակութեան ասէկօսէին ինձ չեմ գոհելու:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Մի բան պէտք է անել, այդպէս չի կարելի թողնել:

ԱՆՏՕՆ.—Գիտէ՞ք ինչ, ես իբրև Ձեր տան բարեկամ, կարծում եմ, որ իսկապէս նա այնտեղ այլևս անկարող է մնալ, կարող են զանազան անախորժութիւններ ծագել, աւելի լաւ է թող մի երկու երեք ամսում հաշուապահութիւն սովորի, որևէ գրասենեակում կարող ենք տեղ գտնել, այսպիսով իւր ճարը կգտնի, մինչև որ իւր մարդուց կբաժանուի կանոնաւոր ճանապարհով:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Իսկապէս լաւ միտք է, լաւ կլինի:

ԴԱՐԵԱ.—Այդ ինչի՞ր էք խօսում, մարդուց բաժանուածին այլևս ո՞վ կնուութեան կառնի:

ԱՆՏՕՆ.—Դարեա Գրիգորենա, այդ մասին շատ էլ մի մտածէք, մեր դա-
րում այդ նորութիւնն չէ: (Փամացոյցին նայելով): Օ՛, ես շատ
ուշացայ, դնամ: Այդ մասին յետոյ էլ կ'ստենք, ցտեսութիւն:
(Գնում է):

ՆԻՆԱ.—(Նստելից զնալով): Ե՞րբ կ'տեսնուենք:

ԱՆՏՕՆ.—Այսօր երեկոյեան գալու եմ Պաւլուշին տեսնելու, յոյս ունիմ, որ
այսօր կ'լինէք:

ՆԻՆԱ.—Ես Ձեզ կ'սպասեմ, անպատճառ եկէք:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Տեսնում ես ինչ լաւ մարդ է:

ԴԱՐԵԱ.—Լաւ է, բայց նրա վերջին խօսքերը չհաւանեցի:

ՆԻՆԱ.—Ինչո՞ւ, ի՞նչ կայ որ:

ԴԱՐԵԱ.—Ամուսնուց բաժանուելն ամօթ բան է:

ՆԻՆԱ.—Ի՞նչ ամօթի բան կայ, ամօթը չսիրելով ամուսնու մօտ մնալն է,
ի՞նչու էք ստիպում, որ կեղծեմ, ստեմ նրա առաջ, ամօթը կեղ-
ծելն ու ստելն է, իսկ ես պարզ կ'երպով ասում եմ, որ չեմ սի-
րում:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Մի գայրանար, գաւակս, ամեն բան լաւ կ'լինի:

ՏԵՍԻԼ 8.

Յարութիւն, Դարեա, Նինա եւ Սարգիս:

ՍԱՐԳԻՍ.—Բարե՛, երեւի չէիք սպասում ինձ: (Բարեկերպ յետոյ): Նստէք
ինչո՞ւ էք կանգնել:

ԴԱՐԵԱ.—Ներողութիւն, ես հիմա կ'գամ: (Գնում է):

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչպէս է առողջութիւններդ, ի՞նչպէս էք ապրում:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Չգիտեմ մեր առողջութիւնն ու ապրուստը ինչ կ'լինի:

ՍԱՐԳԻՍ.—Վնաս չունի, աշխարհում ամեն բան անցողական է: Անտոն
Իվանիչը ձեզ մօտ չեկան:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Եկաւ:

ՍԱՐԳԻՍ.—Է, ի՞նչ եղբակայութեան եկաք:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Առաջարկածդ պայմանով ոչ մի եղբակայութեան էլ չեմ
գայ:

ՍԱՐԳԻՍ.—Վնաս չունի, եթէ չես եկել, այժմ կ'գաս: Ես զիջող մարդ եմ,
արեւնը արիւնով չեն լուանայ, այլ ջրով. ես քեզ տասն և հինգ
հազար կտամ, դու էլ ինձ մի ստորագրութիւն կտաս, որ այլևս
ոչ մի պահանջ չունես ինձանից և ամեն բան կ'վերջանայ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Այդ տեսակ ստորագրութիւն չեմ տայ ես:

ՍԱՐԳԻՍ.—Յարութիւն, յամառ մի լինիր, մենք եղբայր ենք, թող այդ դա-
տարկ խօսակցութիւնը, եթէ ոչ մի կողմէ կ'չտամ, դու ոչինչ
չես կարող տնել ինձ, բայց չեմ ուզում մեր մէջ խռովութիւն
լինի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Եթէ այդպէս է ինչո՞ւ ես եկել, ինչո՞ւ ես առաջարկում:

ՍԱՐԳԻՍ.—Իբրեւ եղբայր ուզում եմ քեզ այս նեղ դրութիւնից հանել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Բաւական է ինչքան օգնեցիր, այլևս հարկաւոր չէ, մի օգ-
նիր:

ՍԱՐԳԻՍ.—Լաւ, լաւ, այդ հարցը թողնենք մի ուրիշ անգամուայ. դու յուզուած
ես երևում: (Դառնալով Նինային): Դու այստեղ ի՞նչ ես ա-
նում:

ՆԻՆԱ.—Այնպէս, եկայ մայրիկիս տեսնելու:

ՍԱՐԳԻՍ.—Մայրիկդ տեսնելու չես եկել, այլ ուրիշ բան կայ, ինձ ամեն
ինչ յայտնի է:

ՆԻՆԱ.—Ի՞նչն է յայտնի, ի՞նչ է եղել որ:

ՍԱՐԳԻՍ.—Կեսարդ ինձ ըստը պատմեց, երևում է դու չես կարողանում
ամուսնուդ հետ ետևի գնալ, այսօր կ'ուռես ես, թողել, եկել այս-
տեղ, այդ ի՞նչ է նշանակում:

ՆԻՆԱ.—Ոչինչ չի նշանակում, միայն այն, որ նրան չեմ սիրում:

ՍԱՐԳԻՍ.—Ձլինի՞ թէ ուզում ես ամուսնուցդ բաժանուել:

ՆԻՆԱ.—Ասենք թէ հէնց այդպէս, յետոյ:

ՍԱՐԳԻՍ.—Նինա, խելքդ դուրսդ ժողովիր, այդ ի՞նչեր ես խօսում:

ՆԻՆԱ.—Ի՞նչ կայ որ:

ՍԱՐԳԻՍ.—Այն կայ, որ քո վարմունքով մեր ամբողջ ցեղը կ'խայտառակես,
այնուհետեւ էլ ո՞վ մեզանից աղջիկ կ'առնի, չէս տեսնում ո՞րքան
մարդ ունենք մենք դեռ պսակելու, մարդու տալու:

ՆԻՆԱ.—Իսկ երբ ինձ այս տանջանքի մէջ էիք ձգում, ո՞վ մտածեց իմ մա-
սին, որ ես այժմ մտածեմ:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչ տանջանք, ո՞վ է մեղաւորը վերջապէս. եթէ դու այդպէս
բաներ անես, ի հարկէ կ'զգո՞հեն քեզանից:

ՆԻՆԱ.—Ո՛չ, ոչ, ես չեմ մեղաւորը, այլ Դուք, Ձեր խաբերայութեան պատ-
ճառով ես ինձ հալածում:

ՍԱՐԳԻՍ.—Այ քեզ նորութիւն, ի՞նչ խաբերայութիւն, ո՞վ, ո՞ւմ,

ՆԻՆԱ.—Դուք, նրանց, չէ՞ որ խօստացել էք նրանց ինձ համար օժիտ տասն
և հինգ հազար ռուբլի, իսկ այժմ չէք տալի, նրանք էլ ամեն օր
ինձ են նախատում:

ՍԱՐԳԻՍ.—Ահա թէ ինչեր են լցրել քո ականջը: Ինչո՞ւ պէտք է նրանց
տասն և հինգ հազար խօստանայի. եթէ քեզ համար այդքան
օժիտ տալու լինէի, էլ ինչո՞ւ էի այն յիմարին տալի քեզ: Հա՛,
հա՛, հա՛...:

ՆԻՆԱ.—Կեցցէս, հօրեղբայր. ամբողջ կ'համբու՞մք սուտ ես խօսել, այս ան-
գամ միայն ճիշտ ասացիր, որ յիմար է:

ՍԱՐԳԻՍ.—Չհամարձակուես ինձ ստախօս անուանել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ինչո՞ւ մարդկանց երեսին չասել այն, ինչ որ են:

ՍԱՐԳԻՍ.—Հը՛, չըլինի թէ դու էլ համաձայնես աղջկանդ հետ, որ մար-
դուց փախչի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Երբ հանգամանքները ստիպում են, ուրիշ ելք չկայ:
 ՍԱՐԳԻՍ.—Այսպէս դուք մեր ցեղն ուղում էք խայտառակել:
 ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Մեր ցեղը խայտառակելու համար դու միայնակ էլ բաւա-
 կանես:

ՍԱՐԳԻՍ.—Դու շատ համարձակ ես խօսում գիտե՞ս...
 ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ի՞նչ, ուղում ես վախեցնել, կողոպտելուց յետոյ, էլ ի՞նչ
 կարող ես անել, էլ ի՞նչ է մնացել, որ վախենամ:

ՆԻՆԱ.—Հայրիկ, մի գայրանար, չարժէ նրա հետ խօսել:

ՍԱՐԳԻՍ.—Ես քեզ այլևս ոչ մի կողէկ չեմ տայ, հասկացա՞ր:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Եթէ կարող ես մի տուր:

ՍԱՐԳԻՍ.—Մի մոռանար ում հետ ես խօսում, տես, վերջը կզղջաս, բայց
 ուշ կլինի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ձղջուլ, ինչո՞ւ, որ քեզ այլևս չեմ լսում, արի՞ստ որ այսքան
 տարի քեզ լսել եմ, ահա թէ ինչո՞ւ համար եմ զղջում: Գնա՛,
 գնա՛, այս տնից, ուր մոռնում ես միայն արիւն ես պղտորում:

ՆԻՆԱ.—Հայրիկ, խնդրում եմ, մի տաքանար:

(Ներս է վազում Դարեան):

ԴԱՐԵԱՆ.—Ի՞նչ եղաւ, ի՞նչ պատահեց, Նինա:

ՍԱՐԳԻՍ.—Ես ձեզ ցոյց կտամ: (Գնում է):

ՏԵՍԻԼ 9.

Յարութիւն, Դարեա, Նինա եւ ապա Պալուշա:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ես ձեզ ցոյց կտամ... Հը՛, տեսնեսք ի՞նչ ես անելու, տես-
 նեսք ճի՛ ում ցոյց կտայ:

ԴԱՐԵԱՆ.—Ի՞նչ եղաւ, ի՞նչ էր խօսում Կայէնը:

ՆԻՆԱ.—Անտանելի խօսակցութիւն, չարժէ այդ մասին նորից խօսել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ուղում էր նորից խաբել, բայց չեղաւ:

ՆԻՆԱ.—Հայրիկ բաւական է. մայրիկ բան չկայ ուտելու քաղցիկ եմ:

ԴԱՐԵԱՆ.—Կերակուրն արդէն պատրաստ է, բայց Պալուշան չկայ դեռ, չէ՞ս
 կարող մի քիչ էլ սպասել, միասին կճաշենք:

ՆԻՆԱ.—Ինչո՞ւ, չէ. ուր է գնացել մայրիկ:

ԴԱՐԵԱՆ.—Ինչ որ դասերի խնդիր կար, խեղճ երեխաս տանջւում է ուղղակի
 մեզ համար:

(Ներս է մտնում Պալուշան):

ՊԱԼՈՒՇԱ.—Օ՛, բարե սիրելի քոյրիկ, բարե, այս ֆր բամբին բերեց մեր
 տունը:

ՆԻՆԱ.—Ի՞նչպէս թէ մեր տունը, սա միթէ իմ տունը չէ, հօրս տունն է
 այժմ իմ տունը և ոչ մի ուրիշը:

ՊԱԼՈՒՇԱ.—Ուրախ եմ, քոյրիկս, ուրախ, այ սիրում եմ, որ այդպէս ու-
 րախ տրամադրութեան մէջ ես լինում: Հայրիկ, այժմ էլ դու ու-

րախացիր, գործս յաջող վերջացաւ, այն գիմնադիտաների հետ
 համաձայնութիւնը վերջացրի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Փառք Աստուծոյ, Աստուած քո ծնունդն օրհն է, որդի:

ԴԱՐԵԱՆ.—Ձգնանք ճաշելու, Նինան քաղցած է, արդէն:

ՊԱԼՈՒՇԱ.—Սպասիր մի փոքր մայրիկ մի բան եմ հարցնելու:

ԴԱՐԵԱՆ.—Ի՞նչ կայ:

ՊԱԼՈՒՇԱ.—Մի փոքր առաջ մեր դրանը կանգնած մի ծանօթի հետ խօ-
 սումէի, Կայէնը մեր բակից դուրս եկաւ, ում մօտ էր եկել:

ՆԻՆԱ.—Մեղ մօտ:

ՊԱԼՈՒՇԱ.—Կատակ մի արա:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Կատակ չի անում մեզ մօտ էր եկել:

ՊԱԼՈՒՇԱ.—Ինչո՞ւ, ի՞նչ կայ, ի՞նչէ ուղում:

ՆԻՆԱ.—Կարգադրութիւններ է անում...

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ոչի՞նչ, խօսեց, խօսեց գնաց. այնպէս ծեփեցինք բերանը,
 որ լսեց, փախաւ:

ՆԻՆԱ.—Այնպէս կարմրացրի նրան ֆր. ասենք նա կարմրել չգիտէ:

ԴԱՐԵԱՆ.—Բաւական է, յետոյ կխօսէք, գնանք ճաշելու: (Գնում է միւսներն
 էլ հետեւում են):

ՊԱԼՈՒՇԱ.—Է՛ Նինա ջան, դու սպասիր, տես վերջը ի՞նչ եմ անելու նրան,
 հեշտ չի ազատւի իմ ձեռքից:

(Վարագոյր).

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է շքեղ, մեծ սենեակ, երեք դռներով, երեք անկյունային լուսավորութիւն, ճաշի մեծ սեղան, թղթախաղի սեղաններ:

ՏԵՍԻՒ 1.

Սիմա եւ սպա Մաշո:

ՍԻՄԱ.—(Միայնակ): Ուրեմն այն տալածուած լուրերը ճշմարիտ են. քրոջս տալիս են Չփլախովին: Այժմ եմ հասկանում, այն ծածուկ խօսողները մեզ էին բամբասում: Զարմանալու ոչինչ չկայ. թանգ առած, արժան ծախած ապրանքին ժողովուրդը միշտ կասկածով է վերաբերում: (Զանգ է տալի, մտնում է Մաշոն): Ո՞րտեղ են հայրիկն ու մայրիկը:

ՄԱՇՕ.—Մայրիկդ Շուրայի տուալետով է զբաղուած, իսկ հայրիկդ մագազինից բերած խմիչքներին է նայում:

ՍԻՄԱ.—Գնա հայրիկիս ասա թող այստեղ գայ:

ՄԱՇՕ.—Լաւ, բայց խնդրեմ Դուք էլ գնաք Ձեր սենեակը հագնուելու. Ձեր զգեստը հանել, պատրաստել եմ:

ՍԻՄԱ.—Ես չեմ հագնուելու, հայրիկիս այստեղ կանչիր:

ՄԱՇՕ.—Ինչո՞ւ, տիկինը հրամայել է առաւօտեանից շորերը կարգի բերել, մաքրել և չէ՞ք ուզում հագնուել:

ՍԻՄԱ.—Ես քեզ ինչ որ ասում եմ այն արա:

ՄԱՇՕ.—Այսօր էլ որ չհագնուէք էլ երբ էք հագնուելու:

ՍԻՄԱ.—Այսօր դու լաւ հագնուիր, բաւական է:

ՄԱՇՕ.—Ես կհագնուեմ, բայց Դուք էլ պէտք է հագնուէք:

ՍԻՄԱ.—Զահլաւս միշտար, Մաշօ, գնա հայրիկին կանչիր:

ՄԱՇՕ.—Դուք այսօր շատ հերսոտ էք:

ՍԻՄԱ.—Դէ, գնա. դուրս մի ցաւանցի: (Մաշօն գնում է):

ՏԵՍԻՒ 2.

Սիմա, Սարգիս, յետոյ Մարիամ:

ՍԻՄԱ.—Կատարեալ խայտառակութիւն է:

ՍԱՐԳԻՍ.—(Մտնում է սիրտիկ հագած): Ի՞նչ կայ Սիմա, ինչո՞ւ ես կանչել:

ՍԻՄԱ.—Հայրիկ, այս ի՞նչ խնճոյք է. ի՞նչ պատրաստութիւն էք տեսնում, այդ ի՞նչ խոհորարներ, ծառաներ են աշխատում մեր տանը. սիրտիկ էլ ես հագել, շնորհաւոր լինի:

ՍԱՐԳԻՍ.—Սիրտուկ հագնելը մեղք է ինչ. Չփլախովինք մեզ մօտ հիւր են գալու այժմ:

ՍԻՄԱ.—Հա, այդ ի՞նչ պատահեց, որ Չփլախովինք մեզ մօտ ես հրաւիրել. այն էլ ի՞նչպէս, խնամի են լինելու. հայրիկ, այս ինչեք են կատարում մեր տանը:

ՍԱՐԳԻՍ.—Ոչինչ, ի՞նչ է եղել որ:

ՍԻՄԱ.—Ի՞նչպէս թէ ոչինչ, հայրիկ, այդ արդէն անտանելի է:

ՄԱՐԻԱՄ.—(Սջ կողմից մտնելով): Սիմա ջան, ինչո՞ւ չես հագնուում. գնա, շուտ հագնուիր, այժմ փեսան ու հիւրերը կգան:

ՍԻՄԱ.—Դու հագնուիր, դու, մայրիկ, Չփլախովի պէս փեսայ գտնելուդ համար:

ՄԱՐԻԱՄ.—Ի՞նչ անենք, գործ էր, այդպէս պատահեց:

ՍԱՐԳԻՍ.—Վնաս չունի, ոչինչ չի պատահել:

ՍԻՄԱ.—Այդ ինչեք էք խօսում, հասարակութիւնը յիմար է, չգիտե՞ ինչու էք աղջիկ տալի Չփլախովին, այն Չփլախովին, որին մի շաբաթ առաջ մարդ չէիք համարում, անցնելիս բարեւ էլ չէիք տալի:

ՄԱՐԻԱՄ.—Աղջիկն արդէն հասել է, երբ առնող չկայ ի՞նչ պէտք է անենք:

ՍԻՄԱ.—Այժմ էք այդպէս խօսում, իսկ առաջ, երբ հասարակ մահկանացուները ձեր աղջկայ ձեռքն էին խնդրում նեղանում էիք, հրեւակայում էիք, որ իշխանները կգան նրա ձեռքը խնդրելու, ինչ է թէ հարուստ է, մեծ օժիտ ունի: Իսկ այժմ բանից դուրս է գալի, որ ձեր աղջիկը տալիսէք քսան և հինգ ուսուցիչ ստացող պրիկաշիկ Չփլախովին:

ՍԱՐԳԻՍ.—Քրոջ մի անպատուիր, իմացիր, որ այդ քո գործը չէ. և վերջապէս դու նրանից շատ լաւ չես:

ՍԻՄԱ.—Իմ հարցը փափուած է, ինձ վրայ ինչ ցեխ էլ որ ընկնի չի կարող ինձ այնպէս կեղտոտել, ինչպէս ձեր աղջկան:

ՄԱՐԻԱՄ.—Հանգստացիր, որդի, մի գրգռուիր, չէ՞ որ նա քո քոյրն է, ինչո՞ւ ես վիրաւորում նրան:

ՍԻՄԱ.—Այսօրուանից այլևս քոյր չունեմ, նա իմ քոյրը չէ, այլ քո աղջիկն է: Դու էիր նրան զարգարում, ուղարկում փողոցները փեսացու որոնելու, այ քեզ փեսացու, այժմ ուրախացիր:

ՄԱՐԻԱՄ.—Ես ի՞նչ մեղաւոր եմ:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչ վատ փեսացու է. երիտասարդ, գեղեցիկ տղայ է, ես հաւանում եմ, մի բան է պակաս, փող չունի, փողն էլ կտամ:

ՍԻՄԱ.—Հաւանում ես, ուրեմն շնորհաւոր լինի. իսկ իմ պատիւը միմիայն սա կարող է մաքրել: (Գրպանից հանում է ատրճանակը եւ զնում դէպի դուռը):

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչ ես անում այ տղայ, ռւբ ես գնում: (Բռնում է Սիմային):

ՍԻՄԱ.—Գնում եմ մեր տան արատը մաքրելու:

ՄԱՐԻԱՄ.—Ի սէր Աստուծոյ հանգիստ կաց, Սիմա, ես վախենում եմ:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչ ես խօսում, խելօք եղիր որդի, մենք անպատուած չենք:

ՍԻՄԱ.—Դուք անպատուած չէք, ես եմ անպատուածը, թող խնդրեմ:

ՍԱՐԳԻՍ.—Հանգստացիր, Սիմա, սխալ ես հասկացել, քո կարծածի նման բան չկայ:

ՍԻՄԱ.—Ես շատ լաւ գիտեմ ամեն բան, իդուր մի ծածկէք:

ՍԱՐԳԻՍ.—Լաւ, լաւ. հանգստացիր, տուր ատրճանակը, քեզ ամեն բան կը պատմեմ եւ կտեսնես, որ իդուր ես նեղանում:

ՄԱՐԻԱՄ.—Սիմա ջան, լսիր հայրիկիդ. նա քո վատը չի ցանկանում:

ՍԻՄԱ.—Երեխայի՞ք էք համոզում ի՞նչ է:

ՄԱՐԻԱՄ.—Սիմա ջան ատրճանակը հօրդ տուր, ես վախենում եմ, մօրդ չէս սիրում, քրոջդ խնայիր:

ՍԱՐԳԻՍ.—Այ որդի այդ անիծեալը մի ինձ տուր, հօ չեմ ուտելու, եթէ պէտք լինի դարձեալ քեզ կտամ, ինչո՞ւ ես իդուր քեզ էլ, մեզ էլ կորստեան մատնում:

ՍԻՄԱ.—Իդուր չէ, պատուի հարց կայ այստեղ հասկանում ես:

ՍԱՐԳԻՍ.—Աստուած վկայ ոչինչ չկայ: (Կամաց ատրճանակն առնում է): Նստիր մի կարգին խօսենք: Ենթադրենք նրան սպանեցիր, յետոյ քո ինչդ կաւելանայ, քոյրդ կըխտաւորուի:

ՍԻՄԱ.—Ես նրան չեմ սպանում, որ ինձ մի բան աւելանայ, այլ որ պատուիս արատը մաքրուի:

ՄԱՐԻԱՄ.—Ի սէր Աստուծոյ այդ սպանելու անունը մի տուր, ես սարսափում եմ:

ՍԻՄԱ.—Մայրիկ, քո պահած աղջիկը հէնց սպանելու համար է:

ՄԱՐԻԱՄ.—Ախր ես ի՞նչ անեմ:

ՍԱՐԳԻՍ.—Բաւական է, դու գնա քո գործին, (Մարիամը զնում է): Այ որդի, ասենք դու ճիշտ ես, այժմ ճարներս ի՞նչ է:

ՍԻՄԱ.—Նրան սատկեցնել:

ՍԱՐԳԻՍ.—Աւելի վատ, այն ժամանակ աւելի շատ կխայտառակուենք, կըսկանն շարունակ խօսել: Այժմ գոնէ շատերը չգիտեն ի՞նչ է եղել, լուռ են:

ՍԻՄԱ.—Հայրիկ, չէ որ այժմ էլ արդէն կասկածում են որ մի բան է պատահել, նրա համար ես աղջկանդ Չփախովի պէս մարդուն տալի:

ՍԱՐԳԻՍ.—Դու հանգիստ եղիր, որդի, ամեն բան առաջուց կարգադրել եմ: Սրանից մի շաբաթ առաջ իմացայ, որ մեր տանը խայտառակութիւն է պատահել, ինքս ուղեցայ այդ անդամ աղջկանը սատկեցնել, բայց մտածեցի, որ վատ կլինի, վճռեցի այս ձևով ծածկել մի կերպ:

ՍԻՄԱ.—Միթէ Չփախովին տալով կծածկուի:

ՍԱՐԳԻՍ.—Ես այնպէս եմ սարգել, որ կծածկուի: Չկարծես թէ Չփախովին խնդրեցի, որ աղջիկս առնի: Խօսակցութիւնն սկսեցի նրա հօրեղբոր հետ, մի քանի օր սրճարանում պատուեցի, գովեցի տղային, այնպէս որ կարծեցին, թէ տղային ես հաւանում եմ, հօրեղբոր բերանն էլ մի բան եմ քսել, եթէ կասկած բան լինի, հօրեղբայրը մեր կողմն է: Վերջը նրանք իրենք խնդրեցին, որ աղջկանս տամ նրան:

ՍԻՄԱ.—Իսկ եթէ տղան հասկանայ:

ՍԱՐԳԻՍ.—Հէնց այդ է պատճառը, որ շուտ եմ նշան դնել տալի. նրանից յետոյ եթէ հասկանան էլ փաստ չունի:

ՍԻՄԱ.—Միթէ տղան կհամաձայնի այդ տեսակ խայտառակուած աղջկանն առնել:

ՍԱՐԳԻՍ.—Հարկը հազար ուրբու համար նա ամեն բանի կհամաձայնի, փողը ամեն տեղ լոյս է տալի, որդի—հարկը հազար ուրբու, հէշտ է ասել:

ՍԻՄԱ.—Ուրեմն մեր փեսացուն աղջկանը չէ հաւանում, այլ իրեն պատիւը վաճառում է հարկը հազարի:

ՍԱՐԳԻՍ.—Հողին էլ դուրս կգայ: Բերանով ես ասում հարկը հազար, հապա մի համարիր տես ի՞նչ կլինի:

ՍԻՄԱ.—Լաւ, պատուաւոր մարդկանց հետ դործ ունինք... ուրեմն բոլորին զրկեցիր նրա համար, որ Չփախովի պէս մի փեսացու գտնես:

ՍԱՐԳԻՍ.—Ես ոչ ոքի չեմ զրկել:

ՍԻՄԱ.—Է՛հ հայրիկ, մենք երբէք համակարծիք չենք եղել եւ չենք էլ լինի, երկար խօսելն էլ աւելորդ է: Դէ փաստ բարով, ես գնում եմ: (Ննում է եւ ուզում է զնալ):

ՍԱՐԳԻՍ.—Սպասիր, ռւբ ես գնում: (Կանգնեցնում է Սիմային):

ՍԻՄԱ.—Աշխարհս մեծ է, երևի մի տեղ կդառնամ գնալու:

ՍԱՐԳԻՍ.—Այսօր դու պէտք է տանը լինես, այդ անհրաժեշտ է:

ՍԻՄԱ.—Ոչ թէ այսօր, այլ երբէք ես այս տանը չեմ լինելու:

ՍԱՐԳԻՍ.—Ինչէ՛ր ես խօսում, Սիմա, բաւական է ինձ տանջես:

ՍԻՄԱ.—Այո, հայրիկ, ես քեզ տանջել եմ, փողերդ վատնել, խաբել, զիշերներով տուն չեմ եկել, իմ պատճառով յաճախ անհանգիստ ես եղել, խնդրեմ ներես, բայց այսուհետեւ այլեւ չեմ անհանգստացնի:

ՍԱՐԳԻՍ.—Այդ խօսքերի ժամանակն անցել է, այս գիշեր դու տանից չպէտք է հեռանաս, հասկանում ես:

ՍԻՄԱ.—Ձեմ կարող, չեմ ուզում:

ՍԱՐԳԻՍ.—Եթէ ուզում ես ինձ սպանել, վեր առ այս ատրճանակը և մի անգամից սպանիր, եթէ դու գնաս, ինձ համար այդ մահ է:

ՍԻՄԱ.—Ես հայրասպան չեմ, այս գիշերուայ անունը այլևս մի տուր, վճռա-
կանապէս յայտնում եմ, որ ես այս գիշեր հիւրերի շարքում
չեմ լինելու:

ՍԱՐԳԻՍ.—Հապա հարցնողին ի՞նչ ասեմ, ինչպէս կարելի է եղբայրը քրոջ
նշանադրութեանը ներկայ չլինի:

ՍԻՄԱ.—Ինչ ուզում էք ասէք, այդ էլ իմ գործը չի: Մնաք բարեւ: (Գնում է):

ՍԱՐԳԻՍ.—Տէր Աստուած, անհ ինչով են վարձատրում որդիներս իմ աշխա-
տանքը, մէկի անունը խայտառակուած, միւսը մեղանից խռոված,
այս ի՞նչ պատիժ է, որ մեղքիս համար ասի:

ՏԵՍԻՒ 3.

Սարգիս եւ Մարիամ:

ՍԱՐԳԻՍ.—Այս էլ մի նոր խայտառակութիւն, այժմ էլ սրա մասին մտա-
ծիր:

ՄԱՐԻԱՄ.—Հը՞, ի՞նչ արեք, ի՞նչպէս վերջացաւ:

ՍԱՐԳԻՍ.—Մի տեսակ հանգստացրի, բայց չգիտեմ վերջն ի՞նչ կլինի:

ՄԱՐԻԱՄ.—Ի՞նչ կարող է լինել:

ՍԱՐԳԻՍ.—Ո՞վ գիտէ, հազար տեսակ բաներ էր խօսում:

ՄԱՐԻԱՄ.—Ախր ի՞նչ էր խօսում:

ՍԱՐԳԻՍ.—Դրանց ժամանակը չէ: (Ժամացոյցին նայելով): Այժմ հիւրերը
կհաւաքուեն:

ՄԱՐԻԱՄ.—Հիւրեր ասացիր յիշեցի, Անտոնին է՞լ հրաւիրել ես:

ՍԱՐԳԻՍ.—Այո:

ՄԱՐԻԱՄ.—Նրան ինչո՞ւ էիր հրաւիրում, դու հօ գիտես, որ նա մեր թշնա-
մին է, ամեն օր եղբօրդ տունն է գնում գալի:

ՍԱՐԳԻՍ.—Ինչ էլ լինի հրաւիրելը լաւ է, չհրաւիրելը՝ վատ:

ՄԱՐԻԱՄ.—Այ թանկեմ՝ նրա գլուխը, նա որ խելք ունենայ Շուրային թո-
ղած մարդաթող Նինայի հետ ման կգոյ:

ՍԱՐԳԻՍ.—Դու քո Շուրայիդ մասին աւելի լաւ է լռես:

ՏԵՍԻՒ 4.

Սարգիս, Մարիամ եւ Շուրա: (Լաւ հագնուած):

ՄԱՐԻԱՄ.—Ինչպէ՞ս նոր զգեստդ վրատ լաւ է գալի:

ՇՈՒՐԱ.—Այդ լաւ, մայրիկ, բայց խնդրում եմ, եթէ կարելի է, այս նշան-
դրէքը յետաձգէք:

ՍԱՐԳԻՍ.—Այդ ի՞նչ նոր բան է:

ՇՈՒՐԱ.—Հայրիկ, նոր ոչինչ չկայ, բայց խնդրում եմ յետաձգէք:

ՄԱՐԻԱՄ.—Ինչո՞ւ յետաձգենք, արդէն պատրաստութիւն ենք տեսել, մար-
դիկ ենք հրաւիրել, խելքդ գլուխդ ժողովիր:

ՇՈՒՐԱ.—Ես այդ Ձիւլախովին չեմ ուզում առնել, չեմ հաւանում...

ՍԱՐԳԻՍ.—Հապա ռւսն ես առնելու, քո հաւանածներից ո՞րն է Ձիւլախովից
լաւ: Գնացիր մեզ համար փեսացու գտար՝ մէկն ամուսնացած
դուրս եկաւ, միւսը սափրիչ, վերջն ինքդ ցեխի մէջ թաղուեցիր,
մեզ էլ խայտառակեցիր. աւելի լաւ կլինէր մահը քեզ առնէր,
մենք էլ կաղատուէինք այս խայտառակութիւնից:

ՄԱՐԻԱՄ.—Լաւ, մի տաքանայ, ի՞նչ ես աղջկայ սիրտը կոտրում, գուցէ...

ՍԱՐԳԻՍ.—Գուցէի բան չկայ, ամեն բան վճռուած է. փա՛ած ապրանքը
պէտք է շուտ գլխից ռադ անել, հասկացա՞ր:

ՇՈՒՐԱ.—Հայրիկ ես էլ հօ Նինան չեմ, որ ստիպում ես մարդու գնալ դո-
ռով:

ՍԱՐԳԻՍ.—Կորիւր աչքիս առաջից, անդգամ, դեռ դատողութիւններ էլ տալի:

ՄԱՐԻԱՄ.—Արի, արի, աղջիկս, հօրդ մի բարկացրու. արի գնանք մի փոքր
հանգստացիր: (Նրկումն էլ գնում են):

ՏԵՍԻՒ 5.

Սարգիս, Արշակ եւ երկու ուրիշ օգնական ծառաներ:

ԱՐՇԱԿ.—Սերգէյ Լազրիչ, ամեն բան պատրաստ է. այժմ պէտք է սեղա-
նը կարգի բերել. (ծառաներին), մի քանի շիշ շամպանակի բե-
րէք, զակուակի, բան շարէք այս սեղանի վրայ կարգին. դէ,
աղերք լաւ աշխատեցէք, որ ամօթով չմնանք. (ինքն սկսում է
թղթախաղի սեղանները կարգի բերել):

(Ծառաները գնում են եւ քերում սեղանի պատրաստութիւնը):

ՍԱՐԳԻՍ.—Արշակ, քեզ տեսնեմ, դու այդ բանի վարպետն ես, խնդրում եմ
ամեն բան կարգին, կանոնաւոր լինի, ես քեզ վրայ մեծ յոյս ու-
նիմ:

ԱՐՇԱԿ.—Անհող եղէք Սերգէյ Լազրիչ: (Ներս է մտնում Մաշօն):

ՄԱՇՕ.—Սերգէյ Լազրիչ, արդէն կառքերը դալիս են, երեւի հիւրերն են:

ՍԱՐԳԻՍ.—Լաւ գնա տիկնոջն ու օրիորդին ասա, թող գնան դահլիճ, ես
կգամ. (ծառաներից մէկին). դու էլ գնա դրան մօտ կանգնիր:
(Գնում է):

(Արշակը եւ միւս ծառան սեղանը կարգի են քերում. լսում է
խօսակցութիւն, ձայներ):

ԱՐՇԱԿ.—(Ցած ձայնով). Համեցէք, պարօններ ձեզ քէֆ անել, ինձ էլ փող
աշխատել:

ՏԵՍԻՒԼ 6.

Արշակ եւ Մաշօ:

- ՄԱՇՕ.—(Չեղբին մի մեծ փունջ ծաղիկ). Արշակ, տիկինը հրամայեց այս ծաղիկները սեղանի վրայ դնել, որպէս պէտք է դնել:
- ԱՐՇԱԿ.—Տո՛ւր ինձ, ես ինքս կ'տեղադրեմ. (ծաղիկէ փնջից հանում է մի ծաղիկ եւ ուզում է Մաշօի կրծքին ամրացնել):
- ՄԱՇՕ.—(Արգելելով). Չեմ ուզում:
- ԱՐՇԱԿ.—Լաւ, լաւ. կ'ինն էլ ծաղիկ չսիրէ...
- ՄԱՇՕ.—Ես ծաղիկ սիրում եմ, բայց...
- ԱՐՇԱԿ.—Էլ լինէ՛ք բայց. (ծաղիկն ամրացնում է). Տեսնում ես ինչ գեղեցիկն ես. (ուզում է համբուրել, լսում են ոտնաձայներ):
- ՄԱՇՕ.—Հանգիստ կ'աց, կարող ես այստեղ դալ:
- ԱՐՇԱԿ.—Ոչինչ ոչինչ. փեսան եկամ թէ չէ:
- ՄԱՇՕ.—Փեսան իր բարեկամներով եկել է:
- ԱՐՇԱԿ.—Մաշօ, լինէ՛ք սիրուն աղջիկ ես, երեւի շատ փեսացուներ ունես:
- ՄԱՇՕ.—Փեսացուներ չունեմ, չեմ էլ ուզում ունենալ:
- ԱՐՇԱԿ.—Ինչո՞ւ:
- ՄԱՇՕ.—Էնպէս. այժմեան փեսացուները խաբերաներ են:
- ԱՐՇԱԿ.—Շատ սխալ ես. այ օրինակ ես խաբերայ չեմ:
- ՄԱՇՕ.—Հն, բոլորն էլ առաջին անգամ այդպէս են խօսում, բայց վերջը մի հարցրո՛ւ. է՛ լաւ, լաւ, գնում եմ, տիկինը կարող է ձայն տալ:
- ԱՐՇԱԿ.—Սպասի, սպասի բան ունիմ ասելու:
- ՄԱՇՕ.—Յետոյ, յետոյ (դուրս է վազում):
- ԱՐՇԱԿ.—Անիրաւը փորձուած ճնճողուկ է երեւում, քնաս չունի, վերջը կտեսնենք:

ՏԵՍԻՒԼ 7.

Սարգիս, Սմբատ, Անտօն, Մարիամ, Շուրա, Արշակ. 1-ին եւ 2-րդ հիւրեր եւ այլ հիւրեր. դահլիճից դուրս են գալի:

- ՄԱՐԻԱՄ.—Համեցէ՛ք պարոններ, համեցէ՛ք, խնդրեմ, նշանն օրհնուեց, քահանան էլ գնաց. այժմ սկսեց ուրախութիւնը. (հիւրերն սկսում են նստել, նշանուածներն սեղանի վերի մասում են նստում). խնդրում եմ ազատ եղէք, ինչպէս ձեր տանը: (Ծառանները սպասատրում են հիւրերին):
- ՄԱՐԳԻՍ.—(Բաժակները լցնելով) խնդրում եմ պարոններ, թէև ձեզ վաղի պատրաստութիւններ չունեմ, բայց Աստուած ինչ տուել է նրանով զո՞հ լինենք:
- ՄԱՐԻԱՄ.—Խնդրեմ բաժակները լցնէք, ով ինչ կ'ամենայ. ու՛մ, կոնեակ, լիքեօր, օղի:

- ՄԱՐԳԻՍ.—Մեր պատուական հիւրերի կենացը. բարով, հաղար բարի էք եկել. շատ ուրախ եմ, որ Ձեր ներկայութեամբ յարգել էք իմ անդրանիկ ու սիրելի աղջկայ նշանդէքը. (խմում են բոլորն էլ):
- Ա. ՀԻԻՐ.—Սերգէյ Լադրիչ, Ձեզ պէտք է տուգանքի ենթարկել. առաջին բաժակը պէտք է նշանուածների կենացը խմել:
- (Չայներ՝ ճիշտ է, ճիշտ է):
- ՄԱՐԻԱՄ.—Խնդրեմ պարոններ, անուշ արէք, խաւար, ձուկ, ով ինչ կ'ամենում է:
- ՄԱՐԳԻՍ.—Ներողութիւն պարոններ. ես էքստրա կենաց խմեցի. այժմ ով ինչ ուզում է թող առաջարկի:
- Բ. ՀԻԻՐ.—Համաձայն չեմ. նախ պէտք է թամադա ընտրել:
- (Չայներ. այո՛, այո՛, թամադա):
- Ա. ՀԻԻՐ.—Պարոններ, թող տուէք իմ կարծիքն արտայայտել:
- (Չայներ. խնդրում ենք, խնդրում ենք):
- Պարոններ մեր խնձոյքներում, քէֆերում մենք միշտ լաւ քէֆ ենք արել, ուրախ ժամանակ ենք անցկացրել այն ժամանակ, երբ թամադան եղել է Անտօն Իվանիչը. կարծում եմ, որ բոլորդ էլ համաձայն կը լինէք, որ այս անգամ էլ նա մեզ քէֆ ցոյց տայ: Ուրեմն կեցցէ՛ Անտօն Իվանիչը. ոււմ:
- (Չայներ կեցցէ՛, կեցցէ՛ Անտօն Իվանիչը. սկսում է մի առ ժամանակ թամադա ընտրելուն յատուկ աղմուկ):
- ԱՆՏՕՆ.—Պարոններ (լռում են բոլորն էլ). շատ շնորհակալ եմ, որ ինձ այդ պատուին արժանացրիք. կ'խնդրէի ինձ այս անգամ ազատաէիք:
- (Չայներ. ո՛չ, ո՛չ, խնդրում ենք, կեցցէ՛):
- ՄԱՐԳԻՍ.—Անտօն Իվանիչ, Ձեզանից լաւ թամադա չի կարող լինել, խնդրում եմ յանձն առնէք: Պարոններ խմենք նորից Անտօն Իվանիչի կենացը:
- (Չայներ. կեցցէ՛. խմում են):
- ԱՆՏՕՆ.—Է՛, պարոններ տեսնում եմ, որ ձար չկայ, պէտք է յանձն առնել. այս անգամ էլ ես դարձեալ սոված պիտի մնամ, դուք՝ կուշտ. քնաս չունի: Ի՛նչ հապա լցրէք բաժակներդ լիքը լիքը:
- (Բոլորը լցնում են. այս միջոցում ծառաններն սկսում են կերակուր ներս բերել, ամաններ դուրս տանել, զինու շշեր բերել եւ այլն):
- ԱՆՏՕՆ.—(Շարունակում է). Պարոններ, խմեցէ՛ք նոր նշանուածների կենացը, ցանկանանք, որ նրանք բախտաւոր դոյզ լինին, սիրեն միմեանց անկեղծ, ուր սէր չկայ, այնտեղ բախտաւորութիւն չի կարող լինել. փողն էլ, փառքն էլ անցնում են, միայն սէրն է յաւիտենականը, կեցցէ՛ն նոր նշանուածները. ոււմ:
- (Բոլորը կ'անչում են կեցցէ՛, ուուա, բաժակները զարկում նշանուածների բաժակներին եւ խմում):

Բ. ՀԻԻՐ.—Սերգէյ Լազրիչ, դարձեալ մի նկատողութիւն. ուր եւս երաժիշտ-
ները, որ մի բան նուագեն:

ՍԱՐԳԻՍ.—Ներքեք պարտնենք, վաճառական մարդիկ ենք, այդպիսի բա-
ների մէջ շնորհք չունինք:

Ա. ՀԻԻՐ.—Վնաս չունի, ֆլաս չունի. դրա փոխարէն սեղանը այնքան ճոխ է,
որ ամեն բան կարելի է մոռանալ:
(Սկսում են ուտել, կամաց խօսել միմեանց հետ):

ԱՆՏՕՆ.—Խնդրեմ լցնէք բաժակները: Պարտնենք, մենք բոլորս էլ մեր հայ-
րենիքը թողած եկել ենք օտար երկրում մեր ապրուստը ճար-
տելու, մեր բախտը փորձելու. է՛ Աստուած մէկին յաջողում է, միւ-
սին ոչ. մէկը հարստանում է, միւսը մնում է աղքատ: Մեր յար-
գելի Սերգէյ Լազրիչը, փառք Աստուծոյ, իւր համար կարգին տեղ
ու տուն է գրել, ապրուստ, միջոց ունի: Խմենք նրա կենացը և
ցանկանանք, որ նա չմոռանայ իւր պարտքը դէպի ազգը, հասա-
լակութիւնը, դէպի ազգականներն ու իւր եղբայրը:

(Չայներ, կեցցէ՛ խմենք):

ՄԱՐԻԱՄ.—(Սարգսին) Տեսա՞ր, ես քեզ չէի ասում նրան մի կանչի, մեր
գլխին ցաւ կդառնայ:

ԱՐՇԱԿ.—(Ներս մտնելով) Սերգէյ Լազրիչ, մի ինչ որ մարդ ուզում է
Ձեզ կամ տիկնոջը տեսնել:

ՍԱՐԳԻՍ.—Ո՞վ է, թող այստեղ գայ:

ԱՐՇԱԿ.—Այստեղ թողնելու մարդ չէ:

ՍԱՐԳԻՍ.—Ինչո՞ւ:

ԱՐՇԱԿ.—Շատ այլանդակ է հագնուած:

ՍԱՐԳԻՍ.—Գուցէ աղքատ է, գնա մի քան կոպէկ տուր թող հեռանայ:
(Արշակը գնում է բաժակն ստնելով). շնորհակալութիւն պա-
րտենք իմ կենացը խմելու համար:

ԱՆՏՕՆ.—Հապա՛ն բաժակները լցրէք: Տիկին Մարիամ Ձեր կենացը. ողջ լի-
նիք, Աստուած Ձեզ աւելի երկար կենաք տայ, որ այսպիսի
զաւակներ էք մեծացրել: Հա՛ ի միջի այլոց, Սերգէյ Լազրիչ, Սի-
ման ուր է, ինչո՞ւ չի երևում:

ՍԱՐԳԻՍ.—(Շփոթուած). Ոչինչ, էնպէս գլուխը ցաւում էր, ոչինչ, չու-
ղեցաւ:

ՄԱՐԻԱՄ.—Նա շուտով կգայ, ոչինչ, խնդրեմ շարունակէք:

ԱՆՏՕՆ.—Դէ ուրեմն, տիկին Մարիամի կենացը. կեցցէ՛:
(Չայներ, կեցցէ, խմում են):

ԱՐՇԱԿ.—(Ներս մտնելով). Սերգէյ Լազրիչ, յիսուն կոպէկ էլ տուր չի հե-
ռանում, ուզում է Ձեզ անպատճառ տեսնել:

ՍԱՐԳԻՍ.—Ո՞վ է այդ մարդը:

ՏԵՍԻԼ 8.

Առաջինները եւ Աւագ:

ԱԻԱԳ.—(Մտնում է հին չուխան, արխալուղը հագած, գլխին մորթէ փա-
փախ, խուրջինը ուսին, փայտը ձեռքին):

Ես եմ, ես, Սարգիս. բարի իրիկուն. (զարմացած) բա՛ն, էս ի՞նչ
խաբար ի այդքան մարդ է հաւաքուել սրանց տունը:

ՍԱՐԳԻՍ.—Աւագ այդ դ՞ո՞ւ. ես, ո՞րտեղից ես գալի:

ԱԻԱԳ.—Տանից:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչու եկար:

ԱԻԱԳ.—Էկամ ձեզ տեսնելու, Մարիամիս կարօտել ամ: (Այս ու այն կող-
մին է նայում), ճրտեղ ի Մարիամը:

ՄԱՐԻԱՄ.—(Մօտենալով). Կարօտէլ էիր, մի նամակ գրէիր, էլ դու ինչո՞ւ
եկար:

ԱԻԱԳ.—(Բարեւում է Մարիամին եւ ուզում համբուրել), բարով, Մարիամ
ջան. նամակ գրելը ուրիշ ի, աչքով տեսնելն ուրիշ:

ՄԱՐԻԱՄ.—(Յետ քաշուելով) Հէնց այսօր պիտի գայիր:

ԱԻԱԳ.—Էսօր ինչի՞ որ:

ՍԱՐԳԻՍ.—Վնաս չունի, ոչինչ:

ԱԻԱԳ.—Էրէւում է, որ ֆլաս ունի:

ՄԱՐԻԱՄ.—Ե՛կ գնանք հանգստացիր. յոգնած կլինես:

ԱԻԱԳ.—Ես յոգնած չեմ:

ԱՆՏՕՆ.—(Մօտենում եւ բարեւում է) Բարե՛ւ, Աւագ, գալդ բարի:

ԱԻԱԳ.—(Շփոթուած). Բա՛ն, Անտօն աղա, բարի կենաս, ողջ լինիս. առա-
ջուց հրամանքդ չճանաչեցի:

ԱՆՏՕՆ.—Հրամանքի տէր լինիս. քէֆդ ռնց է:

ԱԻԱԳ.—Քէֆս լաւ ի, բայց էրևումս վատ ժամանակի եմ եկել:

ԱՆՏՕՆ.—Շատ լաւ ժամանակի ես եկել. նշանդրէրի ես վրոյ հասել, ոտքդ
բարի լինի:

ԱԻԱԳ.—Ո՞ւմ նշանդրէքն ի:

ԱՆՏՕՆ.—Քրոջդ աղջկայ՝ Շուրայի:

ԱԻԱԳ.—Բա՛ն, շնորհաւոր լինի. (աչքերով որոնում է):

ԱՆՏՕՆ.—Ա՛յ, համեքէք, (ցոյց է տալի նշանուածներին) խնդրեմ ծանօթա-
ցէք, այս պարոնը Շուրայի ամուսինն է. (Մմբատին) խնդրեմ
ծանօթանաք պարոն Աւագի հետ, Ձեր նշանածի քեռին է, նրանց
գիւղի քեօխման:

ԱԻԱԳ.—(Բարեւում է եւ ուզում է համբուրել). Նշանդ շնորհաւոր ըլի:

ԱՐՇԱԿ.—Բարեկամ, գլխարկդ վեր առ:

ԱԻԱԳ.—Է՞դ ով ի, հա հետեիցս է գալի:

ՍՄԲԱՏ.—(Յետ քաշուելով) Շնորհակալ եմ:

ԱԻԱԳ.—(Մօտենալով Շուրային, փափախը վերցնում է եւ ուզում է համ-
բուրել). Շնորհաւոր ըլի նշանդ, աղջիկս:

ՄԱՐԻԱՄ.—(Թեից քաշելով). Լաւ, լաւ, յետոյ կշնորհաւորես:

Ա.Ա.Գ.—(Նեղացած). Այ բուր, ինչո՞ւ էգպէս ես անում, չես ուզում հիմա կգնամ: Ես քառսուն մանէթ փող եմ ծախսել, էկալ եմ քեզի, քո տղէքքիդ տեսնալի. դու ինձի չես թողնում աղջկադ նշանը շնորհաւորեմ:

ՄԱՐԻԱՄ.—Մի նեղանար, գնանք մի քիչ հաց կեր:

Ա.Ա.Գ.—Ո՞ւր գնանք, այստեղ ինչի՞ որ:

ՄԱՐԻԱՄ.—Այստեղ անյարմար է. գնանք, քեզ խօսք ունիմ ասելու:

Ա.Ա.Գ.—Փառք Աստուծոյ, ես քաղցած չեմ. (ձեռքը խուրջինին զարնելով). տեսնում ես լիքը հաց, պանիր, գաթայ ի:

ՍԱՐԳԻՍ.—(Մարիամին). Վնաս չունի. թող մնայ. ի՞նչ արած. (Աւագին). խուրջինդ, փայտդ տուր, թող տանեն:

Ա.Ա.Գ.—Հարկաւոր չի. ես գնում եմ (Անտօնին) մնաս բարով Անտօն աղա. ափսոս որ էկամ սրանցը տեսութեան:

ԱՆՏՕՆ.—Ո՞ւր ես գնում:

Ա.Ա.Գ.—Յետ եմ գնում մեր գիւղը:

ԱՆՏՕՆ.—Ինչո՞ւ այգպէս շուտ:

Ա.Ա.Գ.—Ախպէր, մեր նաչալնիկի տանը աւելի լաւ են պատիւ անում, քան քրոջ տանը. էստեղ էլ ինձի գործ չկայ:

ՍԱՐԳԻՍ.—Մի նեղացիր, Աւագ. արի սեղանի մօտ մի բաժակ կօնեակ խմի (տանում է սեղանի մօտ):

ՄԱՐԻԱՄ.—Համեցէք պարոններ, ուշք մի դարձնէք, խնդրեմ դուք շարունակեցէք ձեր քէֆը: (Աւագը խմում է եւ բերանը չուխայի փէշով սրբում):

ՍԱՐԳԻՍ.—Այ սալֆէտիան, առ, բերանդ սրբիր: (Աւագը անում է անձեռնոցիկը, բերանը սրբում եւ ապա դնում գրպանը):

ԱՆՏՕՆ.—Աւագ եղբայր, մի բաժակ էլ խմի. մենք մինչև քո գալը շատ ենք խմել:

ՄԱՐԻԱՄ.—Ո՞ր սատանան բերաւ սրան այսօր այստեղ:

Ա.Ա.Գ.—(Խուրջինը վայր դնելով)—Տունդ քանդուի, Աւագ, հարսանքի տանն էլ բեռդ շալակիցդ չի իջնում:

ՍԱՐԳԻՍ.—Արշակ, խուրջինը և փայտը վերցրու. (Աւագին) փափախդ էլ տուր, թող տանի:

(Աւագը տալիս է փափախը, Արշակը բոլորն էլ դուրս է տանում):

Ա.Ա.Գ.—(Խմելուց յետոյ) Էն տղան խուրջինիս մէջից հօ բան չի թոցնի:

ՍԱՐԳԻՍ.—Մի վախենար, ոչինչ չի լինի:

ԱՐՇԱԿ.—Երաժիշտներն եկան, ի՞նչ կհրամայէք:

(Չայներ. ներս կանչի, շո՛ւտ):

Ա.Ա.Գ.—(Անտօնին). Էս ինչի պատահել, սրանց քիթը բարձրացելի. սրանք իմ տեսածը չեն. հէյ գիտի հա...:

ՏԵՍԻՆ 9.

Նոյնը եւ երաժիշտներ (Թառ ջութակ եւ դափ): (Երաժիշտները նստում են, կարգով սեղանից հեռու. պատի մօտ սկսում են լաւել. հանդիսականներն առ ժամանակ ուտում են և ցածր ձայնով խօսում):

ԱՆՏՕՆ.—Հապա մի բան նուագէք տեսնենք, իսկ դուք պարոն հանդիսականներ բաժակներդ լցրէք:

(Երաժիշտները նուագում են արեւելեան եղանակ):

Ա.Ա.Գ.—(Հարբած է) Մ՛յ ինչ եմ ասել, հիմի որ հարսանիք ի:

ԱՆՏՕՆ.—Ի՞նչպէս, հաւանում ես:

Ա.Ա.Գ.—Իմ հաւանելս ի՞նչ օգուտ, ինձի չեն հաւանում: Անտօն աղա, տեսնում եմ լաւ մարդ ես, մեր գիւղը որ գաս աչքիս վրայ տեղ ունիս:

ԱՆՏՕՆ.—Շնորհակալ եմ. պարոններ խմենք պ. Աւագի կենացը, որ ախրքան դժուարութիւններ կրելով եկել է հասել մեզ մօտ, իւր բրօշը տեսնելու. կեցցէ՛:

(Բոլորն էլ խմում են եւ կեցցէ՛ կանչում):

(Չայներ.—Հապա՛ մի պարի եղանակ նուագել, սկսում են ծափ տալ, մէկը պարում է եւ Աւագին զուխ տալի, բոլորն էլ կանչում են, կեցցէ՛ բեռին):

ԱՆՏՕՆ.—Հապա Աւագ եղբայր շնորքդ ցոյց տուր:

Ա.Ա.Գ.—Թէ գեղը լինէր ուրախութեամբ, էստեղ իմ տեղս չի:

ԱՆՏՕՆ.—Հէնց տեղն է, քէֆիդ նայիր:

Ա.Ա.Գ.—Քո ազիզ խաթեր համար:

(Աւագը չուխայի փէշերը հաւաքում է եւ սկսում է պարել հարբածի նման. ձայներ—կեցցէ՛ բեռին):

ՄԱՐԻԱՄ.—(Չայրացած). Այս ի՞նչ խայտառակութիւն է, Տէր Աստուած, այս ի՞նչ պատիժ է:

(Վարագոյր).

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ

Երկրորդ գործողութեան բեմն է, միայն աւելացել է Պաւլուշայի մեծագիւր պատկերը:

Դարեա եւ ապա Յարութիւն:

ԴԱՐԵԱ.—(Կար է անում): Ինչո՞ւ այսքան ուշացաւ, մի մարդ էլ չկայ, ուղարկեմ իմանայ գործն ինչպէս վերջացաւ: Միթէ այն անիրաւը մեզ մի քանի ամիս ժամանակ էլ չի տայ, տեսնենք ի՞նչ ենք անում:

(Ներս է մտնում Յարութիւնը, Դարեան վեր է թռչում):

Հը՛, ի՞նչ արիք, գործն ի՞նչպէս վերջացաւ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Գործը շատ վատ կերպարանք ստացաւ:

ԴԱՐԵԱ.—Ի՞նչպէս:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Նա իմ մուրհակները դատարան է տուել, կատարողական թերթ առել, տուել սուղիքնի պրիտաւին, այժմ ինձ հետ չի էլ ուղում խօսել:

ԴԱՐԵԱ.—Յետո՞յ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Պէտք է այսօր մինչև ժամի 10-ը վճարեմ, թէ չէ ունեցած չունեցածներս ծախելու են:

ԴԱՐԵԱ.—Տէր Աստուած, այս ի՞նչ վիճակ է...

ՏԵՍԻԼ 2.

Յարութիւն, Դարեա եւ Նինա:

ՆԻՆԱ.—(Մաքուր հագնուած, գլխարկը գլխին, ռիդիկլիւր ձեռքին մտնում է եւ ըարեւում): Ի՞նչ նորութիւն կայ, Պաւլուշից նամակ չէք ստացել դեռ:

ԴԱՐԵԱ.—Այս շաբաթ չենք ստացել, բայց շատ վատ նորութիւն կայ:

ՆԻՆԱ.—Ի՞նչ վատ նորութիւն. հայրիկ, ինչո՞ւ այդքան տխուր ես:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Չգիտեմ, ի՞նչ ասեմ աղջիկս:

ՆԻՆԱ.—Երեւի լիմոնի խնդիրն է, այդ մասին տխրելու ի՞նչ կայ: Գործ է, այդպէս պատահեց, փաստեցինք, տխրելով փաստը չի վերջանայ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Բայց Քօսաւի պարտքը չեմ կարողանում վճարել, ահա ցաւը որն է:

ՆԻՆԱ.—Շատ մի մտածիր, հայրիկ, Պաւլուշայի գործը այժմ լաւ է, կաշխատի, կտայ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Է՛, աղջիկս, մինչև Պաւլուշայի աշխատանքը շատ ժամանակ կայ, իսկ Քօսաւն այսօր է փողը պահանջում:

ՆԻՆԱ.—Այսօր չլինի, թող մի ամիս յետոյ լինի, չենք ուտելու հօ, կտանք: ԴԱՐԵԱ.—Կատարողական թերթ է վերցրել, եթէ մինչև ժամի տասը չտանք, ամեն ինչ կորած է:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Այո՛, աղջիկս, մեր ունեցած այս մի երկու կտոր փայտերն էլ առնելու են ձեռքներիցս...

ՆԻՆԱ.—Հանգստացիր հայրիկ, դրա առաջը դեռ կարելի է առնել: Միթէ Քօսաւն այդքան անխիղճ է:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Քօսաւն այնքան էլ խղճովներից չէ, բայց այստեղ մի ուրիշ բան կայ: Նա մեր Կայէնի մօտիկ բարեկամն է, բացի այդ նրան միշտ քսան, երեսուն հազար պարտք է լինում, այնպէս որ նրա ձեռքին գործիք է:

ԴԱՐԵԱ.—Յետո՞յ, այդ ի՞նչ կապ ունի մեր գործի հետ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ես այսօր հաստատ աղբիւրից իմացայ, որ Քօսաւին ամեն բան թելադրողը Կայէնն է եղել, նա է սովորեցրել, որ ինձ հինգ հազարի տարանք տայ ապուրիկ և այն էլ վատը, որ փաստեմ:

ՆԻՆԱ.—Դարձեալ նա, ի՞նչ է ուղում այդ անխիղճը մեզանից:

ԴԱՐԵԱ.—Տէր Աստուած, այդ հրէշի ձեռքից միթէ չենք աղատուելու երբէք:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Կազատուենք, եթէ նրա ուղած ստորագրութիւնը տանք:

ԴԱՐԵԱ.—Տո՛ւր այդ ստորագրութիւնը, ի սէր Աստուծոյ, թող մեզանից ձեռք վերցնի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Այսուհետեւ մեռնեմ էլ չեմ տալու, ես էլ փաստեմ ունիմ նրա հետ ապագայում խօսելու, այժմ եմ հասկանում ինչու է ինձանից վախենում:

ԴԱՐԵԱ.—Ինչ վատ ժամանակ է, Անտոն Իվանիչն էլ այստեղ չէ, մեզ կօգնէր:

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Իսկապէս ո՞ր է, ոչ ոք չի իմանում, թէ ո՞ւր է գնացել:

ՆԻՆԱ.—Խօսքը մեր մէջ մնայ թող, էջմիածին է գնացել, ինձ գրել էր, որ այսօր կամ վաղը այստեղ կլինի:

ԴԱՐԵԱ.—Ինչո՞ւ է գնացել:

ՆԻՆԱ.—Ինձ համար ապահարզան առնելու: Այդ անխիղճ տէրաւորները տա՛սը ուրբին ստանում են թէ չէ, առանց հարցնելու ուրում ես, թէ ոչ, պահում են, իսկ ապահարզանի ժամանակ տարիներով խնդրի, հազարներով փող ծախսիր և ոչ մի օգուտ:

(Դուրը թխկացնում են, Նինան ըստ է անում դուրը ստանում մի նամակ):

Հայրիկ, Պետերբուրգից է, Պաւլուշան է գրել:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Հապա շուտ բաց արա, կարդա:

ԴԱՐԵԱ.—Վերջապէս հանգստացայ:

ՆԻՆԱ.—(Կարդում է) «Սիրելի ծնողներ, խիստ զբաղուած էի չէի կարողանում ազատ ժամանակ գտնել նամակ գրելու: Մի մեծ գործ եմ վերցրել ամսի 4-ին, յոյս ունեմ, որ կտանեմ և մեծ վարձատրութիւն կստանամ: Դատը վերջանալուն պէս կգամ, շուտով կտեսնուենք, համբուրում եմ ձեզ և Նինային. բարև Անտոն Իվանիչին ձեր Պաւլուշա»:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Փառք քեզ Աստուած, իմ յոյսն էլ արդարանալու է:

ՆԻՆԱ.—Հայրիկ, նրա գրածից երևում է որ այսօր էլ կարող է այստեղ լինել, դատը վերջացած է արդէն:

ԴԱՐԵԱ.—Ո՛ւր է մի շուտ գար, կարօտս առնէի:

ՏԵՍԻՒ 3.

Առաջինները եւ Սուղերնի պրիստաւ:

ՊՐԻՍՏԱԻ.—(Ներս է մտնում պօրտֆէյը ձեռքի տակ, նայելով շփոթուած Յարութիւնին). Ի՞նչ է, վախեցած:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ոչինչ, խնդրեմ, համեցէք:

ՊՐԻՍՏԱԻ.—Իմ անհաճելի հիւր լինելը ինքս էլ շատ լաւ գիտեմ, բայց ի՞նչ արած, պարտականութիւն է, պէտք է կատարեմ:

ԴԱՐԵԱ.—Ո՛ւր է այս մարդը:

ՆԻՆԱ.—Երեւի սուղերնի պրիստաւն է:

ԴԱՐԵԱ.—Ուրեմն եկաւ մեր ունեցած, չունեցածը տանելու:

(Պատին յենուելով սկսում է լալ):

ՊՐԻՍՏԱԻ.—Տիկին, իմ գալով ամեն բան վերջացած չի կարելի համարել, Աստուած ողորմած է, զուցէ Դուք Ձեր պարտքատիրոջ հետ հաշտուէք:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—(Նինային). Մայրիկիդ դուրս տար:

ՆԻՆԱ.—Գնանք մայրիկ, իզուր ինչո՞ւ ես լալիս: (Դնում են):

ՏԵՍԻՒ 4.

Յարութիւն եւ Սուղերնի պրիստաւ, յետոյ Նինա:

ՊՐԻՍՏԱԻ.—Այս տեսարանները չեմ սիրում, բայց ի՞նչ արած. (մտնելով է սեղանին, գլխարկը ցած դնում, պօրտֆէյի միջից մի թուղթ հանում) Յարութիւն Լազրիչ Գասպարովը Դուք էք:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Այո, ես եմ:

ՊՐԻՍՏԱԻ.—Նորին Կայսերական Մեծութեան Հրամանով դատարանը հրա-

մայել է ինձ Ձեզանից առնել երկու հազար ռուբլի Վասիլ Պետրովիչ Բոսաեին տալու: Ձեր պարտքը կարող էք այժմ վճարել:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ոչ:

(Ներս է մտնում Նինան):

ՊՐԻՍՏԱԻ.—Ուրեմն պէտք է գրեմ Ձեր ունեցածը: Դուք խանութ, տուն, բան ի՞նչ ունէք:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Իմ ունեցածը բնակարանիս կահ կարասիքն է, ուրիշ ոչինչ չունեմ:

ՊՐԻՍՏԱԻ.—Բացի այս սենեակից քանի՞ սենեակ ունիք, մէջները ի՞նչ կայ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Բացի այս մի ննջարան և խոհանոց ունինք, ննջարանում մի մահճակալ կայ, խոհանոցում էլ մի քանի կաթսաներ, ամաններ:

ՊՐԻՍՏԱԻ.—Այդ մահճակալն ու ամանները չի կարելի գրել. ուրեմն գրենք այս սենեակում եղածը:

(Նայում է եւ սկսում է գրել):

Ի՞նչ արժէ այս սեղանը:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Վեց ռուբլի:

ՆԻՆԱ.—Պարոն պրիստաւ, ես մի խնդիր ունեմ:

ՊՐԻՍՏԱԻ.—Համեցէք:

ՆԻՆԱ.—Ես ծագայում եմ Ժան-Դէ-Մառէ դրասենեակում, ամսական յիսուն ռուբլի եմ ստանում, եթէ կարելի է, արգելք դրէք իմ ոռճիկի վրայ կամ ժամանակ տուէք ինքս կվճարեմ, միայն հօրս սեղանը մի գրէք:

ՊՐԻՍՏԱԻ.—Ուրախութեամբ օրհորդ, բայց չեմ կարող. ես իրաւունք ունիմ արգելք դնելու միմիայն Ձեր հօր ունեցածի կամ ոռճիկի վրայ:

ՆԻՆԱ.—Խնդրեմ, ոռճիկովս թերթն ապահովէք, զուցէ բոլոր գումարը մի անգամից կվճարեմ:

ՊՐԻՍՏԱԻ.—Դժբախտաբար այդ անկարելի է. (շարունակում է գրել):

ՏԵՍԻՒ 5.

Յարութիւն, պրիստաւ, Նինա եւ Սարգիս:

ՍԱՐԳԻՍ.—(Ներս է մտնում). Հայ, հայ, պարոն վաճառական, քէֆդ ի՞նչ պէս է: Բարև, պարոն պրիստաւ:

ՊՐԻՍՏԱԻ.—Բարև, Սերգէյ Լազրիչ: Այս պարոնը կարծեմ Ձեր եղբայրն է.

ՍԱՐԳԻՍ.—Կարծեմ...

ՊՐԻՍՏԱԻ.—Լաւ ժամանակ եկաք. չգիտեմ Ձեզ յայտնի է թէ ոչ եկել եմ Ձեր եղբորից երկու հազար ստանալու Բոսաեին տալու, բայց տեսնում եմ ոչ փող ունի, որ տայ, ոչ էլ իրեր ունի, որ գրեմ. զուցէ Դուք կվճարէք այդ գումարը նրա փոխարէն:

ՍԱՐԳԻՍ.—Ինչու չէ, եղբորս պարտքն էլ վճարեմ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Հարկաւոր չէ. թող գրեն ունեցածս:

ՍԱՐԳԻՍ.—Տեսնո՞ւմ եք ինչպէս է խօսում: Բայց պարոն պրիստաւ խնդրեմ մի երկու ընդէ սպասէք եղբորս հետ խօսեմ, վերջացնեմ գործը (Յարութիւնին): Խելօք պարոն, ինձ մօտ եղածդ ժամանակ ամեն տեղ գտում էիր, թէ ես եմ աշխատել, ես եմ չարչարուել, եղբայրս ինձ չի սպանում, հապա այժմ ինչո՞ւ չես աշխատում:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Բան ունիս ասելու ասան, այդ խօսքերն աւելորդ են և այժմ դրանց ժամանակը չէ:

ՍԱՐԳԻՍ.—Այսպէս թէ այնպէս դարձեալ եղբայր ենք, միեկնոյն մօր կաթով ենք սնուել, ուզում եմ քեզ օգնել և այդ երկու հաղարը վճարել, այլապէս կարող են քեզ բանդ տանել:

ՆԻՆԱ.—Բանդ, ի՞նչ ես ասում հօրեղբայր... (հեկեկում է):

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Թող տանեն:

ՍԱՐԳԻՍ.—Թող այդ յիմարութիւններդ, եկ խօսենք, վերջացնենք:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ի՞նչ արած, հորը լաւ ես փորել:

ՍԱՐԳԻՍ.—Այդ ի՞նչ ես խօսում, ես քո վատ ընդէին եկել եմ օգնելու, իսկ դու ինձ անպատուում ես:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ի՞նչ ես ուզում, եղբայր, եթէ բան ունիս ասան, ուզում ես տալ երկու հաղարը տուր, յետոյ կվճարեմ:

ՍԱՐԳԻՍ.—Յետոյ վճարելու համար փող չեմ կարող տալ. ապահովիր մի բանով, այն ժամանակ կտամ:

ՆԻՆԱ.—Հօրեղբայր, վճարէ ես իմ ոռճիկով ապահովում եմ, որ բոլորը լրիւ կստանաք:

ՍԱՐԳԻՍ.—Ոչ, Նինա, միայն մի պայմանով կարող եմ վճարել:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ի՞նչ է պայմանդ պարզ ասան, վերջացրո՛ւ:

ՍԱՐԳԻՍ.—Այն պայմանով, որ մեր մէջ այսօրուանից ամեն հաշիւ վերջանայ:

ՊՐԻՍՏԱՒ.—Պարոններ, խնդրեմ շուտ արէք, ես ժամանակ չունիմ:

ՍԱՐԳԻՍ.—Մի երկու ընդէ ես խնդրեմ թոյլ տաք: Լսիր, եղբայր, և դու՛ Նինա, տեսնում ես, որ հայրդ այնքան էլ լաւ առեւտրական չէ, քնասում է, եթէ այդպէս շարունակի կարող է պատահել, որ գլուղում ունեցած մեր պապերից մնացած հողն էլ պարտքի տեղ խլեն ձեռքից, այդ հողերը պէտք է ապահովել:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Յետո՞յ, ի՞նչ ես ուզում:

ՍԱՐԳԻՍ.—Դու մի ստորագրութիւն կտաս ինձ, որ այդ հողերը ինձ ես վաճառել, բացի այդ մի այլ ստորագրութիւն, որ մեր մէջ հաշիւը փակուած է, դու ինձանից ոչ մի պահանջ չունես և ես քեզ դրա փոխարէն կտամ քան հազար ուրիշ հասկացանք:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Լաւ ես մտածել:

ՍԱՐԳԻՍ.—Ի հարկէ լաւ եմ մտածել:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ի՞նչ, ուզում ես ինձանից սատանայի Ագամից առած ստո-

րագրութեան նման բան առնել հո՞, ներողութիւն, այսուհետեւ քո ցոյց տուած լոյսին էլ չեմ հաւատայ, չէ, ի՞նչու ես աշխատում հանգամանքից օգտուել:

ՆԻՆԱ.—Հօրեղբայր միթէ Ձեր սրտում խղճի նշոյլ անգամ չի մնացել:

ՍԱՐԳԻՍ.—Լսիր, անպատկառ, մարդաթող:

ՆԻՆԱ.—Դէ խնդրեմ գնաք Ձեր աղջկայ պատիւը պաշտպանէք, որ չգողանան...:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Հանգիստ կ'աց, Նինա, թող մի, խօսացրու: (Բարձր խօսակցութեան ժամանակ մտնում է Դարեան):

ԴԱՐԵԱՆ.—Ի՞նչ եղաւ, ի՞նչ պատահեց:

ՏԵՍԻՒ 6.

Առաջինները եւ Անտօն ու Պաւլուշա:

(Պաւլուշան քաղաքացու լաւ զգեստ հագած):

ԱՆՏՕՆ.—Հապա տեսէք ի՞նչ եմ բերել, ճանաչում եք:

ՆԻՆԱ.—Այս հում եմ տեսնում, Պաւլուշա ջան:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Պաւլուշա դժու ես:

ԴԱՐԵԱՆ.—Պաւլուշա ջան, միթէ դու ես:

(Սկսում են Պաւլուշային համբուրել, փաթաթուել վզովը. Դարեան լալիս է):

ԱՆՏՕՆ.—Ինչ վատ բան է որք լինելը, ոչ ոք ինձ վրայ ուշադրութիւն չի դարձնում:

ՆԻՆԱ.—Մի նեղանաք Անտօն Իվանիչ, բարով էք եկել:

(Յարութիւն եւ Դարեա նոյնպէս բարեւում են Անտօնին):

ՊԱԻԼՈՒՇԱ.—Հայրիկ, ինչպէս ես, առողջութիւնդ ինչպէս է, գործերդ լաւ են, Նինա ջան դու լաւ ես երեւում:

ՆԻՆԱ.—Այո, Պաւլուշա ջան, վատ չեմ, բայց հայրիկի գործը վատ է:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Ի՞նչ է եղել, ինչո՞ւ:

ՆԻՆԱ.—(Յոյց տալով պրիստային): Տես, եկել է պարտքի փոխարէն տան իրերը գրի:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Ձերի՞ հօրեղբորս ենք պարտական:

ՍԱՐԳԻՍ.—Աստուած մի արասցէ, պարտատէրը ուրիշ մարդ է, ես եկայ հօրդ օգնելու: (Ձեռքը պարզելով): Բարեւ Պաւլուշա, բարով ես եկել:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Բարե՛ւ, ներեցէք, ժամանակ չունեցայ բարեկելու:

ՊՐԻՍՏԱՒ.—Պարոններ, խնդրեմ շտապէք ի՞նչ անելու էք արէք այլեւ չեմ կարող սպասել:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Հայրիկ, հում եմ պարտական և ի՞նչ քան:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Քօսակին, երկու հազար ոտքի:

(Նինան և Անտօնը առանձնացած խօսում են):

ՊԱԻՆՈՒՇԱ.—Հաստատ պաշտոնը ես:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Այո, մուրհակ եմ տուել:

ՊԱԻՆՈՒՇԱ.—Ուրեմն պէտք է վճարել: (Պրիստաւին): Ասացէք խնդրեմ ի՞նչ-բան է պարտքը:

ՊՐԻՍՏԱԻ.—Դուք Յարութիւն Գասպարովի որդի՞ն էք:

ՊԱԻՆՈՒՇԱ.—Այո:

ՊՐԻՍՏԱԻ.—Երկու հազար ոտքի:

ՊԱԻՆՈՒՇԱ.—(Դրպանից հանում է դրամը) Խնդրեմ ստացէք և տուէք կատարողական թերթը:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Հոգեմէս, իմ ազատիչ հրեշտակ:

(Պրիստաւ առնում է դրամը, թղթի վրայ գրում և յանձնում Յարութիւնին):

ՊՐԻՍՏԱԻ.—Վերջապէս ազատուեցինք:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ներեցէք, որ Ձեզ այսքան անհանգստացրինք:

ՊՐԻՍՏԱԻ.—Վնաս չունի: Դուք բախտաւոր մարդ էք, որ այս տեսակ դաւակնեք ունէք: Յոսեփիւն պարոններ: (Գնում է):

ՆԻՆԱ.—(Եղբոր վզովն ընկնելով): Պաւլուշա ջան:

ԴԱՐԵԱ.—Մօտ արի, հոգիս, մօտ արի այդ խելօք գլուխդ համբուրեմ, օրտըս հանգստանայ:

ԱՆՏՕՆ.—Սերգէյ Լազրիչ, ինչո՞ւ էք եկել այստեղ, չլինի՞ դործ անիք:

ՍԱՐԳԻՍ.—Եկել էի այդ փողը վճարեմ, որ խայտառակութիւն չլինի, Դուք եկաք, վերջացրիք:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Դէ՛ հեռացիր գնա, մեր արամադրութիւնն էլ մի փչացրուք ու ներկայութեամբ:

ՊԱԻՆՈՒՇԱ.—Հայրիկ, սպասի՛ր դեռ: Հօրեղբայր, երբ ենք մեր հաշիւները մաքրելու, այժմ ես ազատ մարդ եմ և կարող եմ հաշիւ տեսնել:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչ հաշիւ, չլինի թէ Անտօն Իվանիչն է Ձեզ բերել, որ հաշիւ տեսնէք երկուսով:

ԱՆՏՕՆ.—Սերգէյ Լազրիչ, խնդրեմ չափներդ ճանաչէք, թէ չէ վատ կլինի վերջը:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչ, ուզում էք զօռով փող ստանալ ինձանից: Աւելի շուտ ինձ պատուհանից ցած կգցեմ, քան ձեզ մի կողակէ կտամ:

ՊԱԻՆՈՒՇԱ.—Դժբախտաբար Ձեր մահն էլ չի ազատի Ձեզ այդ պարտքից. Ձեր ժառանգներից կառնեմ այդ, լաւ իմացէք:

ԴԱՐԵԱ.—Թող Պաւլուշա ջան, նա փողի համար իւր հոգին էլ կվաճառի, թող գնայ:

ԱՆՏՕՆ.—Սերգէյ Լազրիչ, արածներդ առաջներդ է գալի:

ՍԱՐԳԻՍ.—(Ձայրացած). Այս էլ իմ լաւութեան փոխարէնն է հա՛, ապեւ-բախաներ:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Հեռացիր, հեռացիր շուտով, բաւական է քո լաւութիւնից խօսես, գիտենք ո՞վ ես:

ՊԱԻՆՈՒՇԱ.—Ո՛չ, նա պարտաւոր է մեր հաշիւը մաքրել, հօրս արիւն քըլ-տինքը չեմ թողնի, որ մարսի:

ՆԻՆԱ.—Պաւլուշա ջան, թող, բաւական է, մի այլ անգամ, այժմ ժամա-նակ չէ:

(Սարգիսը գոյնը ձգած, կասկածելով դուրս է գնում):

ՍԱՐԳԻՍ.—Լաւ, կհեռանամ, տեսնենք ի՞նչ էք անելու:

ՊԱԻՆՈՒՇԱ.—Գնացէք, բայց իմ ձեռքից չէք ազատուի, որ երկինք էլ թըռ-չէք:

ՏԵՍԻՂ 7.

Առաջինները առանց Սարգսի:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Է՛ դաւակա մի վրդովուի՛ր, հապա ասան տեսնեմ ի՞նչպէս ես, դործդ ի՞նչպէս է:

ՊԱԻՆՈՒՇԱ.—Շատ լաւ, հայրիկ, դո՛հ եմ, բայց ես նախ քո պատիւը պէտք է պաշտպանեմ, անա իմ գլխաւոր դործը:

ԴԱՐԵԱ.—Ապրիս, որդիս, մեր միակ մխիթարութիւնը դու ես:

ՊԱԻՆՈՒՇԱ.—Անտօն Իվանիչ, Դուք ռեալից էք գալի. հայրիկ ես սրան կայարանում պատահեցի, ասաց մի շատ ուրախ լուր ունի Նի-նայի համար, իմացա՛ք:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ո՛չ, չենք իմացել, ի՞նչ կայ Անտօն Իվանիչ, ինչո՞ւ չէք ա-սում:

ԱՆՏՕՆ.—Ինձանով իսկի հետաքրքրւում էք, որ բան ասեմ:

ԴԱՐԵԱ.—Դէ՛ լաւ, լաւ, ասացէք խնդրեմ ի՞նչ կայ:

ԱՆՏՕՆ.—Գնացել էի Էջմիածին և երկար տանջուելուց, սրան նրան տես-նելուց յետոյ Սինօզից ստացայ Նինայի ազատութեան թուղթը:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Միթէ, այդ ի՞նչպէս: Տեսա՞ր Դարեա, որ դարձեալ մեր Ան-տօնը մեզ չի մոռանում:

ՊԱԻՆՈՒՇԱ.—Նինա ջան, դէ՛ շնորհաւորում եմ, այժմ դու էլ ինձ նման ա-զատ ես: Շնորհակալութիւն Անտօն Իվանիչ:

ԴԱՐԵԱ.—Մի օրուայ մէջ այսքան ուրախութիւն, Տէր Աստուած, կամ ամեն բան առնում ես մի անգամից կամ եթէ տալիս ես միանգամից ես տալի:

ԱՆՏՕՆ.—Արտեմ Լազրիչ, ներողութիւն իթէ մի բան էլ ասելու լինեմ, կարծում եմ դէմ չէք լինի և մեր ուրախութիւնն էլ աւելի կմեծացնէք:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ի՞նչ կայ, Անտօն Իվանիչ, ասան:

ԱՆՏՕՆ.—(Բռնելով Նինայի ձեռքը): Դուք Ձեր օրհնութիւնը տուէք մեզ և թոյլ տուէք, որ ես էլ Ձեր տան անդամը դառնամ, օրհնեցէք մեզ:

ԴԱՐԵԱ.—Տէր Աստուած, Տէր Աստուած այս թնչեր են լինում: (Հեկեկում է):

ՆԻՆԱ.—Հայրիկ, օրհնէր մեզ:

ՊԱԻԼՈՒՇԱ.—Կեցցէ, կեցցէ, հայրիկ, մայրիկ, ինչու էք լուռ, շնորհաւորեցէք, ես շատ ուրախ եմ: (Համբուրում է Անտօնի եւ քրոջ հետ):

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—(Չեղբերը բարձրացնելով): Աստուած օրհնէ ձեզ, որդիքս: (Արտասում է):

(Վարագոյր)

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Բեմը առաջին գործողութեան բեմն է:

ՏԵՍԻԼ 1.

Մարիամ եւ ապա Սարգիս:

ՄԱՐԻԱՄ.—(Շատած է սեղանի մօտ): Ասում են Սարգիսը խելօք է, Սարգիսն իմաստուն է, գործ կատարող, հար է, չի երևում: Ահագին փողեր ծախսեց, փաստաբան վարձեց, բայց վերջն էլի տարուեց: Մի կողմից խայտառակուհիները ամբողջ հասարակութեան առաջ, միւս կողմից երկու հարիւր քսան հազար ուրբի պիտի տանք այն անպիտաններին: Դէ Մարիա Պետրոֆնա, արի ու գիմացիր այս տեսակ խայտառակութեանը: (Մտնում է Սարգիսը):

ՍԱՐԳԻՍ.—Մարիամ, ինձ վատ եմ զգում, ուզում եմ գնալ բժշկի մօտ:

ՄԱՐԻԱՄ.—Ուզում ես գնա, առաջդ հիվ է բռնում:

ՍԱՐԳԻՍ.—Գիտեմ, բայց թնչ խորհուրդ կտաս:

ՄԱՐԻԱՄ.—Խորհուրդ անելու ժամանակ չարեցիր, միժմ ես խորհուրդ հարցնում:

ՍԱՐԳԻՍ.—Այդ երբ էր, որ քեզից խորհուրդ չհարցրի:

ՄԱՐԻԱՄ.—Եղբորդ Օդեսսա նամակ գրելիս, հաւատարմագիր տալիս: Քեզ հիվ էր ասում, որ եղբորդ հաւատարմագիր տաս, քո փոխարէն մուրհակ ստորագրելու և հաւատարմագրի մէջ նրան քո եղբայրն ու գործի ընկերն անուանես: Դէ՛ գնա, այժմ այդ նրանց ձեռքին փաստ է եղել և քեզ այդպէս նեղն են ձգել:

ՍԱՐԳԻՍ.—Դէ, բաւական է, դու էլ քեզ շատ խելօք մի երեւակայիր, ես թնչ իմանայի, թէ տասն և հինգ տարուց յետոյ այսպէս բան կլինի: Այն ժամանակ հաւատարմագիր տալու միտքն ուրիշ էր, ուզում էի ինձ սնանկ հրատարակել: Վերջապէս գլխաւորը այստեղ հաւատարմագիրը չէր, այլ վկաների ցոյցմունքները:

ՄԱՐԻԱՄ.—Երանի այն ժամանակ սնանկանայինք, քան այս տեսակ խայտառակութեան հասնէինք:

ՏԵՍԻՒ 2.

Սարգիս, Մարիամ, Սմբատ եւ Մաշօ:

ՄՄԲԱՏ.—(Ներս մտնելուց եւ քարեկելուց յետոյ): Գործը վատ կերպարանք ստացաւ:

ՄԱՐԻԱՄ.—Սրանից էլ վատ ոչինչ չէր կարող լինել:

ՄՄԲԱՏ.—Ի՞նչ պէտք է անել այդ անիրաւենի հետ:

ՄԱՐԻԱՄ.—Այդ էլ խելօք անելովիցդ հարցրու:

ՄԱՐԳԻՍ.—Բաւական է, ի՞նչ ես ետխիցս կպել, բայց չես թողնում:

ՄՄԲԱՏ.—Իսկապէս Ձեր և Ձեր փաստաբանի արածն անմոռութիւն էր, ինչո՞ւ Ձեր կողմից էլ վկաներ ցոյց չտուիք:

ՄԱՐԳԻՍ.—Ի՞նչ վկաներ ցոյց տայինք, ո՞վ վկայութիւն կտար, որ նա իմ եղբայրը չէ, ինձ հետ քսան տարի չի աշխատել:

ՄԱՐԻԱՄ.—Ի՞նչ, դեռ ես դժեռ եմ մեզ վրայ զայրանում:

ՄԱՐԳԻՍ.—Ի սէր Աստուծոյ դու լսիր, ինձ հանգիստ թող:

ՄԱՇՕ.—(Դուռը բանալով): Տիկին, սուրճը պատրաստ է:

ՄԱՐԻԱՄ.—Սմբատ, գնանք սուրճ խմելու, ինչ լինելու է կլինի:

ՏԵՍԻՒ 3.

Սարգիս (միայնակ),

ՄԱՐԳԻՍ.—Այս արդէն անկարելի է, ուղղակի խելագարւում եմ, ես այդ մտքի հետ չեմ կարող հաշտուել: Միանգամից երկու հարիւր քսան հազար ուրբի տան, երկու... հարիւր... քսան... հազար ուրբի... Այդ անկարելի է, այդ նշանակում է սնանկանալ, մոլորացկան դառնալ, այս վերջին տարիները շարունակ ծախսեր և ոչ մի կողմէ վատտակ: Եօթնասուն հազար ուրբի տուեցի այս Ձեր լախովին, իմ շնորհիւ մարդ դարձաւ և այժմ էլ ինձ չի հաւանում: (Մի քիչ մտածելուց յետոյ): Մէկը թող հապա ինձ ասի ա՛յ յիմար հում համար ես աշխատում, քեզ այդքան տանջում, չարչարում, աղջիկս ինձ խայտառակեց, տղաս հեռացած, կինս էլ այսպէս: Բայց ի՞նչ, տանջուելով չեմ ազատուել, երկու հարիւր հազարը պէտք է տալ, տալ և սնանկանալ, ո՛չ, աւելի լաւ է վերջանալ, կորչել, քան սնանկանալ: Բաւական է տանջանքս: (Մօտենում է գրասեղանին, ատրճանակը հանում, փամփուշտները որոնում է եւ կամաց ուզում է տեղադրել):

ՏԵՍԻՒ 4.

Սարգիս, Մարիամ, Սմբատ եւ Մաշօ:

ՄԱՐԻԱՄ.—(Սմբատի հետ խօսելով ներս է մտնում): Այս անտանելի է ախրժակ բոլորովին չունեմ:

ՄՄԲԱՏ.—(Տեսնելով Սարգիսին): Մայրիկ, այն ի՞նչ է անում, տես: (Վազում է դէպի Սարգիսը):

ՄԱՐԻԱՄ.—Վա՛յ, օգնեցէք, մի՞ թողէք, ի սէր Աստուծոյ: (Թուլանում ընկնում է):

(Սմբատը ընկնում է Սարգիսի ձեռքից եւ աշխատում է ատրճանակն առնել):

ՄԱՐԳԻՍ.—Ի՞նչ ես անում, հեռացիր, թող քեզ ասում եմ:

ՄՄԲԱՏ.—Սերգէյ Լադրիչ, ի սէր Աստուծոյ, ի՞նչ էք անում, ի՞նչ բանի էք:

ՄԱՐԻԱՄ.—(Թոյլ ձայնով): Ջուր, ջուր...:

ՄՄԲԱՏ.—Մաշօ, Մաշօ շուտ ջուր հասցրու: (Սարգիսին): Այդ ի՞նչ էք անում, ինչո՞ւ էք յուսահատում:

ՄԱՐԳԻՍ.—Այդ իմ վերջին անելիքն է, ուրիշ ելք չկայ այս խայտառակութիւնից ազատելու համար:

(Մաշօն ջուր է բերում, տալիս է Մարիամին մի փոքր կանգնում է):

ՄԱՐԳԻՍ.—Ի՞նչի ես կանգնել. հեռացիր աչքիցս, այժմ բոլորդ էլ աչքիս զրոյններ էք: (Մաշօն գնում է): (Սմբատին): Ձեզ որ սատանան բերեց այստեղ:

ՄԱՐԻԱՄ.—Սերգէյ, այդ ի՞նչ ես անում, Աստուած իմ, դու խելքդ կորցրել ես...:

ՄՄԲԱՏ.—Ի՞նչ վատ բան արի որ:

ՄԱՐԳԻՍ.—Լաւ, էլ ոչինչ չարիր:

ՄԱՐԻԱՄ.—Սերգէյ, դու բոլորովին փոխուել ես:

ՄԱՐԳԻՍ.—Ով իմ տեղը լինէր, աւելի վատ կլինէր:

ՄՄԲԱՏ.—Սերգէյ Լադրիչ, մի՞թէ կարելի է այդքան յուսահատուել:

ՄԱՐԳԻՍ.—Ասա խնդրեմ, հիմա, ի՞նչ կարող եմ յուսալ:

ՄԱՐԻԱՄ.—Մտածում էիր արդեօք, թէ բեղանից յետոյ մեր դրութիւնն ի՞նչ է լինելու:

ՄԱՐԳԻՍ.—Այդ մասին թող նա մտածի, ով կենդանի է մնում:

ՄՄԲԱՏ.—Ձէ որ Դուք զաւակներ, կին ունէք, հում խնամքին էք թողնում այդ, նրանց դրութիւնը ապահովել էք:

ՄԱՐԳԻՍ.—Ի՞նչ, ուզում ես ասել կտակ անէի հա՛: Ինչո՞ւ համար, ումն ինչ տալու եմ կամ դրքերում գրուած է կամ մուրհակ եմ տուել: Մի վախենաք, բարեկամներս, ամեն մարդ իւր բաժինը կստանայ:

ՄԱՐԻԱՄ.—Սերգէյ, այդպէս մի՞ խօսիր, ես չեմ կարող լսել:

ՄՄԲԱՏ.—Ես այդ չեմ ուզում ասել, այլ ընդհանրապէս եմ խօսում: Վերջա-

պէս գուցէ կան և այնպիսիները որոնք մուրհակ չունեն, այլ
այնպէս լոկ խօսքով են Ձեզ հաւատացել: Ձէ՞ որ...:

ՍԱՐԳԻՍ.—Այդպիսիները չկան, ես ամեն բան լաւ գիտեմ:

ՄԲԲԱՏ.—Կարծեմ կան, լաւ չէք յիշում երեւի, բայց այդ ոչինչ, այդ թող-
նենք:

ՍԱՐԳԻՍ.—Հա, հասկացայ... քեզ խօստացած օժտից մնացած գումարի մա-
սին հոս ակնարկում...: Իրաւունք ունես, պարոն, քո տուած ապ-
րանքն ամենից լաւն է, քո կրած նեղութիւնը ամենից անդինն
է, քո մասին պէտք է մտածէի ամենից առաջ, խնդրեմ ներեցէք,
որ մոռացիլ եմ:

ՄԲԲԱՏ.—Ես բան չեմ ասում, բայց հէնց այնպէս:

ՄԱՐԻԱՄ.—Սմբատ դժւ ինչ ժամանակ գտար այդ բաների մասին խօսի-
լու, ամօթ չէ՞:

ՍԱՐԳԻՍ.—Ահա իմ մօտիկ բարեկամները ինչպիսի մարդիկ են, միայն փող,
փող, իսկ մարդու իրեն մասին մտածող չկայ: Ի՞նչ արած, լաւ
փեսայ ունեմ: Սիմայի ասածն արդէն կատարւում է:

ՄԲԲԱՏ.—Այդ էլ իմ արած լաւութեան փոխարէն էք հատուցանում:

ՍԱՐԳԻՍ.—Քեզանից լաւութիւն խնդրող չկալ, հեռացիր այստեղից, թէ չէ
վատ կլինի բանը:

ՏԵՍԻՒ 5.

Առաջիններն եւ Շուրա:

ՇՈՒՐԱ.—(Ներս մտնելուց յետոյ լուրթին է տիրում մի բռնակ): Այս ի՞նչ
խաբար է, ի՞նչ է պատահել: (Նայելով մօրը, հօրը): Մայրիկ,
այդ ի՞նչ է, գոյնդ թուրբիլ ես, հայրիկ, ի՞նչ կայ, ի՞նչ է եղել,
ի՞նչու լռեցիք:

ՄԱՐԻԱՄ.—Ոչինչ, ոչինչ, նստիր, հայրիկը...:

ՇՈՒՐԱ.—Ի՞նչ, հայրիկն ի՞նչ է արել: (Դառնալով Սմբատին): Դարձեալ
փողի հաշիւն ես սկսել հա, չի տալի:

ՄԲԲԱՏ.—Ո՛չ, դեռ հալա զայրանում էլ է, տանից է վռնդում, ահա քո
ծնողդ ո՞վ է:

ՍԱՐԳԻՍ.—Կորիւր, դեռ խօսում էլ ես:

ՄԲԲԱՏ.—Իհարկ է, Ձեր պատուական աղջկանը գլխիս փաթաթելուց յետոյ,
բաւական չէ խօսքներդ չէք կատարում, այժմ էլ այդպէս էք
վարւում: Ամբողջ քաղաքն իմ մասին է խօսում, ուր գնում եմ
երեսոյս եմ տալի, իսկ ես պէտք է համբերեմ:

ՇՈՒՐԱ.—Անամօթ, դեռ խօսում էլ ես: Դու ինձ հետ չես պսակուել, այլ
իմ օժիտի, հազարներն են աչքերդ փակել: Ա՛խ, հայրիկ, հայ-
րիկ, աւելի լաւ չէր թողնէիր տանը մեռնէի, քան այսպիսի ա-
նհրեանի ձեռքն ընկնէի: Ամեն օր տանջում է, մի բան է պատա-

հում թէ չէ, իսկոյն յիշում է թէ դու նա չես, որ սրա, նրա
հետ...: (Լալիս է):

ՍԱՐԳԻՍ.—Սաւ, սաւ, դու էլ մի բարի պտուղ չես, անունս խայտառակե-
ցիր բաւական չէ, ուզում ես տանս էլ մնալ:

ՄԱՐԻԱՄ.—Հանգիստ կաց, Շուրա, հայրիկիդ գործերը վատ են, մի զայ-
րացրու նրան:

ՇՈՒՐԱ.—Մայրիկ, մայրիկ... Դուք չէիք, որ ինձ այսօրը ձգեցիք, մի՞թէ
մեղաւորն ես եմ: Փոքր ժամանակս ինձ միայն լաւ զգեստներ
հագցնել գիտէիր, այստեղ, այնտեղ տանել, երկկոյթ, թատրոն.
սրա, նրա հետ ծանօթացնել իսկ ես... յիմար, յիմար... Այո, դու
ես պատասխանատու իմ այս տանջանքների համար, դու, որ եր-
բէք ուշք չդարձրիր վրաս, թոյլ տուիր ամեն բան անելու...:
(Հեկեկում է):

ՍԱՐԳԻՍ.—Տեսնում ես, իմ պատուական տիկին, դէ այժմ պատասխանը
տո՛ւր:

ՄԱՐԻԱՄ.—Դու էլ մեղաւորն ես, դժւ ինչու չէիր կրթում, ասենք Շուրան
այսպէս է, հապա քո տղան, Սիման ո՛ւր է, ի՞նչ եղաւ, քեզ թո-
ղած, այստեղ այնտեղ է թափառում, շարունակ փող է պահան-
ջում, իսկ քեզ մի կոպէկի օգուտ տուէ՞լ է:

ՍԱՐԳԻՍ.—Լռի՛ր, նրան էլ ես դու փչացրել: Դու չես նրան ծածուկ փող
տուել, պարտքերը ծածկել, այժմ էլ դեռ ինձ վրա՞յ ես խօսում:

ՄԲԲԱՏ.—Տեսնում էք, ո՞վ է մեղաւորը, էլ ի՞նչու էք ինձ մեղադրում:

ՍԱՐԳԻՍ.—Գնա, գնա այստեղից անմիջապէս, իրաւունք չունենաս մեր ըն-
տանեկան գործերում խառնուել:

ՄԲԲԱՏ.—Հապա փողը, ինչո՞ւ չէք վճարում, խօսք էք տուել պարտաւոր էք
կատարել: Ես էլ Կուզիկենց Կիկօն չեմ, գիտէ՞ք:

ՄԱՐԻԱՄ.—Դժւ ինչ ես այս նեղ ժամանակը կոյել մեզանից, հանգիստ թող
մեզ:

ՍԱՐԳԻՍ.—Հը՛, չլինի թէ դու էլ մի ուրիշ դատ սկսես իմ դէմ, գնա, ինչ
ուզում ես արա՛:

ՄԲԲԱՏ.—Ես դատ չեմ սկսի, բայց քո տան խայտառակութիւնը կբանամ:
Իզուր չէ որ քեզ Կայէն են ասում, հարազատ աղջկանդ էլ չես
խնայում: Տեսնենք վերջն ո՞վ է փոշմանելու:

ՇՈՒՐԱ.—Հայրիկ, այս ինչ օրի հասայ ես, նա կգնայ ամեն տեղ կպատմի
այն մասին... մայրիկ, գոնէ դու օգնիր, ո՛ւր գնամ... ի՞նչ անեմ:

ՍԱՐԳԻՍ.—Շատ մի խօսիր, ես ձեզ հետ գործ չունեմ, փողերը ձեռքիցս
գնալուց յետոյ թող ինչ ուզում է լինի:

ՄԲԲԱՏ.—(Շուրային): Ահա քո ծնողը, ահա քո հայրը: (Սարգսին): Բայց
Դուք լաւ իմացէք, որ ես իմ խօսքի տէրն եմ, կամ երեսուն հա-
զարը պիտի տաք կամ Ձեր արած ստորութիւնները մի առ մի
կպատմեմ: Յիշի՛ր կհաւասարացնեմ Ձեր անունն էլ, պատիւն էլ՝

ՍԱՐԳԻՍ.—Գնա, ինչ ուզում ես արա՛, միայն հեռացիր այստեղից:

ՍՄԲԱՏ.—(Շուրային): Լսիր, այսուհետև իմ տունը ոտք չկոխես մինչև հօրդ խօստումը չկատարուի: (Գնում է):

ՄԱՐԻԱՄ.—Այ մարդ, ինչո՞ւ ես այդպէս կոպիտ խօսում, չգիտես որ նա այժմ մեր փողով մարդ դառնալուց յետոյ մեծամտացեւ է, ի՞նչ ասես կանի:

ՍԱՐԳԻՍ.—Բաւական է, բաւական այդքան խօսես, թող ինչ լինելու է, լինի:

ՇՈՒՐԱ.—Մայրիկ... այժմ ես հարգում, ի՞նչ անեմ, ի՞նչ է լինելու իմ գրութիւնը: (Մի փոքր հանգստանալուց յետոյ): Հայրիկ, մի՞թէ քո հարազատ զաւակիդ էլ չես խղճում, մի՞թէ քո մէջ ծնողական գութ չկայ, ինչո՞ւ այսպէս ես վարւում ինձ հետ, խնայիր ինձ: (Լալիս է, Հօր ատաջ չորում):

ՍԱՐԳԻՍ.—Հեռացիր, բաւական է, դրա ժամանակը չէ յետոյ, յետոյ, այդ մասին ուղիղ են ասում, որ սե եզը վայր ընկնի, դանակաւորները կշատանան:

ՏԵՍԻԼ 6.

Առաջինները եւ Մաշօ:

ՄԱՇՕ.—(Շտապ ներս մտնելով): Տիկին, տիկին, պարոնը... մեր Սիման եկաւ նոր:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչ ես ասում, չեմ հասկանում:

ՄԱՐԻԱՄ.—Ո՞վ, ի՞նչ եկաւ:

ՄԱՇՕ.—Սիման եկաւ, Ձեր որդին:

ՍԱՐԳԻՍ.—Սիման, ինչո՞ւ չէ ներս գալի հապա:

ՇՈՒՐԱ.—Սիման, հար է, հար է:

(Շուրա, Մարիամ, Մաշօ գնում են դուրս, մի փոքր յետոյ բարձրաձայն խօսելով ներս են մտնում Սիմայի հետ):

ՏԵՍԻԼ 7.

Առաջինները եւ Սիմա:

ՍԻՄԱ.—Բարե հայրիկ, բարե: Ձեր սպասում երևի, տեսնում ես դարձեալ եկայ քեզ հետ հաշտուելու:

ՍԱՐԳԻՍ.—Բարե որդի: (Համբուրում է): Ի՞նչ կայ, ի՞նչպէս եղաւ, որ եկար:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչպէս ես որդի, ի՞նչ գործի ես, առողջութիւնդ ի՞նչպէս է:

ՇՈՒՐԱ.—Սիմա ջան, գիտե՞ս ի՞նչքան եմ կարօտել քեզ, ի՞նչքան եմ լաց եղել, մենակ եմ մնացել, ոչ ոք ինձ չի խղճում:

ՍԻՄԱ.—Ինչո՞ւ քեզ ի՞նչ է եղել, արդէն ամուսնացել ես, տուն տեղ ես դարձել: Իսկ ես... էհ, շատ տեղեր եղայ, շատ մարդկանց տեսայ եւ այժմ նոր, նոր խելքի եմ գալի, նոր ուզում եմ ես էլ մարդ դառնալ, կեանք սկսել:

ՄԱՐԻԱՄ.—Սիմա ջան, յոգնած կլինես, ճանապարհից ես գալի, գնանք լուացուիր, մի փոքր հանգստացիր:

ՍԻՄԱ.—Ոչ մայրիկ, ես հանգիստ եմ, երէկ եմ եկել մեր բաղաքը, իջել եմ հիւրանոցում, լաւ հանգստացել, այժմ գործով եկայ, հայրիկի մօտ, հաշտուելու եւ այնուհետեւ մեր գործը շարունակելու:

ՍԱՐԳԻՍ.—Հաշտուելու բան չունեմ ես, քեզանից չեմ խռովել. դու ես ինքդ հեռացել, այժմ էլ եկել ես, բարով ես եկել, բայց գործը... այժմ արդէն ուշ է:

ՍԻՄԱ.—Ինչո՞ւ է ուշ, կարծում ես չեմ կարող գործ կատարել, ոչ հայրիկ, այժմ ես շատ բան եմ տեսել, շատ բան եմ սովորել: Բայց նախ քան այդ մասին խօսենք խնդրեմ կարգադրիր կասսայից ինձ փող տան, հիւրանոցում մարդիկ կան սպասում են, որ պարտքերս տամ: Այնուհետ տուն կգամ եւ այդ մասին երկւոր կխօսենք:

ՇՈՒՐԱ.—Դէ շուտ արն, գնա իրերդ բեր, ի՞նչու ես սպասում, ես քեզ այնքան բան ունիմ պատմելու:

ՄԱՐԻԱՄ.—Ուզում ես ծառային ուղարկեմ իրերդ բերի, մինչև քո գործդ կվերջացնես:

ՍԻՄԱ.—Ո՛չ, ոչ, ես ինքս պէտք է գնամ, այս բոլէիս, ժամադիր եմ եղել, մարդկանց խօսք եմ տուել, ի՞նչպէս կարելի է: (Սարգսին): Հայրիկ, ի՞նչ կասես, հեռախօսով կխօսե՞ս, թէ ծառային թուղթ կտաս, որ միասին գնանք: Հայրիկ, ինչո՞ւ լռում ես, չլինի թէ իմ գալը քեզ հաճելի չէ:

ՄԱՐԻԱՄ.—Ի՞նչեր ես խօսում Սիմա, քո հօրդ տունն է, ո՞վ կարող է քեզ մի բան ասել, մի փոքր սպասիր դեռ:

ՇՈՒՐԱ.—Ոչինչ, ոչինչ, Սիմա ջան, հայրիկը մի փոքր վրդովւած է, հանգստացիր, յետոյ այդ մասին կխօսես: (Սարգսը անհանգիստ ման է գալի սենեակում եւ ապա կանգ առնում):

ՍԱՐԳԻՍ.—(Խռժուած): Տեսնո՞ւ, տիկին, այս էլ քո որդին: Ի հարկ է, լաւ լինէր վիճակդ չէիր դայ, հէնց որ փողի կարիք ունենաս, նոր կյիջես ինձ:

ՇՈՒՐԱ.—Հայրիկ, մի՞թէ նոր վերադարձած որդու հետ այդպէս կխօսեն:

ՍԱՐԳԻՍ.—Լսիր, անպիտան, դու էլ նրա նման ես: Դուք չէիք, որ ինձ այսօրը ձգեցիք, ձեզ համար հազար տեսակ նեղութիւն եմ կրել, վերջն էլ այս խայտառակութեան մէջն ընկնել: Փող, փող: Այժմ այլեւս փող չկայ, ոչ մի կողէկ չունեմ, գնա, ինչ ուզում ես արա:

ՍԻՄԱ.—Այդպէս հա՛, լա՛ւ, հապա ա՛յն հազարներն, ո՛ւմ համար ես դիմել, ի՞նչ հետք գերեզմանն ես տանելու:

ՄԱՐԻԱՄ.—Այդպէս մի՛ խօսիր, որդի, դու չգիտես միթէ, որ Պաւլուշան արդէն փաստաբան է դարձել, այսօր նրանց սկսած դատը հօրդ դէմ վերջացաւ և այժմ իրենց բաժինը պահանջում են:

ՍԻՄԱ.—Ի՞նչ, ի՞նչ դատ, ի՞նչ Պաւլուշա, չեմ հասկանում:

ՄԱՐԳԻՍ.—Իհարկէ չեմ հասկանալ: Քո հօրեղբոր որդին, Պաւլուշան, այժմ մարդ է դարձել և ոչ թէ քեզ նման դատարկաշրջիկ: Կարող ես, պաշտպանիր հօրդ էլ, քեզ էլ, թէ չէ մեր ունեցածը ձեռքից գնում է:

ՍԻՄԱ.—Ահա թէ ինչ: Նո՛ր էք խելքի դալի հա՛: Հապա ա՛յն ժամանակ, որ դու նրանց տանից դուրս վաճակեցիր, նրանց մասը չտուիր լա՛ւ էր: Ինչո՞ւ ինձ չէիր լսում, ես չէի՞ ասում հայրիկ, խղճի դէմ է, մի՛ արա, վերջը կարող ես տուժել: Տեսնո՞ւմ ես, այժմ քո արածներդ են առաջդ գալի, անարդարութեան դէմ եմ եղել և կմնամ էլ:

ՄԱՐԻԱՄ.—Սիմա ջան, ինչո՞ւ ես այդպէս խօսում, լաւ չէ, որդի, հայրդ առանց այն էլ նեղ դրութեան մէջ է:

ՇՈՒՐԱ.—Սիմա, խղճս ինձ, այդպէս մի խօսիր, հայրիկը քեզ վրայ էլ կը զայրանայ և դու եթէ գնաս, ի՞նչ կլինի իմ դրութիւնը, օ՛ եթէ դու իմանայիր:

ՍԻՄԱ.—Ի՞նչ է եղել քեզ, չեմ հասկանում, պարզ խօսիր:

ՇՈՒՐԱ.—Հայրիկն իմ օժիտի մի մասը չէ տալի, դրա համար էլ ամուսինս տանից վաճակում է, ո՛ւր գնամ այժմ... գոնէ դու պաշտպանիր:

ՍԻՄԱ.—(Հօրը): Եւ դու քեզ ծնող ես հաշուում այո՞, այս է քո գաւազներին ցոյց տուածդ խնամքը, միթէ իրաւունք չունիմ ասելու, որ քեզ համար փողը ամեն բան է, փողն է քո Աստուածն էլ, քո խիղճն էլ: Անգուժ ես, այո՛ անգուժ:

ՄԱՐԳԻՍ.—Ի՞նչ ես մեծ մեծ խօսում, անգիր արած նախադասութիւններ կրկնում: Իմ փողով մարդ ես դարձել, բաւական չէ, դեռ խօսում էլ ես: Մի կոպէկ աշխատել ես կեանքումդ, միշտ իմ հաշին ես ապրում և դեռ ինձ էլ չես հաւանում: Ձեռ ուղում—համեցէք ճանապարհը բաց է, գնա՛ ինքդ աւելի լաւ աշխատիր:

ՄԱՐԻԱՄ.—Սերգէյ, խելքդ կորցրել ես ի՞նչ է, այդ ինչեր ես խօսում: (Սիմային): Մի նեղանար որդի, մի նեղանար, եկ, գնանք իմ սեհեակը, ես քեզ ուղածդ կտամ:

ՄԱՐԳԻՍ.—Ի՞նչ ես գլխիս տէր դարձել, դու ով ես, որ կարգադրութիւններ ես անում այստեղ: Եթէ տղամարդ է թող գնա՛ իւր գլխի ճարը տեսնի: Ես դրան կոպէկ տուողը չեմ:

ՍԻՄԱ.—Այո՛, կերթամ հասարակ բաները անգամ կլինեմ, միայն արդար

վաստակով կապրեմ, այսուհետեւ մեր մէջ ամեն ինչ վերջացած է: (Ուղում է գնալ):

ՇՈՒՐԱ.—Սիմա, ի՞նչ ես անում ի՛նչքան Աստուծոյ, ես կխելագարուեմ...

ՄԱՐԳԻՍ.—Գնա՛, դարձեալ կգաս, նեղն ընկնես, ինձ նորից կյիշես:

ՄԱՐԻԱՄ.—Սիմա, մեղ մենակ մի թող, մեր տունը մի քանդիր, խելքի եկ: Տէր Աստուած այս ի՞նչ դժոխք է մեր տունը:

ՍԻՄԱ.—Ես այստեղ յանցանք չունեմ, թող լինի, ինչ որ լինելու է, իսկ ես, դարձեալ պիտի հեռանամ այս տանից, որովհետեւ անէծք կայ այստեղ, անմեղների անէծք: (Շտապ գնում է, Շուրան, Մարիամը ետեւից գնում են եւ կանչում, Սիմա՛, Սիմա՛, սպասիր, ո՞ւր ես գնում):

ՏԵՍԻԼ 8.

Սարգիս եւ ապա Մաշօ:

ՄԱՐԳԻՍ.—Այսպէս, դարձեալ ես ֆաթի միայնակ, բոլորն էլ թողին, փախան:

(Երբս է մտնում Մաշօն):

ՄԱՇՕ.—Սերգէյ Լազրիչ, երկու պարոն ուղում են Ձեզ տեսնել:

ՄԱՐԳԻՍ.—Ո՞վքնր են:

ՄԱՇՕ.—Մէկը անունը լաւ չեմ յիշում, իսկ միւսը մեր Պաւլուշան է:

ՄԱՐԳԻՍ.—Ո՞վ:

ՄԱՇՕ.—Արտեմ Լազրիչի որդին, ի՞նչ սիրուն տղայ է դարձել:

ՄԱՐԳԻՍ.—Նա ինչո՞ւ պէտք է ինձ մօտ գայ, Մաշօ, գուցէ սխալւում ես:

ՄԱՇՕ.—Ո՛չ, նա է, աչքովս տեսայ:

ՄԱՐԳԻՍ.—Հրաւիրիր ներս: (Արճաճակը պահում է): Այո՛, նորից սկսել գործը: Այսպէս է աշխարհի իմաստութիւնը, պէտք է հաշտուել պայմանների հետ, պէտք է յարմարուել, այսպէս է, որ այս հարստութեան տէրն եմ դարձել և այսպէս էլ պիտի աշխատեմ պահել, վաճառականութեան մէջ ամենից լաւ ճանապարհն այս է:

ՏԵՍԻԼ 8.

Սարգիս եւ Մարիամ:

ՄԱՐԻԱՄ.—Գնաց, ի՞նչ անեմ այժմ, միւսն էլ ընկել է մահճակալի վրայ լալիս է, այս ի՞նչ սուգ եկաւ մեր գլխին:

ՄԱՐԳԻՍ.—Բաւական է, նրանց մասին խօսելու ժամանակը չէ, այստեղ մարդիկ են գալու, կարգին պահիր քեզ:

ՄԱՐԻԱՄ.—Ո՞վքեր են, ի՞նչ են ուզում քեզանից:

ՍԱՐԳԻՍ.—Սպասիր, կտեսնես ամեն բան:

ՏԵՍԻԼ 10.

Սարգիս, Մարիամ, Անտոն եւ Պաւլուշա:

(Անտոն եւ Պաւլուշա ներս են մտնում եւ բարեւում):

ԱՆՏՕՆ.—Սերգէյ Լազրիչ, երեւի զարմանում էք, որ Ձեզ մօտ ենք եկել, թէև անյարմար բան է, բայց գործ է, պատահում է:

ՍԱՐԳԻՍ.—Վնաս չունի, խնդրեմ, համեցէք, նստեցէք:

ՄԱՐԻԱՄ.—Ձեզպէս անամօթների համար ի՞նչ կայ որ: Երէկ տասը կողմից թափուել էիք Սարգսի վրայ, պատառ պատառ էիք անում, իսկ այսօր եկել էք նրա տունը:

ՍԱՐԳԻՍ.—Մարիամ, դու լաւ է լուս, քո գործը չէ և մի խառնուիր մէջը:

ԱՆՏՕՆ.—Սխալում էք տիկին, մենք ոչ սուտ վկայութիւն ենք տուել և ոչ էլ ուզեցել ենք պատառ, պատառ անել, համբերեցէք ամեն բան կիմանաք:

ՄԱՐԻԱՄ.—(Նայելով Պաւլուշային): Ամօթ չէ՞ քեզ. այսքան երախտիքից յետոյ դեռ բաւական չէ հօրեղբօրդ դատարան ես տանում, տուն էլ ես գալի: Լաւ, լաւ, երեւի ձեր օրն էլ կգայ:

ՍԱՐԳԻՍ.—Քեզ ասում են լո՛րի. խնդրեմ պարոններ, ի՞նչով կարող եմ Ձեզ ծառայել, ես պատրաստ եմ:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Հօրեղբայր, եկել ենք Ձեզ հետ լուրջ խօսելու: Դատարանից առաջ մտածում էի Ձեզ հետ հաշտուել, բայց այդ անյարմար էր. այն ժամանակ երեւի Դուք ուրիշ բան կմտածէիք: Այժմ երբ դատը յօգուտ մեր վերջացաւ, կարելի է այդ մասին խօսել, կարծում եմ ոչինչ դէմ չէք ունենայ:

ԱՆՏՕՆ.—Խնդրեմ, Մարիա Պետրովնա, լաւ լսէք:

ՍԱՐԳԻՍ.—Խնդրեմ շարունակիր խօսել, ես լսում եմ:

ՄԱՐԻԱՄ.—Ի՞նչ, եկել էք դանակով կտրածը բամբակով փաթաթելու:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Մենք Ձեզ պէս չենք, Մարիա Պետրովնա, խնդրեմ համբերութիւն ունենաք մինչև վերջը լսելու:

Այսպէս ուրեմն, հօրեղբայր, Դուք հակառակ չէ՞ք հաշտութեան:

ՍԱՐԳԻՍ.—Ընդհակառակը, շատ ուրախ եմ, ասացէք տեսնեմ ի՞նչ պայմաններով էք ուզում հաշտուել:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Ինչպէս որ Դուք կամենաք:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչ, ի՞նչպէս թէ ինչպէս որ ես կամենամ, դուցէ դուք չհաշտուէք իմ պայմանների հետ:

ԱՆՏՕՆ.—Վստահ եղէք, որ կհաշտուի. Պաւլուշան, նա Ձեզ այնուամենայնիւ պատում է, որովհետեւ իւր հօրեղբայրն էք:

ՍԱՐԳԻՍ.—Միթէ ճշմարիտ է, դուցէ ինձ վրայ ծիծաղում էք:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Հօրեղբայր, ծիծաղելու բան չունեմ ես, լուրջ եմ խօսում. թող Մարիա Պետրովնան լաւ տեսնի, թէ ի՞նչպէս էր ինքը մեզ հետ վարւում և մենք ի՞նչպէս ենք վարւում:

ՄԱՐԻԱՄ.—Ո՞ւֆ ես այլ ևս չեմ կարող համբերել, անտանելի է (զննում է):

ԱՆՏՕՆ.—Պաւլուշա, թող այդ խօսքերը, դրանք աւելորդ են, գործի մասին խօսիր:

ՍԱՐԳԻՍ.—Այո, գործի մասին խօսենք, բայց ի՞նչ է ձեր պահանջը:

ԱՆՏՕՆ.—Լաւ կլինէր, որ Դուք առաջարկէիք, թէ ի՞նչպէս կուզենաք հաշտուել:

ՍԱՐԳԻՍ.—Եղբայր, իմ առաջարկելու ժամանակը անցել է, այժմ խօսքը Ձերն է, ինչ ասելու էք ասէք:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Հօրեղբայր, գիտեմ, որ, եթէ այն գումարը, որ Ձեզանից այժմ իրաւունք ունինք պահանջելու, առնենք, Ձեր գործը կխանգարուի, Դուք չափազանց կտուժէք. չէք կարող Ձեր գործն այլևս շարունակել, իսկ ես, չէի ուզենայ Ձեզ նեղ վիճակի մէջ ձգել, թէև Դուք մեզ չէիք խնայում առաջները:

ՍԱՐԳԻՍ.—Պաւլուշա ջան, որդի, թող անցածը, մոռացիր այն, մի բան էր եղաւ, աչքս փողը կուրացրել էր, մոռանանք այն, դու ասա՛ ի՞նչ ես պահանջում ինձանից այժմ:

ՊԱՒԼՈՒՇԱ.—Ես համաձայն եմ, որ յիսուն հազար տաք և գործը վերջանայ. կէսը կանխիկ կտաք, կէսն էլ մուրհակ կտակ երեք տարուայ ժամանակով: Համաձայն էք:

ՍԱՐԳԻՍ.—Ի՞նչ, ես հօ չցնորուեցի, (տեղից ելնելով): միթէ այս իրականութիւն է, ճշմարիտ է այս:

ԱՆՏՕՆ.—Այո, այո Սերգէյ Լազրիչ, մի շփոթուի, չարը բարով է յաղթում միայն:

ՍԱՐԳԻՍ.—Համաձայն եմ, համաձայն եմ, (ըննում է Պաւլուշային ու համընդունում) Պաւլուշա ջան, ներիր ինձ, ներիր, որդիս. (ըննելով Անտոնին), Անտոն Իվանիչ, շատ շնորհակալ եմ. ճիշտ են ասում, որ արիւնակիցը, արիւնակցի համար լաց կլինի, օտարին թող ջուրը տանի:

(Վարագոյր).





ՀՀ Ազգային գրադարան



NL0320838

20119

ԴԻՆՆ Է 50 ԿՈՊ.